

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Պարտուողներն ու Յաղթողները

Հայաստանի արտաքին քաղաքականությանը խորհրդարանական ընտրությունները անցան պատմութեամբ: Ինչպես որեւէ ընտրապայքար, այս եւս ունեցաւ իր պարտուողներն ու յաղթողները, որոնց վրայ արժէ ակնարկ մը նետել ու արժեւորել իւրաքանչիւրի ունեցած դրական կամ բացասական դերակատարութիւնը ընդհանուր պատկերին մէջ:

Ռոպերթ Քոչարեան ընտրապայքարի մէջ ստաւ յայտարարելով որ, «կռելու է» եւ թէ ինք «երբեք ընտրութիւն չէ կորսնցուցած»: Ան կը խորհէր որ, «Հոկտեմբեր 27»-ը, «Մարտի 1»-ը, տասնեակ քաղաքական սպանութիւնները, երկրի հարստութեան կողոպուտը, օլիկարխիկ համակարգի ստեղծումը հեռաւոր անցեալ են ու ժողովուրդի յիշողութիւնը կարծ: Օգտագործելով ֆինանսական հսկայ միջոցները, լրատուական լայն ցանցը, հանրային կարծիքի կեղծ հարցախոյզները, գործարարներու կողմէ պարտադրուած ներկայութիւնը ապահովելու եղանակը, Քոչարեան փորձեց ստեղծել մեծ ժողովրդականութիւն վայելող ուժեղ ու անպարտելի ղեկավարի կերպար: Քոչարեանը ու իր ամբողջ շրջապատը հաւատարմով այդ պատրանքին վստահ էին, որ պիտի գան իշխանութեան ու կը մնար ճշդէլ թէ ինչպիսի հաշուեյարդար պիտի տեսնեն Փաշինեանի հետ:

Արդիւնքները եկան հակառակը փաստելու ու անոնց յուսախաբութիւնը եղաւ ամենէն մեծը: Քոչարեան դարձաւ այս ընտրութիւններու գլխաւոր պարտուողի դափնեկիրը:

Պարտուողներու ցանկին վրայ երկրորդ «պատուաբեր» տեղը կը պատկանի Հայաստանեայց եկեղեցւոյ շարք մը բարձրաստիճան հոգեւորականներուն, որոնք այս ընտրութիւններու ամբողջ ընթացքին դրսեւորեցին իրենց կոչումին հակառակ կեցուածք ու դարձան կողմերէն մէկուն կցորդ ու մուսնետիկ: Փոխանակ հոգեւոր սնունդ մատակարարելու իրենց հոտին ու լսելու անոնց ձայնը, անոնք շեղեցան իրենց գլխաւոր առաքելութենէն ու մուտք գործեցին քաղաքականութեան ականապատ դաշտէն ներս:

Աւելի դատապարտելի էր անոնց պահուածքը արդիւնքներու հրապարակումէն ետք, երբ սկսան անձեռք թափել իրենց կամքին հակառակ բուեւարկողներուն գլխուն, վիրաւորական խօսքեր ուղղելով ու սպառնալով՝ հաշուեյարդար տեսնել ժո-

«Հայաստանի Քաղաքացու Համար Այլեւս Անառարկելի Փաստ է, Որ Ինքը Որոշիչ Գործօն է». Փաշինեան

Ընտրութիւնները անցած են ժողովրդավարութեան չափանիշներուն համապատասխան, արձանագրած են միջազգային ու տեղական դիտորդները, ինչպէս նաեւ միջազգային գործընկերները: Հայաստանը նոր չափանիշ սահմանած է, կառավարութեան նիստին յայտարարեց վարչապետի պատշոնակատար Նիկոլ Փաշինեան:

«2018 թուականին, երբ տեղի ունեցան արտահերթ խորհրդարանական ընտրութիւններ, եւ միջազգային հանրութիւնն աննախադէպ բարձր գնահատականների արժանացրեց այդ ընտրութիւնները, այն ժամանակ կար այսպիսի համաթեքսթ՝ ասում էին, որ ընտրութիւնների արդիւնքներն ակնյայտ էին նախապէս բոլորի համար, եւ գործող կառավարութիւնն, այսպէս ասած, ընտրութիւնների արդիւնքները կեղծելու անհրաժեշտութիւն չունէր», - ըսաւ Փաշինեան: «2021 թուականի խորհրդարանական ընտրութիւնների հնարաւոր արդիւնքները կանխատեսելի չէին, եւ բոլորը գիտէին, որ երրորդ Հանրապետութեան պատմութեան թերեւս ամենանկանխատեսելի ընտրութիւններն են անցկացուած: Շատ կարեւոր է, որ մենք արձանագրեցինք մեր քաղաքական կամքը եւ քաղաքական



Նիկոլ Փաշինեան ելոյթ կ'ունենայ Կառավարութեան նիստի ընթացքին

արժեհամակարգը: Ի հարկէ, չարուցուած են քրէական գործեր՝ ընտրակաշառքների, ընտրողների կամքի վրայ ապօրինի ազդեցութիւն գործելու այլ դրսեւորումների վերաբերեալ: Ես համոզուած եմ, որ դրանք պատշաճ քննութիւն կը ստանան: Ուզում եմ հաւատալ, որ Հայաստանի Հանրապետութիւնում ընտրութիւնների արդիւնքների կեղծման էջն իսկապէս անշրջելիօրէն փակուած է»:

«Հայաստանի քաղաքացու համար այլեւս անառարկելի փաստ է, որ ինքը որոշիչ գործօն է Հայաստանում եւ ինքն է որոշում իշխանութեան ճակատագիրը», - կարծում է վարչապետի պաշտօնակատարը, որի ղեկավարած ուժը յաղթեց վերջին ընտրութիւններուն: «Ուրախ եմ, որ մենք, այս բարդ ճգնաժամի միջով անցնելով, ի վերջոյ, եզրափակում ենք եւ ամփոփում ենք այս արձանագրումը»:

Նախագահներ՝ Պայտըն, Փութին եւ Մաքրոն Կը Շնորհաւորեն Հայաստանին Ժողովուրդին



Նախագահներ ճօ Պայտըն, Վլատիմիր Փութին եւ Էմանուէլ Մաքրոն

Միացեալ Նահանգներու Ռուսաստանի եւ Ֆրանսայի շնորհաւորած են վարչապետ Նիկոլ Փաշինեանին ու Հայաստանի ժողովուրդին խորհրդարանական վերջին ընտրութիւններուն առթիւ:

ԱՄՆ-ի նախագահ՝ ճօ Պայտընը շնորհաւորած է Նիկոլ Փաշինեանը ընտրութիւններուն տարած յաղթանակի կապակցութեամբ: Ան թուիթըրեան իր էջին վրայ մասնաւորապէս գրած է. - «Կը շնորհաւորեմ Հայաստանի ժողովուրդը եւ վարչապետի պաշտօնակատար Նիկոլ Փաշինեանը խորհրդարանական ընտրութիւններու յաջող կայացման կապակցութեամբ: Հայաստանի հետ մեր գործընկերութիւնը հիմնուած է ընդհանուր արժէքներու վրայ նաեւ համագոր-

ծակցութեան ժողովրդավարական բարեփոխումներու եւ հակամարտութիւններու կարգաւորման ոլորտի մէջ: Մենք հաւատարիմ ենք այս գործընկերութեան ամրապնդման», - գրած է ԱՄՆ-ի նախագահը:

Վարչապետի պաշտօնակատար՝ Նիկոլ Փաշինեան հեռախօսազրոյց ունեցած է Ռուսաստանի նախագահ՝ Վլատիմիր Փութինի հետ: Փութին Փաշինեանը շնորհաւորած է Հայաստանի ընտրութիւններու բարեյաջող կայացման եւ անոնց մէջ իր արձանագրած յաղթանակի կապակցութեամբ:

Երկու երկիրներու ղեկավարները անդրադարձած են նաեւ տարածաշրջանին մէջ տիրող իրավի-

ԵԱՀԿ-ի Նախագահը Կրկին Կոչ Ըրած է Ազատ Արձակելու Ռազմագերիները



ԵԱՀԿ-ի գործող նախագահ՝ Անն Լինտըն

ԵԱՀԿ-ի գործող նախագահ, Շուէտի արտաքին գործոց նախարար՝ Անն Լինտըն կոչ ըրած է Ատրայէյճանին ազատ արձակելու հայ ռազմագերիները, վերսկսելու բանակցութիւնները՝ ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահութեան հովանաւորութեամբ եւ հասնելու քաղաքական լուծման: Լինտըն այս մասին ըսած է ասուլիսի ժամանակ՝ անդրադառնալով «Արմէնի-

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Յետընտրական «Անդորրի» Անակնկալ Խախտում

ՀԱՅԿ ԻՍՐԱՅԷԼԵԱՍ

Յետընտրական «անդորրը» խախտել է Երեւանի քաղաքապետ Հայկ Մարութեանի շուրջ ստեղծուած իրավիճակը, ընդ որում բաւականին տարօրինակ իրավիճակը, յամենայն դէպս առաջին հայեացքից:

Վերջին օրերին Երեւանի քաղաքապետն ուշադրութեան կեդրոնում էր ինքնակամ շինութիւնների ապամոնտաժման գործընթացի բերումով, որ քաղաքապետարանը իրականացնում է մասնաւորապէս Աջափնեակ համայնքում: Հայկ Մարութեանը յայտարարեց նաեւ, որ Աջափնեակում ուղղակի «բանդա» է գործում, որը տեղակայում է ինքնակամ շինութիւններ, փորձելով քաղաքապետարանին կանգնեցնել փաստի առջ: Ահա այդ իրողութիւնների ֆոնին, թուում է, որ Երեւանի քաղաքապետը պէտք է թիրախ դառնար ահա այդ «բանդայի» եւ դրա հովանաւորների համար:

Բայց, քաղաքապետը յանկարծ թիրախաւորուեց այն ուժից, որի առաջադրմամբ էլ ընտրուեց այդ պաշտօնում 2018-ի Սեպտեմբերին: Հայկ Մարութեանի գործունէութիւնից դժգոհութիւն է յայտնել Քաղաքացիական Պայմանագիր կուսակցութեան վարչութեան անդամ, կրթութեան նախկին նախարար, վարչապետի պաշտօնակատար Նիկոլ Փաշինեանի գլխաւոր խորհրդական Արայիկ Յարութեանեանը: Իհարկէ նա Մարութեանին չի թիրախաւորել Աջափնեակում ապօրինի շինու-

թիւնները հեռացնելու համար: Յարութեանեանի դժգոհութիւնը կապուած է արտահերթ ընտրութեան հետ: Նա յայտարարել է, որ Մարութեանը խորհրդարանի արտահերթ ընտրութեան «ակներեւ չի աջակցել ՔՊ-ին, եւ իրենք հիմա քննարկումներ են անում, նաեւ մտածելով այն մասին, որպէսզի դրանց արդիւնքում որոշումները չվնասեն քաղաքին»:

Ինչ որոշումներ է քննարկում Քաղաքացիական Պայմանագիրը: Արդեօ՞ք Հայկ Մարութեանին Երեւանի Աւագանու միջոցով անվատահոթիւն յայտնելու, թէ՞ ուղղակի հրաժարականի կոչ յղելու: Այն, որ մտածում են որոշումներով քաղաքին չվնասելու մասին, ըստ երեւոյթի նշանակելու է, որ զուտ քաղաքական իմաստով քննարկուում են քաղաքապետին «վնասող» բաւականին կոշտ որոշումների տարբերակներ: Ինչու՞ է կառավարող ուժի ներսում հասունացել այդ խնդիրը:

Մի կողմ թողնենք այն, որ գուցէ նոյնիսկ ողջունելի է, երբ Երեւանի քաղաքապետը՝ Հայաստանի կէսից աւելին ներկայացող քաղաքի քաղաքապետը որոշակիօրէն անմասն է մնում քաղաքային կառավարումը արտահերթ համապետական, այն էլ բեւեռացուած գործընթացին ներգրաւելուց: Հարկ է չէ Հայկ Մարութեանի շուրջ ՔՊ քաղաքական քննարկումներ են հասունանում զուտ այն պատճառով, որ Մարութեանն «ակներեւ չի աջակցել»: Դա ըստ ամենայնի աւելի շուտ առիթ է, հետեւաբար աւելի ինտրիգային է բուն պատ-

ճառը, որ կառավարող ուժը խորհրդարանի ընտրութեանը տպաւորիչ ցուցանիշով հաստատելով իր կառավարման կարգավիճակը, միանգամից ձեռնմուխ է լինում քաղաքապետի կարգավիճակի շուրջ որոշումների եւ քննարկումների:

Ընդ որում, յատկանշական է, որ մամուլում հրապարակուեցին տեղեկութիւններ՝ մինչ Արայիկ Յարութեանի շուրջ թերով պաշտօնական դժգոհութիւնը, որ Երեւանի քաղաքապետի պաշտօնի համար ՔՊ դիտարկում է փոխվարչապետ Տիգրան Աւինեանի թեկնածութիւնը: Պէտք է համաձայնել, որ 2022 թուականին սպասուելիք քաղաքի Աւագանու՝ ըստ էութեան քաղաքապետի հերթական ընտրութեան պարագայում տարօրինակ է աւելի քան մէկ տարի առաջ մամուլում քաղաքապետի թեկնածութեան մասին տեղեկատուութեան շրջանառումը:

Միւս կողմից, մեծ հաւանականութեամբ ինտրիգն էլ հենց ժամկետի մէջ է: Սկսած 2009 թուականից Երեւանի քաղաքապետի ընտրութիւնը դիտարկուում է ըստ էութեան համապետական քաղաքական պայքարի տրամաբանութեան մէջ: Աւելին, 2008 թուականի նախագահի ընտրութիւնից յետոյ ընդդիմութիւնը՝ ՀԱԿ-ը, դիտարկում էր քաղաքապետի ընտրութիւնը որպէս յաջողութեան բաւականին լաւ հնարաւորութիւն: Դրա մասին է խօսում այն, որ այդ ընտրութեանը ՀԱԿ քաղաքապետի թեկնածուն Առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանն էր: 2013 թուականին՝ երկրորդ ընտրութեանը, յաջողութեան շանս էր տեսնում 2013 թուականի Փետրուարին նախագահի ընտրութեանը պաշտօնա-

պէս պարտուած Բաֆֆի Յովհաննիսեանը: 2017 թուականին ինտրիգ առանձնապէս չկար, քանի որ Սերժ Սարգսեանին յաջողուեց քաղաքական իրողութիւնները դասաւորել այնպէս, որ չլինեն «յաղթողներ» ու «պարտուողներ»:

Փոխարէնը, հենց քաղաքապետի ընտրութիւնն էր թաւշեայ յեղափոխութեան առաջին ընտրական յաղթանակը՝ 2018-ի Սեպտեմբերին, որն արագացրեց խորհրդարանի լուծարման եւ Դեկտեմբերին արտահերթ ընտրութեան գործընթացը: Երեւանի քաղաքապետի ընտրութեան հանգամանքն՝ ըստ ամենայնի, առանցքային իմաստ է ստանում այժմ, կամ յամենայն դէպս գործող իշխանութիւնը դիտարկում է այդ հաւանականութիւնը, մտածելով հնարաւոր կանխարգելիչ սցենարների մասին: Ըստ այդմ, բացառելի չէ այն, որ դիտարկուում է մինչեւ 2022 թուական չսպասելու եւ հնարաւորինս շուտ Երեւանում արտահերթ ընտրութիւն «խթանելու» հարցը, այդպիսով, խորհրդարանի նոր արմատական ընդդիմութեանը չտալով 2022 թուականի ընտրութեանը պատրաստուելու ժամանակ: Անկասկած, դա վարկածներից մէկն է, բայց երեւի թէ ոչ միակը: Այլ վարկածների մասին դիտարկումների հնարաւորութիւն կը տայ թերեւս այն, թէ կառավարող մեծամասնութեան շրջանակում ինչպէս կը զարգանայ քաղաքապետի «ընտրական վարքագծի» առնչութեամբ յայտարարուած դժգոհութիւնն ու ինչի կը բերեն քննարկումները:

«ԵՐԵՒԱՆ ԼՈՒՐ» Կայքէջ

Եթէ 200,000 Ձայն Են Կորցրել, Ինչո՞ւ Դուրս Չեկան Փողոց՝ Տէր Կանգնէին Ձայներից

ԱՐՓԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՍ

Կիրակի օրը՝ Յունիսի 27-ին կեդրոնական ընտրական յանձնաժողովը ամփոփեց Աժ արտահերթ խորհրդարանական ընտրութիւնների արդիւնքները: Դրան գուգահեռ «Հայաստան» դաշինքից յայտարարեցին, որ հնգօրեայ ժամկետում դիմելու են Սահմանադրական դատարան եւ վիճարկելու են ընտրութիւնների արդիւնքները: Ըստ «Հայաստան» դաշինքի ներկայացուցիչների՝ եղել են համակարգուած խախտումներ եւ մօտ 200 հազար ձայն, ըստ նրանց, իրենք պակաս են ստացել եւ այն կարող էր ընտրութիւնների ելքի վրայ էական ազդեցութիւն ունենալ: «Հաշուի առնելով անձնագրերի, գինուորների, շրջիկ խմբերի մասով ձեռք բերուած մի շարք փաստական հանգամանքները, գործ ունենք շուրջ 200.000 քուէի հետ, ինչը ընտրութիւնների ելքի վրայ էական ազդեցութիւն ունեցող թիւ է», - յայտարարել է «Հայաստան» դաշինքի ներկայացուցիչ Արամ Վարդեանեանը:

Քաղաքագէտ Ռուբէն Մեհրաբեանի խօսքով՝ ժողովրդի շրջանում արդէն խօսակցութիւններ կան այն մասին, որ իրենք եւս 200 հազար ձայնի փողը տուլ են, բայց ձայնը չեն ստացել, դրա համար էլ հիմա դժգոհում են. «Ես չզիտեմ, թէ դա որքանով է ճիշտ, որ ժողովուրդը նման բան է խօսում՝ ընդ որում քննադատով, բայց եթէ

իրենք այդքան ձայն են կորցրել, ինչո՞ւ դուրս չեկան փողոց, չպայքարեցին, տէր չկանգնեցին իրենց ձայներին: Իսկ ինչ վերաբերում է՝ ՍԴ դիմելուն, ապա դա անհեռանկար գործ է բովանդակային առումով: Նրանք բան չունեն ներկայացնելու դատարանին: Ընդամենը մտավորականներ են», - ասաց քաղաքագէտը՝ աւելացնելով, որ այս օրերին տիրող լուրսիւնը, սկսած ռուսական տեղեկագրամ ալիքներից, որոնք պերմանենտ ռեժիմով յօգուտ Քոչարեանի կեղտ էին լցնում Հայաստանի վրայ, վերջացրած քոչարեանական լրատուամիջոցների ու ֆէյքերի, շատ խօսուն է: «Բոլորը լուրն են եւ այդ լուրսիւնը շատ աւելի խօսուն է: Դա խօսում է այն մասին, որ նրանք յայտնուել են նոկաուտի մէջ: ՍԴ դիմելն էլ աւելի շատ նման է այդ նոկաուտը ցաւազրկելու փորձի: Չհասնելով բացարձակ իշխանութեան, նրանց մօտ նոկաուտից բացի շատ մեծ հոգեբանական շոկ է: Իսկ եթէ Սահմանադրական դատարան դիմելու իրենց յոյսը ՍԴ որոշ դատաւորներ են, որոնք Քոչարեանի երկրպագուներն են, ապա դա էլ ելք է: Եթէ այդ դատաւորները պրոֆեսիոնալ եւ ինստիտուցիոնալ ինքնասպանութիւն չեն ուզում գործել, ապա այդ հայցը վարոյթ անգամ չեն ընդունել: Իսկ եթէ նրանք պէտք է ինքնասպանութիւն գործեն, ապա մենք նրանց ոչնչով օգնել չենք կարող», - ասաց Մեհրաբեանը:

Ի դէպ, «Հայաստան» դաշինքը դեռ չի որոշել՝ վերցնում է մանդատները, թէ ոչ: Սպասում են ՍԴ որոշմանը: Մեհրաբեանի խօսքով Քոչարեանն ու նրա կողմնակիցները հետաքրքրութիւն չունեն խորհրդարան գնալու, քանի որ իրենք անելիք չունեն Աժ-ում: Նրանց բոլոր գործողութիւնները օրէնքից դուրս են. «Նրանք լաւ հասկանում են, որ Աժ-ում անելիք չունեն, որովհետեւ իրենց բոլոր մտալացողները միանգամից բախուելու են քաղաքական իշխանութեան սահմանադրական մեծամասնութեան պատին: Իսկ եթէ նրանք սկսեն զբաղուել զագրախօսութեամբ եւ մեծամասնութեանը ներքաշեն այդ հարթութիւն, ապա նրանք պարզապէս խաղից դուրս կը մնան»:

Քաղաքագէտ Արեգ Քոչինեանն էլ մեզ հետ գրոցում ասաց, որ ինքը «Հայաստան» դաշինքին առհասարակ չի համարում քաղաքական ուժ, քաղաքական նպատակներ ու հարցադրումներ բարձրացնող ուժ: Հետեւաբար նրանց յայտարարութիւններն ու գործողութիւններն էլ չի համարում քաղաքական. «Եթէ մարդը պիզնետով է զբաղում եւ անում է քաղաքական յայտարարութիւն, դժուար է նրա յայտարարութեան մէջ տրամաբանութիւն գտնել: Կամ եթէ մարդը իր առաջ խնդիր է դրել ամէն կերպ արդարադատու-



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
 ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
 ԱՌՅԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԲՆՉԱԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
 ԳՐԻԳՈՐ ԽՆՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
 ՎԱՐԵ ԱՋԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, \$100.00 (First Class)
 Canada \$125.00 (Air Mail)
 Overseas \$250.00 (Air Mail).
 All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
 at Pasadena CA.
 Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

**Արամ Սարգսեան.
«Նախկինները Այս Անգամ Փող Բաժնեցի
Ընդդիմութիւն Դառնալու Համար»**

Ըստ «Հանրապետութիւն» կուսակցութեան առաջնորդ Արամ Սարգսեանին՝ այսօր ունինք Ազգային ժողով, որ ժողովրդավարութեան կանոններով ընտրուած Ազգային ժողով է:

«Ազատութիւն»ի հետ հարցազրոյցի ընթացքին, Սարգսեան ընդգծեց՝ եթէ նախապէս նախկինները փող կը բաժնէին իշխանութեան գալու համար, այս անգամ փող բաժնեցին ընդդիմութիւն դառնալու համար,-

«Այսօր ունենք Ազգային ժողով, որը ժողովրդավարութեան կանոններով ընտրուած Ազգային ժողով է՝ հնարաւորինս շատ քիչ խախտումներով, որը չի արել իշխանութիւնը, իմ կարծիքով, կամ եթէ արել է, շատ քիչ է արել: Եթէ նախկինում նախկինները փող էին բաժանում իշխանութեան գալու համար, էս անգամ փող բաժնեցին ընդդիմութիւն դառնալու համար եւ այդ նիշան են զբաղեցնում Ազգային ժողովում եւ պատրաստ են գնալու Ազգային ժողովում աշխատելու, ինչը ես համարում եմ շատ ճիշդ: Հաւատալ, որ 2018 թուականի լեզափոխութիւնից յետոյ՝ այսքան կարճ ժամանակ յետոյ, իրենք կարող են յետ գալ, որ էլ մերժուածը մոռացուել է ու էլ համակարգը կարող է նորից վերածնուել, էս իրականութիւնից պէտք է բացարձակ կտրուած լինէիր: Երկրորդ տեղն արդէն ձեզ համար էն առաւելագոյնն է, ինչի կարողացաք հասնել ձեր հին մեթոդներով»:



«Հանրապետութիւն» կուսակցութեան առաջնորդ Արամ Սարգսեան

տոյ՝ այսքան կարճ ժամանակ յետոյ, իրենք կարող են յետ գալ, որ էլ մերժուածը մոռացուել է ու էլ համակարգը կարող է նորից վերածնուել, էս իրականութիւնից պէտք է բացարձակ կտրուած լինէիր: Երկրորդ տեղն արդէն ձեզ համար էն առաւելագոյնն է, ինչի կարողացաք հասնել ձեր հին մեթոդներով»:

**«Անկախ Դիտորդը» Կասկածներ Ունի,
Որ «Հայաստան» Դաշինքի Կողմէ
Ընտրողներուն Վրայ Ապօրինի Ազդեցութեան
Դէպքեր Եղած Են**



«Անկախ Դիտորդի» անդամները՝ մալոյ ասուլիսի ընթացքին

Քոչարեանի գլխաւորած «Հայաստան» դաշինքի կողմէ ընտրողներուն վրայ հնարաւոր ապօրինի ազդեցութիւն ու ընտրակաշառքի բաժանման դէպքեր եղած են», նման կասկածներ ունի «Անկախ Դիտորդը», որ քուէարկութեան տուեալները ուսումնասիրելով պարզած է, որ այն ընտրատեղամասերը, ուր առաւօտեան ժամերուն կուտակումներ եղած են, դաշինքը միջինէն աւելի ձայներ ստացած է:

«Այն տեղամասերում, որտեղ մասնակցել է առաւել մեծ տոկոսը, առաւել բարձր են վերջում արձանագրուել «Հայաստան» դաշինքի ձայները: Եւ այդպիսի տեղամասերում առաւել ցածր են եղել «Քաղաքացիական Պայմանագիր» ձայները: Ինչպէս տեսնում էք, «Պատիւ ունեմ»-ինը համարեա չի փոխուում», - լրագրողներու հետ հանդիպման ժամանակ ըսաւ դաշինքի ներկայացուցիչ Դանիէլ Իոաննիսեան:

եան: Իոաննիսեան ուսումնասիրութեան արդիւնքները մտահոգիչ որակած է եւ ըսած է, թէ նման պատկեր սովորաբար կը գրանցուին ընտրողներու վրայ ապօրինի ազդեցութիւններու եւ ընտրակաշառքի բաժանման պարագային:

«Անկախ Դիտորդի» ներկայացուցիչները միեւնոյն ժամանակ ընդգծած են, որ իրենց ուսումնասիրութեան արդիւնքները յանցագործութեան ուղղակի ապացոյց չեն:

«Նման գործողութիւնների դիմող անձինք իրենց կողմից վերահսկուած ընտրողներին առաւօտեան են բերում ընտրական տեղամասեր եւ փորձում տեսնել, թէ էլ ով չեկաւ, որպէսզի մինչեւ երեկոյան ժամը ութը հասցնեն բերեն: Շատ մօտաւոր հաշուարկ է դա, բայց խօսքը մօտ ութսուն հազար ընտրողի մասին է», - Դանիէլ Իոաննիսեան:

**Սիւնիքի Մէջ Քուէարկած Է Մօտ 4700
Զինուորական, Իսկ Փաշինեան Ստացած Է
35293 Քուէ՝ 53.42 %**

«Հայաստան» դաշինքի ներկայացուցիչ, «Վերածնունդ Հայաստան» կուսակցութեան ղեկավար, Սիւնիքի նախկին մարզպետ՝ Վահէ Յակոբեան Յունիս 24-ին լրագրողներու հետ ձեպագրոյցին, անդրադառնալով Սիւնիքի մէջ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութեան յաղթանակին եւ զրանցուած ցուցանիշներուն, յայտարարած էր, որ Սիւնիքի մարզին մէջ 15 հազար զինուորական բերուած էր քուէարկութեան:

«Փաստերի ստուգման հարթակը» ստուգած եւ համեմատած է Յունիս 20-ին կայացած արտահերթ խորհրդարանական ընտրութիւններուն Սիւնիքի մարզի ընտրողներու վերաբերեալ բաց աղբիւրներուն մէջ առկայ տեղեկութիւնները եւ պարզած, որ Վահէ Յակոբեանի յայտարարած թիւը խիստ չափազանցուած է:

Ըստ ոստիկանութեան կողմէ ներկայացուած տուեալներուն՝ Սիւնիքի մարզի ընտրողներու թիւը 105,062 է: Այս թիւին մէջ ներառուած չեն այն զինուորականներու տուեալները, որոնք զրանցուած չեն այս մարզը, սակայն ծառայութեամբ պայմանաւորուած պէտք է քուէարկէին այստեղ: Զինուորականներու ցուցակները գաղտնի են:

Սակայն կեդրոնական ընտրական յանձնաժողովի կողմէ հրապարակուած՝ ըստ տեղամասերու քուէարկութեան արդիւնքներու փաստաթղթով ներկայացուած յստակ է տեղամասի մէջ ընտրողներու ընդ-

հանուր թիւը, որու մէջ արդէն ներառուած են նաեւ զինուորականներն ու բնակութեան վայրը փոխածները: Ըստ այդմ, Սիւնիքի մարզի (34, 35 ընտրատարածքներ) ընտրողներու ընդհանուր թիւը կազմած է 109,750: Ինչպէս նշեցինք, այս թիւի մէջ ներառուած են նաեւ մարզին մէջ քուէարկած զինուորականները:

Ոստիկանութեան եւ ԿԸՑ-ի կողմէ հրապարակուած տուալներու համեմատութեան շնորհիւ կրնանք հասկնալ, թէ մօտաւորապէս քանի զինուորական քուէարկած է Սիւնիքի մարզը: Ըստ այդմ, տարբերութիւնը կը կազմէ 4688: Այլ կերպ ըսելով՝ առաւելագոյնը 4688 զինուորական Սիւնիքի մէջ մասնակցած է ընտրութեան: Պէտք է նշել, որ այս թիւը կրնայ աւելի քիչ ըլլալ, քանի որ ՀՀ-ի մէջ հաշուառում չունեցող, բայց զինուորական տեղամասի մէջ ու քուէարկութեան օրը ըստ գտնուելու վայրի ընտրողներու ցուցակին մէջ ընդգրկուածները եւս այս թիւին մէջ կը մտնեն:

Այսպիսով Վահէ Յակոբեանի այն պնդումը, թէ 15 հազար զինուորականներ բերուած են Սիւնիքի մարզ քուէարկութեան նպատակով, առնուազն չափազանցուած է: Սիւնիքի մարզին մէջ քուէարկած է առաւելագոյնը 4700 զինծառայող:

Նիկոլ Փաշինեան Սիւնիքի մէջ ստացած է 35.293 քուէ՝ 53.42 %:

**Ընտրութիւններուն Մասնակցած Ուժերէն
Երեքը Կը Դիմեն ՍԴ՝ Վիճարկելու
Արդիւնքները**

Յունիս 20-ի ընտրութիւններուն մասնակցած 3 ուժ յայտարարած են Սահմանադրական դատարան (ՍԴ) դիմելու մտադրութեան մասին՝ վիճարկելու ընտրութեան արդիւնքները:

Խորհրդարան անցած, սակայն կեղծիքներու մասին յայտարարած «Պատիւ Ունեմ» դաշինքի խօսնակը ըսած է, որ կը դիմեն ընտրութիւններու արդիւնքները անվաւեր ճանչնալու պահանջով. «Որից ելնելով արդէն Սահմանադրական Դատարանը կարող է կայացնել մի քանի տեսակի որոշում, այսինքն դա կը լինի մանտաթիւնների վերաբաշխում, կը լինի երկրորդ փուլի նշանակում, թէ նոր արտահերթ ընտրութիւնների, թէ ընտրութիւնների արդիւնքները ուժի մէջ թողնելու, դա արդէն երկրորդ հարցն է»:

Մօտ 66 հազար ընտրողներու քուէ կամ 7 մանտաթ ստացած «Պատիւ Ունեմ» դաշինքին Սոս Յակոբեան ըսած է, որ այժմ կը պատրաստեն դիմումը:

«Սկսած վարչական միջոցի օգտագործումից, շարունակելով զինուորականների ուղղորդումով, առհասարակ արդար եւ մրցակցային ընտրական պահանջները օրէնքով նախատեսուած խախտելուն, այսինքն այն ամէնի մասին, ինչ մենք ամէն օր երեւի խօսում ենք», - ըսաւ Յակոբեան:

Ընտրութիւններուն, մօտ 269 հազար ընտրողի քուէ, ապա խորհրդարանին ներս 29 մանտաթ ստացած «Հայաստան» դաշինքի ներկայացուցիչ՝ Արամ Վարդեանեան ղեռ երէկ յայտարարեց Սահմա-

նադրական Դատարան դիմելու մտադրութեան մասին, դիմումի հիմքը կը դնեն իրենց ձեռք բերած ապացոյցները զինուորներու ուղղորդուած քուէարկութեան, վարչապետի կողմէն պաշտօնակազմի դիրքի չարաշահման, վարչական միջոցի կիրառման եւ այլ հանգամանքներու վերաբերեալ:

Իր հերթին, խորհրդարան շանցած «Զարթօնք» դաշինքի վարչապետի թեկնածու՝ Արա Զոհրապեան ըսած է, որ իրենք կը դիմեն ՍԴ, ոչ թէ «Զարթօնքի» ստացած ձայներուն առնչուող մտահոգութեամբ, այլ «Քաղաքացիական Պայմանագիր» ստացած 688 հազար քուէի վերաբերեալ հիմնաւոր կասկածով:

«Ամենակարեւորը հաւանաբար նա է, որ նախընտրական քարոզչութեան ժամանակ հոգեբանական հարկադրանքի մեթոտներ եւ բռնութեան կոչեր են հնչել «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցութեան ներկայացուցիչները պետական միջոցների հաշուին փաստացի նախընտրական քարոզչութիւն են իրականացրել, քուէարկութեան օրը ընտրատեղամասերում կուտակումներ են եղել, բազմաթիւ կտրումների վրայ բացակայել են լուսանկարները, արձանագրուել են ուղղորդուած քուէարկութեան դէպքեր», - ներկայացուց Զոհրապեան:

ԼՈՒՐԵՐ

ԿԸՅ-ը Մերժեց Ընտրութեան Արդիւնքները Անվաւեր Ծանչնալու «Հայաստան» Եւ «Պատիւ Ունեմ» Դաշինքներու Պահանջը



Կեդրոնական Ընտրական Յանձնաժողովը նիստի ընթացքին

Հայաստանի Կեդրոնական Ընտրական Յանձնաժողովը (ԿԸՅ) ամփոփեց արտահերթ խորհրդարանական ընտրութիւններու արդիւնքները: Խորհրդարան անցած ուժերէն վարչապետի պաշտօնակատար Փաշինեանի գլխաւորած «Քաղաքացիական Պայմանագիրը» ստացած է ընտրողներու ձայներու 53,91 տոկոսը, Քոչարեանի «Հայաստան» դաշինքը՝ 21,9 տոկոս, իսկ Մերժ Սարգսեանի սատարած «Պատիւ ունեմ» դաշինքը՝ 5,22 տոկոս:

«Պատիւ Ունեմ»-ը չէ յաղթահարած անհրաժեշտ նուազագոյն շեմը, խորհրդարան անցած է Սահմանադրութեան պահանջով: Քուէարկութեան մասնակցած է ընտրելու իրաւունք ունեցող քաղաքացիներու 49,39 տոկոսը: Անվաւեր եղած է 4593 քուէաթերթիկ:

«Պատիւ ունեմ», «Հայաստան» դաշինքները եւ անցողիկ շեմը չյաղթահարած «Զարթօնք»

ազգային-քրիստոնէական կուսակցութիւնը դիմած են ԿԸՅ ընտրութեան արդիւնքները անվաւեր ճանչնալու պահանջով: Ներկայացնելով իրենց արձանագրած խախտումները՝ կը պնդեն, որ անոնք էական ազդեցութիւն ունեցած են քուէարկութեան արդիւնքներուն վրայ:

Կեդրոնական ընտրական յանձնաժողովը մերժեց ընդդիմադիր ուժերու՝ քուէարկութեան արդիւնքները անվաւեր ճանչնալու պահանջը: Ռուպերթ Քոչարեանի գլխաւորած դաշինքը ընտրութեան արդիւնքները կը վիճարկէ Սահմանադրական դատարանէն ներս:

«Պատիւ ունեմ» եւ «Հայաստան» դաշինքները դեռ վերջնական որոշում չունին՝ մանտաթները պիտի վերցնեն, թէ վար պիտի դնեն: «Հայաստան» դաշինքը 29 մանտաթ ստացած է, «Պատիւ ունեմ»-ը՝ 7, իսկ «Քաղաքացիական պայմանագիրը»՝ 71:

Հայաստանի Մէջ Մայիսին Աշխատատեղերու Աննախադէպ Մեծ Թիւ Արձանագրուած Է

Հայաստանի մէջ աշխատատեղերու թուաքանակի աննախադէպ ցուցանիշ արձանագրուած է, յայտարարեց առկա վարկութեան նիստի ժամանակ:

Պետական եկամուտներու կոմիտէի (ՊԵԿ) նախագահ՝ Էդուարդ Յովհաննիսեան վարչապետի պաշտօնակատար Նիկոլ Փաշինեանի խնդրանքով ներկայացուց տուեալները. - «2021 թուականի Մայիս ամսուայ վերաբերեալ յայտարարագրուած 0-ից բարձր եկամուտ ունեցող աշխատատեղերի քանակը կազմել է 635 հազար: Այս ցուցանիշն աննախադէպ է եւ կրկնել է 2020 թուականի Սեպտեմբեր ամսուայ ընթացքում արձանագրուած ամենաբարձր՝ 632 հազար ցուցանիշը»:

Վարչապետի պաշտօնակատարը, իր հերթին, ըսաւ. - «Համեմատութիւնը 2020 թուականի Սեպտեմբերի հետ հետեւեալն է. Սեպտեմբերին եղել է 631 հազար 966, իսկ Մայիսին՝ 634 հազար 951, բայց մասնագէտներն ասում են, որ Սեպտեմբերը սովորաբար աշխատատեղերի ամենաբարձր ամիսն է: Ենթադրում ենք, որ մենք այս ցուցանիշը կը գերազանցենք նաեւ Սեպտեմբերին, այսինքն՝ Սեպտեմբերին աւելի բարձր ցուցանիշ կ'ունենանք»:

«Փաստօրէն 2021 թուականի Մայիսին մենք ունենք 86 հազար 962-ով կամ 15 տոկոսով աւելի աշխատատեղ, քան 2018 թուականի Մայիսին: 2021 թուականին աշխատավարձերի ֆոնդը, 2018-ի Մայիսի համեմատ, աճել է 38 միլիարդ դրամով կամ 39 տոկոսով, եւ մէկ մարդու միջին աշխատավարձն աճել է 35714 դրամով կամ 20,2 տոկոսով», - նշեց Փաշինեան:

«Ի հարկէ, մենք այստեղ շարունակաբար միշտ այն հարցի առաջ ենք կանգնում, թէ որքանով են թուերն ապահովում ստուերից դուրս եկած աշխատատեղերի շնորհիւ եւ որքանով՝ նոր աշխատատեղերի շնորհիւ: Բայց, այնուամենայնիւ, մեր վերլուծութիւնները, քննարկումները արդիւնքում մենք եկանք այն եզրակացութեան, որ հիմա շինարարութեան ոլորտում որոշակի աճ կայ, եւ աշխատատեղերի աճն զգացուած է այդ ոլորտում: Նաեւ զբօսաշրջութեան դանդաղ, բայց հաստատուն վերականգնման գործընթաց ունենք: Յաջորդ ամենախոշոր հատուածը հանրային սննդի ոլորտն է, որտեղ աշխատատեղերի աճ ունենք», - ըսաւ կառավարութեան ղեկավարը:

Մերժ Սարգսեան. «Այո, Փաշինեանը Յաղթած Է Ընտրութիւններուն»

«Այո, ես կարծում եմ, որ նա յաղթել է».- Հայաստանի երրորդ նախագահ, Հանրապետական կուսակցութեան առաջնորդ՝ Մերժ Սարգսեան BBC-ի ռուսական ծառայութեան տուած հարցազրոյցի ընթացքին ընդունած է Նիկոլ Փաշինեանի յաղթանակը վերջին խորհրդարանական ընտրութիւններուն: Միեւնոյն ժամանակ ակնարկած, թէ Փաշինեանի ընդդիմախօսները պարտուեցան սեփական սխալ հաշուարկներու պատճառով:

«Մենք մշտապէս ասում ենք, որ երկրում, որտեղ բազմաթիւ խնդիրներ կան, որի մի մասն բռնադատուած է հարեւանի կողմից, երկրում, որի բազմաթիւ զինուորներ ու սպաներ դեռ գտնուում են գերութեան մէջ, որը դեռ հողին չի յանձնել զոհուած զինուորների բոլոր աճիւնները, ընդհանրապէս ընտրութիւններ անցկացնելը ճիշդ չէ: Սակայն, ցաւօք, այս հարցում ընդդիմութիւնն ընդհանուր չափաբարի չեկաւ, եւ շատերը՝ իրենց անձնական պատկերացումներից ելնելով, որոշեցին գնալ ընտրութիւնների: Եւ մենք պարտադրուած էինք մասնակցել», - ըսած է նախկին նախագահը:

Մերժ Սարգսեան հարցազրոյցի ժամանակ չէ յատկացուցած, թէ կշտամբանքը Քոչարեանի էր ուղղուած, թէ՛ ընդդիմադիր դաշտի այլ ուժերուն:

Երեք տարի առաջ՝ ժողովրդական ընդվզումներէ յետոյ, իշխանութեանէն հեռացած առաջնորդը աւելի բաց ու մանրամասն դարբանեց ինքրին անդրադարձած է: Սարգսեան կրկին պնդած է, թէ 2018-ին՝ նախագահութեան երկու ժամկէտէն յետոյ որոշած էր երկարաձգել իշխանութիւնը միայն եւ միայն այդ խնդրի կարգաւորման ու հաշտութեան գործընթաց սկսելու համար:

«Մենք շատ բովանդակային բանակցութիւններ ենք վարել, ոչ ոք չի կարող մեզ մեղադրել, որ ոչմիթիգակառութեան կողմնակից էինք կամ ձգձգում էինք բանակցային գործընթացը: Որեւէ պարա-



Հայաստանի նախկին նախագահ Մերժ Սարգսեան

զայում ինձնից չէիք կարող լսել, որ մենք երբեք չենք վերադարձնի այդ հողերը: Ես անգամ 2000-ին Ազգային ժողովում յայտարարեցի, որ Աղդամն իմ հայրենիքը չէ: Աւելի բացայայտ կարելի էր միթէ արտայայտել դա», - վստահեցուցած է Հայաստանի նախկին նախագահը՝ շարունակելով. - «Ես պատրաստ էի կրել դաւաճանի պիտակը, բայց լուծել հարցը, որպէսզի մենք չարժանանանք նման ճակատագրի: Ես չէի մտածում ոչ իմ վարկանիշի, ոչ էլ՝ պատմութեան մէջ մնալու մասին: Ես մտածում էի խնդրի լուծման մասին»:

Սարգսեանի խօսքով, իր օրօք ուժեղ բանակցութիւններու հետեւանքով կողմերը հասած էին ի կէտի, երբ արդէն կ'ակնկալուէր ինչ որ փաստաթղթի ստորագրում: Ըստ այդ սենարին, հայկական կողմը պէտք է վերադարձներ հինգ շրջանները Ղարաբաղի մէջ հանրաքուէի կայացման համաձայնութեան դիմաց՝ առանց անոր յստակ ժամկէտներու: Միւս երկու շրջանները՝ բացառութեամբ Հայաստանը Ղարաբաղին կապող միջանցքին, պէտք է վերադառնէին հանրաքուէի կայացումէն յետոյ: «Կը տեղակայուէին խաղաղապահ ուժեր, եւ մենք կը սկսէինք հաշտեցման գործընթաց», - ըսած է Հայաստանի երրորդ նախագահը:

Սկիզբ Առած Են Թուրք-Ատրպէյճանական Հերթական Զօրավարժութիւնները

Ատրպէյճանի մէջ սկսած են թուրքերոյ հետ համատեղ կատարուող «Մուսթաֆա Քեմալ Աթաթուրք 2021» մարտավարական զօրավարժութիւնները:



Անոնց նպատակը, ըստ Ատրպէյճանի պաշտպանութեան նախարարութեան, «երկու երկիրներու բանակային ստորաբաժանումներու համակարգուած գործողութիւններու եւ հրամանատարներու [մարտական գործողութիւններու] կառավարման կարողութիւններու բարելաւումն է»:


Ատրպէյճանի ռազմական գերատեսչութեան տեղեկութիւններով՝ զօրավարժութիւններուն կը մասնակցի շուրջ 600 զինծառայող:

«Զօրախաղերուն մէջ ներգ-

րաւուած է նաեւ 40 միաւոր գրահատեսակներ, անոնց կարգին՝ թանկեր, տարբեր տրամաչափի 20 միաւոր հրետանի, եօթ ռազմական եւ փոխադրային ուղղաթիւ, տարբեր նշանակութեան երեք անօդաչու թռչող սարք», - տեղեկացուցած է Ատրպէյճանի պաշտպանութեան նախարարութիւնը:

Զօրավարժութիւնները պիտի շարունակուին մինչեւ Յունիս 30-ը:

Նիկոլ Փաշինեան Հանդիպած Է ՍԴՀԿ Հայաստանի Վարչութեան Ներկայացուցիչ Սեդրակ Աճէմեանին Հետ



Վարչապետի պաշտօնակատար՝ Նիկոլ Փաշինեան եւ ԸՆԿ. Սեդրակ Աճէմեանը

Հայաստանի Վարչապետի պաշտօնակատար՝ Նիկոլ Փաշինեան Յունիս 25-ին հանդիպում ունեցաւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան Հայաստանի Վարչութեան ներկայացուցիչ՝ Սեդրակ Աճէմեանին հետ:

Վարչապետի պաշտօնակատար՝ Նիկոլ Փաշինեան դիմելով ԸՆԿ. Աճէմեանին ըսաւ. «Յարգելի պարոն Աճէմեան, ուրախ եմ ձեզ տեսնելու համար: Նախեալ, թող տուէք շնորհակալութիւն յայտնել հանդիպման հրաւերն ընդունելու համար: Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւնը մեր աւանդական կուսակցութիւններէից է եւ հակառակ դիրքով ունի նաեւ Սփիւռքում: Այսօրինակ շփումները շատ կարեւոր են մեզ համար, որպէսզի նաեւ Սփիւռքի որոշակի հատուածի ձայնը լսելի լինի մեզ համար եւ նաեւ ձեր ինչո՞նք մեր ձայնը լսելի լինի Սփիւռքի մեր հայրենակիցների համար:

Ես ծանօթացել եմ ընտրութիւնների վերաբերեալ ձեր գնահատականներին եւ ուրախ եմ արձանագրելու, որ, ըստ էութեան, մեր գնահատականները համընկնում են: Եւ Հայաստանը, կարող ենք արձանագրել, որ անշրջելիօրէն ընթանում է ժողովրդավարութեան ճանապարհով, ինչը նոր դաշտ եւ հնարաւորութիւններ է ստեղծում կուսակցական եւ քաղաքական գործունէութեան համար: Յոյս ունեմ, որ դա նկատելի է նաեւ ձեր կողմից, տեսնում եմ, որ նկատելի է նաեւ ձեր կողմից, ինչի

համար շատ ուրախ եմ: Համեցէք»:

ԸՆԿ. Աճէմեան իր պատասխան խօսքին մէջ ըսաւ. «Ես եմ շնորհակալ, որ այս հանդիպումը տեղի է ունենում: Նախեալ, շնորհաւորում եմ առաջին հերթին մեր ժողովրդին, որ իրենց մտորումներով ճիշդ ընթացք տուցին այս ընտրութիւններին: Եւ մենք ուրախ ենք, որ այսօր վերստին ձեզ պիտի տեսնենք վարչապետի առաջիկայ աթոռին: Բնականաբար, ահագին դժուարութիւններ կան, եւ այդ ամէնն ընդունելով՝ մենք, իբրեւ կուսակցութիւն, պատրաստ ենք համագործակցելու պետականութեան շուրջ՝ կառավարութեան կողքին եւ մասնաւորաբար, ձեր կողքին: Դա Հնչակեան կուսակցութեան որոշումն է՝ աշխարհասփիւռ եւ հայաստանեան մեր բոլոր շրջանակներում այդ տրամադրութիւնը շատ բարձր է: Այս օրերին բաւական բզեւորութիւն կայ մեզ մօտ՝ առաջիկայ աւելի փայլուն տեսնելու քաղաքականութեամբ:

Ես շատ լաւ եմ յիշում ընտրական քաղաքականութեան ժամանակաշրջանում «Ապագայ կայ» կարգախօսը: Եւ իրապէս՝ մենք նոյնպէս համոզուած ենք, որ ապագայ կայ: Ապագան կերտելու համար մնում է համագործակցութեան խնդիրը, բնականաբար:

Զրուցակիցները քննարկած են Սփիւռք-Հայրենիք կապերու ամրապնդման, համագաղթին ներուժի եւ կարողութիւններու համախմբման եւ հետագայ գործակցութեան հեռանկարներուն վերաբերող հարցեր:

ԵԱՀԿ-ի Նախագահը Կրկին Կոչ Ըրած Է

Շարունակուած էջ 1-էն

րէս»-ի դիտարկման, որ հայ հասարակութիւնը հիասթափուած է Լեւոնային Ղարաբաղի պատերազմի ընթացքին ԵԱՀԿ-ի կրաւորական դիրքորոշումէն եւ հարցին, թէ արդեօք ԵԱՀԿ գործող նախագահը կը կիսէ Ատրպէյճանի նախագահի տեսակետը, թէ ԼՂ հակամարտութիւնը լուծուած է:

«Համաձայն չեմ որ ԵԱՀԿ-ն շատ ջանք չի գործադրեր Լեւոնային Ղարաբաղի լուծման համար: Ես յատուկ ներկայացուցիչ ունիմ, որ շատ գործուն է: Ես անձամբ հանդիպում ունեցած եմ անոր հետ երէկ՝ քննարկելու իրավիճակը: Մենք ունինք ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահութիւն, զոր կը համանախագահեն ԱՄՆ-ը,

Ռուսաստանը եւ Ֆրանսան, որոնք կը փորձեն ընել շատ դրական քայլեր», - ըսաւ Լինտըն ու նկատել տուաւ, որ անոնք, սակայն, անցեալ տարի սահմանափակ հասանելիութիւն ունեցած են տարածաշրջան՝ «Քորոնա» ժահրի, նաեւ այլ պատճառներով:

ԵԱՀԿ գործող նախագահը յիշեցուց, որ Յունիսի կէսին համաձայնութիւն եղաւ՝ Հայաստանին վերադարձնելու 15 հայ ռազմագերիներ եւ Հայաստան Ատրպէյճանին տրամադրեց քարտէզներ: Անոր կարծիքով՝ այդ տեղի ունեցած է վրաստանի արժէքաւոր դերակատարութեան, ԱՄՆ-ի, նաեւ Եւրոպական խորհուրդի, Եւրասիանա-ժողովի, ԵԱՀԿ-ի շուէտական համանախագահութեան գերազանց համագործակցութեան հե-

Աշոտ Սաղեան Ընտրուեցաւ Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի Նոր Նախագահ

Յունիս 28-ին ՀՀ ԳԱԱ-ի (Գիտութիւններու ազգային ակադեմիան) մէջ տեղի ունեցան ՀՀ ԳԱԱ նախագահի, փոխնախագահի եւ ակադեմիկոս քարտուղարի ընտրութիւններ:

ՀՀ ԳԱԱ նախագահի պաշտօնին ընտրուեցաւ ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կեդրոնի տնօրէն, ակադեմիկոս՝ Աշոտ Սաղեան:

ՀՀ ԳԱԱ նախագահի պաշտօնին առաջադրուեցաւ 3 թեկնածու՝ ԳԱԱ մաթեմատիկական եւ տեխնիկական գիտութիւններու բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս՝ Լենսեր Աղալովեան, ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կեդրոնի տնօրէն, ակադեմիկոս՝ Աշոտ Սաղեան եւ ակադեմիկոս՝ Էդուարդ Ղազարեան: Առաջին փուլին որեւէ մէկ թեկնածու բաւարար ձայն չհաւաքեց: Երկրորդ փուլին 55 կողմ, 34 դէմ, 5 անվաւեր ձայներու յարաբերակցութեամբ ՀՀ ԳԱԱ նախագահի պաշտօնին ընտրուեցաւ ակադեմիկոս՝ Աշոտ Սաղեան:

ՀՀ ԳԱԱ նորընտիր նախագահ՝ Աշոտ Սաղեան ՀՀ ԳԱԱ փոխնախագահի պաշտօնին առաջադրեց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ՝



Ակադեմիկոս՝ Աշոտ Սաղեան

Հրանդ Մաթեոսեանի թեկնածութիւնը, իսկ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս քարտուղարի պաշտօնին առաջադրեց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արթուր Իշխանեանի թեկնածութիւնը: Փակ, գաղտնի քուէարկութեամբ՝ 80 կողմ, 12 դէմ ձայներու յարաբերակցութեամբ ՀՀ ԳԱԱ փոխնախագահի պաշտօնին ընտրուեցաւ Հրանդ Մաթեոսեան, եւ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս քարտուղարի պաշտօնին՝ Արթուր Իշխանեան:

Նախագահներ՝ Պայտրն, Փութին եւ Մաքրոն

Շարունակուած էջ 1-էն

ճակին եւ Նոյեմբեր 9-ի եւ Յունուարի 11-ի եռակողմ յայտարարութիւններու դրոյթներու իրագործման ընթացքին:

Տուեալ համաթեքսթով վարչապետի պաշտօնակատարը ընդգծած է ռազմագերիներու վերադարձի առաջնային նշանակութիւնը:

Ֆրանսայի նախագահ՝ Էմանուէլ Մաքրոն շնորհաւորական ուղերձին մէջ յատկապէս ըսած է. «Յունիս 20-ին Հայաստան կաշառած խորհրդարանական արտահերթ ընտրութիւններուն ձեր գլխաւորած կուսակցութեան յաղթանակի կապակցութեամբ՝ ձեզ կը յղեմ իմ շնորհաւորանքներն ու յաջողութիւններ կը մաղթեմ ձեր շարունակուող պաշտօնավարման՝ ի շահ Հայաստանի եւ Ֆրանսայի բարեկամ հայ ժողովուրդին: «Ֆրանսայի եւ Հայաստանի միջեւ առկայ են բացառիկ յարաբերութիւններ, որոնք հիմնուած են մեր ժողովուրդներու միջեւ պատմական առնչութիւններու վրայ եւ կը սնուցուին մեր երկիրներու կառավարութիւններու, խորհրդարաններու, տեղական իշխանութիւններու, ինչպէս նաեւ քաղաքացիական հասարակութիւններու միջեւ առանձնաշնորհեալ երկխօսու-

թեամբ: «Ուրախ կ'ըլլամ ձեզի հետ շարունակելու ձեր առաջին մասնաթիւ ընթացքին մեր համատեղ նախաձեռնած աշխատանքը: Գիտէք, որ Ֆրանսան հետաքրքրութեամբ կը հետեւի Հայաստանի մէջ ձեր ձեռնարկած բարեփոխումներուն:

«Ինչպէս առիթ ունեցայ վերահաստատելու ձեզ ս.թ. Յունիս 1-ին Փարիզ կատարած ձեր այցի ընթացքին, հայ ժողովուրդը ժողովրդավարութեան եւ իրաւական պետութեան ամրապնդման իր հաստատակամութեան մէջ կրնայ ապաւինիլ Ֆրանսայի լիակատար սատարման: Ֆրանսայի եւ Հայաստանի միջեւ տնտեսական համագործակցութիւնը եւս կը շարունակեմ ամրապնդուիլ: Վճռական լինելով շարունակել խոցելի բնակչութիւններուն մարդասիրական օժանդակութիւն տրամադրելու իր յանձնառութիւնը՝ Ֆրանսան միաբան է ձեր երկրի հետ՝ օգնելու յաղթահարել Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան հետեւանքները Հայաստանի Հանրապետութեան ինքնիշխանութեան եւ տարածքային ամբողջականութեան լիարժէք յարգման պայմաններուն», ըսած է նախագահ Մաքրոն իր շնորհաւորական նամակին մէջ:

տեւանքով:

«Ես իմ յայտարարութեամբ կոչ ըրած եմ Հայաստանին եւ Ատրպէյճանին՝ ընելու դրական քայլ՝ ազատ արձակելով բոլոր մնացած կալանաւորուածները եւ բանակցութիւնները վերսկսելու՝

ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահութեան հովանիի ներքոյ, նաեւ Անճէյ Քասիրչիքի ներգրաւուածութեամբ քաղաքական լուծում գտնելու, քանի որ դեռ չկայ խաղաղութեան համաձայնագիր», - ըսած է Լինտըն:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին Massis2@earthlink.net (626) 797-7680

Առաջնորդ Յովնան Արք. Տերտրեանի Շնորհաւորական Ուղերձը Հայաստանի Արտաւերթ Խորհրդարանական Ընտրութիւններու Կապակցութեամբ

Գոհութիւն եւ փառք կու տանք
ամենակալ Աստուծոյ հայրենիքի
մէջ տեղի ունեցած անցնցում ընտ-
րութիւններու համար: Ի խորոց
սրտի կը շնորհաւորենք նաեւ Հա-
յաստանի ժողովուրդը ժողովրդա-
վարութեան յաղթանակի եւ իրենց
ազատ ընտրութեան, կամ արտա-
յայտութեան սահմանադրական
իրաւունքի լիարժէք իրացման հա-
մար, որու մասին կը վկայեն հեղի-
նակաւոր միջազգային դիտորդա-
կան առաքելութիւնները:

Հաշտութեան, համերաշխու-
թեան եւ մարդոց միջեւ բարեհա-
ճութեան մեր աղօթքները լսելի
եղան Աստուծոյ: Մեր ժողովուրդը
խորագէտ գոնուեցաւ եւ գերծ մնաց
պառակտիչ եւ վտանգաւոր զար-
գացումներէ:

Լիայոյս ենք, որ նոր ձեւա-
ւորուելիք կառավարութիւնը՝
գլխաւորութեամբ մեծաշարք վար-
չապետ Տիար Նիկոլ Փաշինեանի,
ուժերու գերագոյն լարումով եւ
համախմբմամբ ձեռնամուխ կ'ըլ-
լայ Հայաստանի խաղաղութեան եւ
անվտանգութեան ապահովման,
տնտեսական զարգացման, բանա-
կաշինութեան եւ մեր ազգային
երազանքներու իրականացման:

Սփիւռքի սիրտը Մայր Հա-
յաստանի հետ եւ Մայր Հայաստա-
նի համար կը բաբախէ: Սփիւռքի
եւ յատկապէս՝ Արեւմտեան Թեմի
մեր ժողովուրդը այս գիտակցու-
մով է, որ ակնդէտ կը հետեւի
հայրենիքէն ներս տեղի ունեցող
զարգացումներուն՝ միշտ պատրաստ
իր ներուժով սատարելու ժողո-
վուրդի կողմէ ընտրեալ կառավա-
րութեան հայրենաշէն առաքելու-
թիւնները:

Գողգոթայի չարչարանաց
ճամբան անցած մեր սիրեցեալ



զաւակները ի Հայաստան, յԱրցախ
եւ ի սփիւռս աշխարհի արժանի են
ունենալ յիրաւի հօր, բարօր, խա-
ղաղ, ապահով, ինքնիշխան, զար-
գացած, յառաջդէմ, ազգային եւ
հոգեւոր արժեհամակարգի վրայ
հիմնուած հայրենի պետութիւն՝
հայրենիք:

Մեր աղօթքն ու մաղթանքն է,
որ մեզմէ վերանան հիասթափու-
թիւնն ու յուսալքութիւնը, տրտմու-
թիւնն ու անհանդուրժողականու-
թիւնը եւ հայրենիքէն ներս թագա-
ւործակցութեան եւ հայրենակեր-
տումի ոգին: Այս է Աստուծոյ
կամքը եւ մենք պիտի հաւատքը
վերածենք նուիրումի եւ ծառայու-
թեան:

Մնամք աղօթարար՝
Յովնան Արք. Տէրտրեան,
Առաջնորդ
Հիւսիսային Ամերիկայի
Արեւմտեան Թեմի
23 Յունիս, 2021
Պրըպէնք, Գալիֆորնիա

Երուսաղէմի եւ Պոլսոյ Հայոց Պատրիարքները Շնորհաւորած են Նիկոլ Փաշինեանը



Երուսաղէմի հայոց պատրի-
արք Տէր Նուրհան արքեպիսկոպոս
Մանուկեան շնորհաւորական նա-
մակ ուղարկած է ՀՀ վարչապետի
պաշտօնակատար Նիկոլ Փաշինեա-
նին ընտրութիւններուն անոր գլխա-
ւորած «Քաղաքացիական պայմա-
նագիր» կուսակցութեան յաղթա-
նակի կապակցութեամբ:

«Ի բոլոր սրտէ կ'աղօթենք, որ
Հայրենիքէն ներս նպաստէք համե-
րաշխութեան հաստատման եւ իրա-
կանացնէք մեր ժողովուրդի ակն-
կալիքները՝ բարձրացնելով Հա-
յաստանի ու Արցախի Հանրապե-
տութիւններու անվտանգութիւնը,
բարեփոխէք Հայոց Բանակը եւ
նպաստէք անոր մարտունակութեան
վերականգնման, զարգացնէք տնտե-
սութիւնն ու բարելաւէք մեր Հայ-
րենիքի ընկերային պայմանները»,-

«Արմէնիքես»-ի հաղորդմամբ, նշած
է Նուրհան արքեպիսկոպոս Մա-
նուկեան՝ ակնկալելով Նիկոլ Փա-
շինեանը տեսնել Սուրբ Երկրին
մէջ:

Նոյնպէս Պոլսոյ Հայոց Պատրի-
արք Ամեն. Տ. Սահակ Ս. Արք.
Մաշալեան շնորհաւորական մը ու-
ղարկած է Հայաստանի վարչապետ
Նիկոլ Փաշինեանին, որու գլխաւոր-
ած «Քաղաքացիական պայմանա-
գիր» կուսակցութիւնը յառաջա-
տար դիրքի վրայ դուրս եկաւ
վերջին արտահերթ խորհրդարա-
նական ընտրութենէն: Նախընթաց
օր Գումգաբուէն ուղարկուած շնոր-
հաւորականին մէջ Ամեն. Ս. Պատրի-
արք Հայրը Փաշինեանին բարե-
մաղթութիւններ փոխանցած է՝ յա-
նուն կրօնական ժողովին եւ հա-
մայնապային հաստատութիւններուն:

Փաստինայի Քաղաքապետի Հանդիպումը Հայ Համայնքի Ներկայացուցիչներու Հետ



Փաստինայի քաղաքապետ
Վիքթոր Կորտո ալցելելով ՀԿԲՄ-ի
կեդրոն, հանդիպում ունեցաւ
քաղաքէն ներս գործող շարք մը
կազմակերպութիւններու ներկայա-
ցուցիչներուն հետ:

Հայ Ամերիկեան Խորհուրդի
Փաստինայի մասնաճիւղի նախա-
ձեռնած սոյն հանդիպումին ներկայ
էին Հայկական Կրթական Բարե-
սիրական Միութեան, «Կայծ»
Երիտասարդական Միութեան, Հայ
Մարմնամարզական Միութեան, Նոր
Սերունդ Մշակութային Միութեան
եւ «Մասիս» շաբաթաթերթի
ներկայացուցիչները:

Հանդիպումի ընթացքին
քննարկուեցան Ամերիկահայ
համայնքը յուզող հարցեր, որոնց
շարքին բնակարաններու մատու-
ցելիութիւնը եւ կրթական հարցեր:
Քաղաքապետին փոխանցուեցաւ նաեւ
Արցախեան վերջին պատերազմի

հետեւանքներու մասին տեղեկութի-
ւններ:

Մասնակից կազմակերպութի-
ւններու ներկայացուցիչները
անդրադարձան տարուայ ընթացքին
իրենց ծաւալած բարեգործական
ծրագիրներուն՝ մեղմելու համար
համավարակի ունեցած ազդեցութի-
ւնը Փաստինայի ընդհանուր
ժողովուրդին վրայ:

Քաղաքապետ Կորտո իր խօսքին
մէջ շեշտեց Հայ Համայնքի
պատմական կարեւորութիւնը՝
Փաստինա քաղաքէն ներս, համայնքի
մասնակցութիւնը քաղաքային
կեանքին՝ բոլոր մակարդակներու
վրայ, բարեսիրական աշխատանք-
ները յատկապէս այս դժուարին
ժամանակներուն եւ խոստացաւ այս
ուղղութեամբ օգտակար հանդիսանալ
Հայ համայնքին ու բարելաւել
Փաստինայի բոլոր բնակչութեան
կենսամակարդակը:

Սուրիա Ս.Դ.Հ.Կ.-ի Շնորհաւորական Այցելութիւնը Հայաստանի Դեսպանատուն



Ս.Դ.Հ.Կ.-ի Սուրիոյ Հարաւային
շրջանի վարիչ Մարմինը ընկերակ-
ցութեամբ Կեդրոնական վարչութե-
ան փոխ Ա. Պետ՝ ընկ. Վազգէն
Համալեանի, պաշտօնական այցելութե-
ամբ մը գոնուեցան Սուրիոյ մէջ
Հայաստանի դեսպանատուն, ուր
դիմաւորուեցան Արտակարգ եւ
Լիազօր դեսպան՝ Մեծարգոյ տիար
Տիգրան Գեորգեանի եւ դեսպանատան
անձնակազմին կողմէ:

Ընկ. Վազգէն Համալեան խօսք
առնելով շրջանիս եւ Կեդրոնին
անունով, նախ՝ շնորհաւորեց Հայ

ժողովուրդը վերջին ընտրութի-
ւններու յաջող եւ հեզասահ
ընթանալու կապակցութեամբ, ապա
շնորհաւորեց Հայաստանի վարչա-
պետ՝ Տիար Նիկոլ Փաշինեանի
վերընտրուելը, մատնանշելով
կուսակցութիւնն ու մտահոգող
նիւթերու մասին, ի մասնաւորի հայ
ուզմագերիներու վերադարձը...

Իր կարգին պրն. Դեսպանը
ընդունելով շնորհաւորանքը
խոստացաւ զայն փոխանցել
Հայաստանի Պետութեան եւ պրն.
Փաշինեանին:

Ժողովրդավարութիւն



ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ՂԱԻԹԵԱՆ

«Ժողովրդավարութիւն թէ՛ Մե- նատիրութիւն» խորագրած էինք ընտրութիւններու նախօրեակին գրած մեր յօդուածը: Հայրենի ժողովուրդի պատասխանը յստակ էր. Ժողովրդավարութիւն:

Այս պատասխանը աւելիով կ'արժեւորուի, երբ կը դիտուի մեր կրած անաւոր պարտութեան լոյսին տակ, նախկին երեք նախագահներուն, ներկայ նախագահին ու երկու կաթողիկոսներուն եւ բազում քաղաքական կուսակցութեանց եւ գործիչներու կոչերուն, որ «դաւաճան», «ազգադաւ», «թուրք» եւ նմանատիպ այլ անարդարութիւններով պիտակաւորուած Նիկոլ Փաշինեանը հրաժարական տայ: Այս պատասխանը ցոյց տուաւ, որ անոնք որքան հեռու են ժողովուրդէն: Այս պատասխանը ցոյց տուաւ, որ ժողովուրդը դիտակցեցաւ նախ-

կիններու վերադարձի բերելիք արհաւիրքներուն ու տէր կանգնեցաւ ժողովրդավար համակարգի ընդմէջէն իր ապագան կերտելու կողմնորոշման:

Երբ ընտրութիւններուն արդիւնքը կը դիտենք նախկիններու վերադարձի ձախողման տեսանկիւնէն, գոհ ենք: Բայց մեր գոհունակութիւնը անխառն չէ մի քանի պատճառներով:

Ա. Խորհրդարան մտնող երեք խմբակցութիւններն ալ ռուսամէտ կը համարուին: Մեր կարծիքով, արեւմտամէտ հայեցողութեամբ խմբակցութեան մը ներկայութիւնը պիտի նպաստէր կատարուելիք քննարկումներու բազմազանութեան եւ հուսկ աւելի հաւասարակշռուած որոշումներու գոյացման: Եթէ Ռոպերթ Քոչարեան եւ Սերժ Սարգսեան 2018-ի Թաւշեայ յեղափոխութեամբ ենթարկուած ըլլային իրենց իշխանութեան տարիներու ընթացքին

քին գործած աւերներուն արժանի պատիժներուն, ապա այս ընտրութիւնները բոլորովին այլ արդիւնք պիտի ունենային, որ մեր համեստ կարծիքով, աւելի նպաստաւոր պիտի ըլլար Հայաստանի ժողովրդաբան գործընթացին ու յառաջիակացքին համար:

Բ. Քոչարեան-Սարգսեան խմբակցութիւնը կրնան խանգարել ու պիտի խանգարեն Փաշինեանի խմբակցութեան գործունէութիւնը: Նկատի ունենալով այն փաստը, որ անոնք իրենց իշխանութեան տարիներուն ինչպիսի վնաս հասցուցին մեր պետականութեան, ուրեմն սպասելի է, որ պիտի աշխատին ձախողեցնել որեւէ այլ ուժի յաջողութիւնը (որ պիտի գայ բացայայտելու այդ վնասները եւ տնօրինելու անոնց դարմանները): 2018-էն ի վեր այդ է որ արդէն կ'ընեն:

Գ. Աչքի առջեւ ունենալով այս պատկերը, կը սպասենք որ Փաշինեանի խմբակցութիւնը աւելի կտրուկ միջոցներու դիմէ վերակազմակերպելու համար ի մասնաւոր դատաւարական համակարգը, որպէս զի Հայաստանի մէջ տիրէ օրէնքի գերակայութիւնը: Այս քայլին պէտք է յաջորդէ տարիներու ընթացքին ապօրինի միջոցներով հարստացողներուն եւ երկրի հարստութիւնը կողոպտողներուն օրինական դաշտ բերելը եւ անոնց ունեցուածքի վերադարձը պետական գանձարան, որ պէտք է ծառայէ երկրի զարգացման արագացման:

Դ. Կը սպասենք նաեւ, որ պաշտօնի կոչուողները ըլլան այդ պաշտօնի մասնագէտներ եւ առաջնորդուին բացառապէս երկրի գերագոյն շահերով: Պաշտօնի կոչուողներու շարքին նկատի պէտք է

առնուի ոչ միայն Հայաստանի, այլ նաեւ աշխարհացրիւ հայութեան ներուժը:

Ե. Որպէսզի մեր պետականութիւնը առողջ հիմքերու վրայ դրուի, պէտք է բացայայտուին Հոկտեմբեր 27-ի եւ Մարտ 1-ի, ինչպէս նաեւ մեր վերջին պարտութեան պատասխանատուները ու կրեն իրենց արժանի պատիժը:

Ընտրութեան նախօրեակին, երբ որոշ հարցախոյզեր հրատարակուեցան ուր Ռոպերթ Քոչարեանի իշխանութեան վերատիրանալը հաւանական կը նկատուէր, մենք շատ մտահոգ էինք, որովհետեւ այդպիսի զարգացում մը շատ ծանր հետեւանքներ պիտի ունենար ոչ միայն մեր պետականութեան ու հայրենի ժողովուրդին համար, այլ նաեւ սփիւռքահայութեան հոգեվիճակին վրայ: Մէկ կողմէ պիտի աճէր արտագաղթը, իսկ միւս կողմէ յուսալքման մատնուածներուն այլասերումը:

Մեզի համար զարմանալի էր, որ 268 հազար քաղաքացի իրենց քուէն տուին Ռոպերթ Քոչարեանին եւ 66 հազար ալ Սերժ Սարգսեանին: Ծատ հաւանական կը նկատենք, որ ասոնց մեծ մասը պարտադրուած կամ գնուած էին, որովհետեւ ինչպէ՞ս կարելի է անտեսել այն անարդար կորուստները որոնց ենթարկուեցաւ Հայաստանը անոնց իշխանութեան 20 տարիներու ընթացքին, ու քուէ տալ անոնց:

Մեզի համար զարմանալի էր նաեւ Լեւոն Տէր Պետրոսեանի ի նպաստ քուէարկած 19 հազար քաղաքացիներու սակաւ թիւը: Մարդ, որու օրով Արցախեան ազատամարտ կերտուեցաւ եւ որու կանխատեսումները դժբախտաբար

Շար.ը էջ 18

Նոր էջ՝ Յանուն Իրաւունքի եւ Օրէնքի



ԱԲԵՏԻՍ ՈԱԶՍԻԿ

Ըստ վիճակագրական տուեալներու, Հայաստանի երրորդ հանրապետութեան 30-ամեայ պատմութեան ընթացքին, տեղի ունեցած են 20 համապետական ընտրութիւններ, չհաշուած քաղաքապետական կամ աւելի փոքր մաշտապի ընտրութիւնները: Յիշելու համար գոնէ վերջինները՝ 2013-ին՝ նախագահական, 2015-ին՝ փոփոխուած սահմանադրութեան, 2017-ին՝ խորհրդարանական, 2018-ին՝ խորհրդարանական եւ անա 20 Յունիս 2021-ին՝ դարձեալ խորհրդարանական:

Հայաստանի նման փոքր երկրի մը համար այս աւելորդ շուայութիւն է անշուշտ: Եւ եթէ նկատի ունենանք որ երկիրը միատարր եւ

համասեւ է (ազգային եւ կրօնական առումներով) իր ոչ-մեծաթիւ բնակչութեամբ, ապա իրօք Հայաստանի համար չափազանց շատ է եւ արտառոց: Սակայն, ցոյց կու տայ, որ անկայուն եւ յեղեղով ընթացք մը առկայ է հոն՝ որուն պատճառով ալ կը զգացուի անհրաժեշտութիւնը յաջորդական ընտրութիւններու:

Վերջինը 20 Յունիսին էր՝ յետ-պատերազմեան ցնցումներու, անվստահելիութեան մթնոլորտի եւ հասկանալիօրէն ներ-քաղաքական ճգնաժամի հետեւանքով, երբ յստակօրէն երկփեղկուած էր հասարակութիւնը դէմ եւ թեր խրամատներու: Ուրեմն՝ կրկին ընտրութիւններ. որմէ ետք՝ քուէատուփերու արդիւնքները յատկացուցին ամէն ինչ:

Վերջնոր վարչապետին յետ-

ընտրական առաջին հանրալիս ելոյթով Հանրապետութեան հրապարակին վրայ, կարելի է ուղենշային համարել բազմաթիւ առումներով: Նախ՝ նախապէս՝ 2018-ին որդեգրուած «Թաւշեայ Յեղափոխութիւն» եզրը փոխարինուած է «Պողպատէ Յեղափոխութիւն» եզրոյթով, որմով ան լիազօրուած է ժողովուրդին կողմէ՝ ըստ ընտրական արդիւնքներուն: Ան այս «մանտաթ»ը կենսակոչելու համար խորհրդանշական նուէր մըն ալ ստացաւ քաղաքացիի մը կողմէ: Այս «մանտաթ»ը ի գործ պիտի դրուի հաստատելու համար «իրաւունքի եւ օրէնքի տիքթաթուրա»: Այսինքն՝ այսուհետեւ հայրենի կեանքէն ներս գերակայութիւններ են քաղաքացիներուն իրաւունքները եւ երկրին օրէնքները: Հաւանաբար, ան անցեալ տարիներու փորձով համոզուեցաւ, թէ թաւիշը գործադրելի եւ արդիւնաւէտ միջոց մը չէ. ուստի ակնյայտ է մարտավարութեան լուրջ փոփոխութիւն մը:

Ան Հայաստանի մէջ բացուած համարեց նոր էջ մը՝ տալով ազդանշանը ներ-քաղաքական կեանքի ճգնաժամի աւարտին: Այս իմաստով, առաջին հերթին, անհրաժեշտ նկատեց վերջ տալ հայհոյախօսութեան եւ «ակրեսիւ հռետորաբանութեան», ինչ որ իրօք չափազանցուած էր, գոհակութեան աստիճանի, նախընտրական քարոզարշաւի ընթացքին: Հաստատուող «փայլուն» ժողովածու մը կարելի է կազմել այն հայհոյախօսանք արտայայտութեանց, զորս լսեցինք գրեթէ բոլոր կողմերէն: Ապառողջ եւ ջղագրգիռ մթնոլորտ մը գոյա-

ցած էր քաղաքական գործիչներու մօտ, որ ի հարկէ բնաւ պատիւ պիտի չբերէր ոչ ոքի: Ամօթալի վիճակ մը, որուն կ'ուզէր վերջ տալ Նիկոլ Փաշինեան՝ ինքն իրմէ եւ իր համախոհներէն սկսեալ: Ի յառաջագունէ, կարելի չէ՞ր կանխել նման երեւոյթի մը ծաւալումը: Այնուամենայնիւ, յուսանք չի կրկնուիր այն, ինչ որ եղաւ:

Ապա, ան անդադարձաւ մի քանի հրատապ հարցերու.- Հայաստանի եւ Արցախի պատմութեան մէջ նոր հանգրուանի սկիզբ՝ ազգային-հանրային ներուժի համախմբումով, ազգային-պետական արժէքներու պահպանում, օրինակաւորութեան ու կարգ-կանոնի կարեւորութիւնը եւ պատասխանատուութեան ստանձնում:

Վարչապետը օրակարգի կը բերէ շատ էական հարց մը, որ անա 30 տարի է ի վեր կը հիւծէ երկիրը: Երեսուն տարիներու ընթացքին պետական գոյքի, հարստութեանց, նիւթական արժէքներու թալանին վերադարձը պետական պիտուծէ: Պարզ է, թէ նախկին բարձրաստիճան պաշտօնեաներու սանձարձակ կողոպուտը հիմնական ազդակ դարձած է ժողովուրդին աղքատացման, տնտեսութեան կաղաքումին: Ո՞վ կրնայ հաշուել 1991-էն գոյցուած հարստութեանց չափը: Վարչապետին ուղղած սլաքները բանաձեւուած են այսպէս՝ «գողացուածի վերադարձը», «ապօրինի գոյքի բռնագանձում» եւ առաջարկը համեստ՝ «գողացուած ինքնակամօրէն վերադարձնել» բանակցութեանց ճամբով՝ այլապէս «պետական թա-

Շար.ը էջ 18

Քոչարեանը Ջրամբարների Փոխարեն Ռեստորաններ Եր Կառուցում

ԱՐՄԻՍԵ ԱԻԵՏԵԱՆ

2008 թվականի Մարտի 1-ի ողբերգական իրադարձությունների հեռացող նախագահ Ռոբերտ Քոչարեանը Երեւանի պետական համալսարանում ասուլիս տուեց, որը հիմնականում վերաբերում էր նախագահական ընտրությունների արդիւնքները չընդունող ընդդիմութեանը եւ Ազատութեան հրապարակում շուրջօրեայ ցույցեր անող ժողովրդին: Քոչարեանը քննադատեց ընդդիմութեանը եւ երկրում ստեղծուած յետընտրական իրավիճակի զարգացումները վերաբերեալ ներկայացրեց իր յայտնի չորս տարբերակները:

Բայց սեւեռուած լինելով քաղաքական իրադարձութիւնների վրայ՝ բոլորի ուշադրութիւնից վրիպեց նրա մի հետաքրքիր յայտարարութիւն. քննադատելով առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանին ու հակադրելով իր դեկավարման տարիների «տնտեսական զարգացումը» նրա նախագահութեան տարիներին՝ Քոչարեանն ասաց. «Մոռանում ենք, մի հատ յետադարձ նայենք: Երբ դրսից հիւրեր էին գալիս, մի նորմալ ռեստորան չկար, որ նրանց տանես, պատիւ տաս»:

Իհարկէ, մի կողմ դնենք հենց իր մոռացկոտութիւնը, որ Լեւոն Տէր-Պետրոսեանի նախագահութիւնն ընթացաւ շատ բարդ ժամանակահատուածում. աւերիչ երկրաշարժի վէրքերը շատ թարմ էին, խորհրդային համակարգը նոր էր փլուզուել, չորս տարի մաշեցնող պատերազմ էր եղել: Այնուամենայնիւ, օրուայ իշխանութիւնները կարողացել էին յաղթահարել այդ դժուարութիւններն ու փայլուն յաղթանակ տանել պատերազմում: Նրանք Ռոբերտ Քոչարեանին թողել էին յաղթած պետութիւն, տարածքները գրեթէ կրկնապատկած Լեւոնային Ղարաբաղ եւ արդէն տնտեսական վերականգնման, զարգացման փուլ մտած Հայաստանի Հանրապետութիւն: Եթէ համաձայն չէ, թող վիճի նախկին վարչապետ Հրանտ Բազրատեանի հետ:

Բայց ամենացնցողն այն էր, որ Հայաստանում 10 տարի նախագահի, դրանից առաջ 12-ում 7 տարի նախագահի ու այլ բարձր պաշտօններ զբաղեցնելուց յետոյ նրա համար տնտեսութեան զարգացման չափանիշը «դրսի հիւրերին պատիւ տալու համար նորմալ ռեստորանների» առկայութիւնն էր: Եւ դրա մասին հեռացող նախագահն ասում էր երկրի թիւ մէկ բուհում ապագայ տնտեսագետներին, իրաւաբաններին ու այլ մասնագէտներին:

Եւ հիմա, երբ Հայաստանի էկոնոմիկայի նախարարն ասում է, որ մեր երկիրը ոռոգման ջրի խնդիր ունի, քանի որ հարեւան թուրքիան իր տարածքում Արաքս գետի վրայ ջրամբարներ է կառուցել ու չի թողնում, որ ջուրը հոսի Ախուրեանի ջրամբար, ակամայ չիշում ես նախկին նախագահի ու այսօր նորից երկրի քաղաքական առաջնորդութեան յայտ ներկայացրած մարդու պատկերացումները տնտեսութեան զարգացման մասին: Ի դէպ, Քոչարեանն իր այդ յայտարարութեան մէջ նաեւ ասել

էր. «1998-ին ես գնում էի Երեւան-նից Սեւան եւ ամբողջ ճանապարհին 3-4 մեքենայ չէի հանդիպում»:

Իսկ 2008-ին, երբ Ռ. Քոչարեանը հեռացաւ, մեր երկրում «պատիւ տալու օբիեկտների» պակասութիւն չկար, դրանք մէկը մէկից մեծ էին, շքեղ էին եւ ամէնուր էին: Դրանցից օգտուում էին պետական պիւտճէի, «ատկատներ» ու կաշառքների վրայ նստած պաշտօնեաները, ինչպէս նաեւ հարկերը թաքցրած գործարարները: Իսկ Երեւան-Սեւան մայրուղում երբեմն գերթանկարժէք մեքենաների խցանում էր լինում: Դրանցով երթեւեկում էին պետական պիւտճէի, «ատկատների» ու կաշառքների վրայ նստած այդ նոյն պաշտօնեաներն ու հարկերը թաքցրած գործարարները: Ու նրանք գնում էին դէպի Սեւան, Ծաղկաձոր, Դիլիջան եւ այլ պետական արգելոցներ, որտեղ ջրի գնով հսկայական տարածքներ էին սեփականացրել եւ տեղում պատիւ տալու օբիեկտներ ու շքեղ առանձնատներ էին կառուցել:

Այդպէս էր այդ տասնամեակում զարգանում տնտեսութիւնը: Փոխարէնը նոյն թիւ մէկ բուհում ընկնում էր կրթութեան մակարդակը, մոլեգնում էր կաշառակերութիւնը, որն էլ ընկած էր տնտեսութեան «զարգացման» հիմքում:

Վահան Քերոբեանն, իհարկէ, փոքր-ինչ մեղմ է ներկայացրել իրավիճակը: Նրա այդ մի նախադասութիւնը բացայայտեց շատ մօտ ապագայում Հայաստանին սպառնացող ամենալուրջ վտանգներից եւ օրուայ իշխանութիւնների ամենալուրջ խնդիրներից մէկը՝ օրէցօր ուժգնացող ջրի սակաւութիւնը: Այդպիսով էկոնոմիկայի նախարարը բացայայտեց նաեւ նախկին իշխանութիւնների ամենալուրջ բացթողումներից մէկը, որը, եթէ կ'ուզէք, կարելի է բնութագրել որպէս յանցաւոր անտարբերութիւն կամ հենց յանցագործութիւն:

«Այլք Մեդիան» արդէն անդրադարձել է ջրային խնդրին ու ներկայացրել, որ Թուրքիան Արաքս գետի աւազանում կառուցել եւ կառուցում է 14 ջրամբար, որոնք ամբարելու են գետի՝ տարեկան մօտ 2 մլրդ 75 մլն խմ ջրի պաշարի գերակշիռ մասը՝ 1,8 մլրդ խորանարդ՝ կարսի ջրամբարն արդէն իսկ վերցնում է հայ-թուրքական սահմանի վրայ կառուցուած Ախուրեան ջրամբար հոսող ջրի զգալի մասը: Այդ պատճառով էլ այս տարի այդ ջրամբարը կիսատ է լցուել, եւ Արմաւիրի մարզում ոռոգման ջրի խնդիր կայ:

Բայց կ'ասէք, թէ այդ հարցում որն է նախկին իշխանութիւնների մեղքը: Չէ՞ որ Թուրքիան է փակել Ախուրեանի ջրամբար հոսող ջրի ճանապարհը: Խնդիրն այն է, որ նախկին իշխանութիւնները պետական պիւտճէն մսխելու, «ատկատներ» ու կաշառքներ ստանալու, հարկերը թաքցնելու եւ դրանցով շքեղ ծառայողական ու սեփական մեքենաներ գնելու, «պատիւ տալու օբիեկտներ», ամառանոցներ ու առանձնատներ կառուցելու եւ այլ ճոխու-

Վերջապէս

«...Թող կուրծքս մի քիչ ցաւի, Որ սրտիս տեղն իմանամ: Մի տեսակ ստագնայ կայ, որ չես ասի ոչ մի բառով...»

Համօ Սահեան



ՈՒՒՐԵՆ ՅՈՎԱԿԻՍԵԱՆ

Կարծում եմ թէ շնորհաւորանքի եւ գովասանքի խօսքերը աւելորդ չեն, բայց այն թողնենք փոթորիկը անցնելուն, որ ենթադրաբար պատրաստում են քուէատուփերից դժգոհ մնացածները, բայց յուսանք որ հնչած սպառնալիքները՝ ընդհուպ քաղաքացիական բախումների մակարդակի, միայն նախընտրական կէս լուրջ, կէս կատակ յայտարարութիւններ են եղած պահի տրամադրութեան հետ կապուած եւ արդէն մոռացուել եւ կրքերը հանդարտելու վրայ են:

Փորձադաշտի ժամկէտը վերջացաւ եւ նորոգ իշխանութիւնները գործելակերպ փոխելու սկիզբը պէտք է դնեն, հիմնական եւ կայուն պետական հիմունքների սկզբունքով, իսկ որոշ մեծ կամ փոքր յաջողած երկրների օրինակին հետեւելը ամօթ չէ: Բաւական չէ հին թաւիշը պողպատի փոխելու ցանկութիւն ունենալ եւ աւելի քան եռամեայ դժուար ուղի անցնելով ինքնակայութեան գալու եւ լրջանալու ժամն է եւ անցածը տարրալուծելու առիթն է՝ եղածը ճիշտ հասկանալ ու կշռադատել՝ սպթաքումներից խուսափելու:

Իմաստուն եւ խոհեմ գտնուեց մեր առողջ հասարակութիւնը՝ գանց առնելով մօտ 80 տոկոս քոչի դաշինքի օգտին (1) քուէարկող երեւանեան քաղքենիական արկածախնդիրների մասը որ հաստատուն պատուար, եղաւ նախկինների ձեռնարկած քայլերին տարբեր քայլերով ու միջոցներով սողակել պետական ոլորտ: Մեծ յաջողութիւն կարելի է համարել խորհրդարանը ախոռի վերածած ԲՀԿ ի կերբերոսներից ազատուելու փաստը, որ իրենց խօսքի ազատութեան իրաւունքը դարձրել էին վայրահաջութեան սկզբունք եւ պատշաճ խօսքը անգոյ էր: Շատ իմաստալից չէր, երբ աւելի քան վեց ամսից ի վեր Քոչարեանը իր ժրջան երիտասարդ դաշնակցի հետ, որոնց կողքին նաեւ նախագահը՝ մինչեւ իսկ կաթողիկոսը իր ենթակայներով որոնց իրական դերը լուել կամ, հաշտութեան քայլեր պիտի լինէին անընդհատ դաւաճան, եւ հրաժարականի պահանջի բառերը հողովեցին պատեհ թէ անպատեհ առիթով այսօր պիտի կարողանան, նոյնքան քաջութիւն եւ համոզմունք ունենալ իրենց պաշտօնից կամ պատգամաւորի աթոռից հրաժարուելու, եթէ ոչ

ապա ստիպուած կը լինեն իրենց հայհոյած անձանց հետ՝ երկրի վերակառուցման գործին լծուել ըստ պարտականութեան, որ անբարոյ կարող է գնահատուել:

Ուշադրութեան արժանի է ընտրութիւնների յաջորդ օրը եղած հանրահաւաքը: Կենտրոնական հրապարակը լեփ-լեցուն էր եւ ելոյթ ունեցողներից ոչ մէկը բացասական մէկ բառ հնչեցրեց ընտրական որեւէ հակառակորդի հասցէին, մինչդեռ նորընտիր վարչապետը իր պաշտօնի մակարդակին հաւատարիմ մնալով, կոչ արեց բոլոր խմբերին՝ հայրենաշէն դժուարին գործին միանալ եւ մասնակցել՝ շեշտելով միասնական ներուժ գործօնը, առանց ատելութեան ու որակալութեան զգացումի: Գուշակել չեմ կարող թէ ինչպէս կ'ընկալուի կոչը որ շատ դրական եւ կարեւոր է:

Որքան որ պատուիրաններին հետեւելուն համակիր եմ՝ փոխադարձ գիջումի եւ անհատի կարծիքը յարգելու սկզբունքով այնուամենայնիւ մեծ շատ մեծ աշխատանք կայ երկրի մաքրագործման համար բազում ոլորտներում: Առաջին հերթին պէտք է արգելել եւ երկրից դուրս շարժել դրսից եկած բոլոր տեսակի ջուր պղտորող սորոսական, մասոնական եւ նման արկածախնդիր եւ ախտածին խմբակներին ու աղանդներին: Նրանց ներկայութիւնը մեր բարիքի համար չէ այլ քաջալերել միասնականութիւնը անբարոյ կեցուածք եւ դաւանա-փոխութիւնը:

Կարծում եմ ոչ ոքի համար գաղտնիք չէ եւ նոր ընտրուած իշխանաւորների համար եւս առաջնակարգ է դատախարական համակարգի եւ ՄԳ-ի արմատական եւ խորքային վերակառուցումը, որի հետ նոյնքան կարեւոր է երկրում լայնօրէն տարածուած անգրագիտութիւնը մայրենի լեզուի նկատմամբ՝ գրաւոր թէ բանաւոր եւ եթէ խօսք վարչապետին հասնելու միջոց լինի ապա կը թախանձեմ յարգարժան ՆԻԿՈՒ-ին, որպէս վարկանիշ՝ փոխել իր ելոյթներում երբեմն գործածած գաւառական բառաթերքը եւ անցնել դասական հայերէնի: Դա ոչ միայն ցանկութիւն է այլ նաեւ պարտականութիւն քանզի դրօշի գովերգի գիւնանշանի կողքին միշտ նշում են նաեւ լեզուն եւ թաւիշը պողպատ դառնալուց՝ բիւրեղեայ հայերէնն է

Massis Weekly

Volume 41, No. 25

Saturday, JULY 3, 2021


President Biden Congratulates People of Armenia and PM Pashinyan on Successful Parliamentary Elections

WASHINGTON, DC — US President Joe Biden has congratulated the people of Armenia and acting Prime Minister Nikol Pashinyan on successful parliamentary elections.

“Our partnership with Armenia is one of shared values and cooperation on democratic reform and conflict resolution—we are committed to strengthening that partnership,” President Biden said in a Twitter post.

Last week the US State Department issued a statement congratulating the people of Armenia on their June 20 parliamentary elections.

“We welcome the overall positive assessment by the OSCE/ODIHR Election Observation Mission. We are pleased that ODIHR’s preliminary conclusions noted voters’ human rights and fundamental freedoms were gen-



erally respected, contestants were able to campaign freely, and that ODIHR assessed election-day vote counting as positive,” the US Department of State said in a statement.

Armenian People Can Count on Full Support of France: Macron to Pashinyan

YEREVAN -- French President Emmanuel Macron sent a congratulatory message to the Prime Minister of Armenia Nikol Pashinyan on the victory of his Civil Contract party in the snap parliamentary elections.

“On the occasion of the victory of your party in the early parliamentary elections in Armenia on June 20, I congratulate you and wish you success in your continued tenure for the benefit of the friendly people of Armenia and France.

There are exceptional relations between France and Armenia, which are based on historical ties between our peoples, fueled by a special dialogue between governments, parliaments, local authorities, as well as the civil society of our countries,” Macron’s message says.

“As I reiterated during your visit to Paris on June 1, the Armenian people can count on the full support of France in their determination to strengthen democracy and the rule of law. The economic cooperation between France and Armenia will continue to strengthen. Determined to continue its commitment to providing humanitarian assistance to vulnerable populations, France stands by your country in helping to overcome the aftermath of the



Nagorno-Karabakh conflict with full respect for the sovereignty and territorial integrity of the Republic of Armenia,” the congratulation message reads.

Macron reaffirmed France’s commitment as a co-chair of the OSCE Minsk Group to the search for a comprehensive settlement of the Nagorno-Karabakh conflict.

“Rest assured that we are committed to resuming the process of political settlement, which is the only way that can guarantee lasting stability in the South Caucasus, as well as promote our common values of peace, solidarity and friendship with the peoples of the region,” the message reads.

EBRD: Armenian Economy Embarks on Broadbased Recovery

YEREVAN -- The Armenian economy is projected to grow by 4.0 per cent in 2021 and by 5.0 per cent in 2022, EBRD said in its latest report ‘Regional Economic Prospects in the EBRD Regions.’

According to EBRD, the Arme-

nian economy has embarked on a broadbased recovery. The economy contracted by 7.4 per cent in 2020 as household consumption, investments and exports plummeted,

Continued on page 4

Central Electoral Commission Announces Final Official Results of the Election

YEREVAN — Armenia’s Central Electoral Commission has officially summed up the results of the June 20 snap parliamentary elections, reaffirming the landslide victory scored by acting Prime Minister Nikol Pashinyan’s Civil Contract party and rejecting opposition demands for annulling the results.

According to the final results published on Sunday, Pashinyan’s party received 53.91 percent of the votes, while the Hayastan Alliance of former President Robert Kocharian and the Pativ Unem Alliance affiliated with former President Serzh Sargsyan got 21.9 percent and 5.22 percent of the vote, respectively.

While not clearing the 7-percent threshold set for alliances to enter parliament, Pativ Unem has been allowed to be represented in the next parliament as the force that finished third in the race.

According to the Central Electoral Commission, the results will translate into 71 seats in parliament for Civil Contract, while Hayastan and Pativ Unem will control 29 and 7 mandates in the 107-seat National Assembly.

The alliances of the two former presidents as well as the Zartonk National-Christian Party, which did not clear the 5-percent threshold for political parties, had applied to the Central

Electoral Commission with a demand to declare the election results invalid.

Presenting their grievances, the opposition groups claimed that the alleged violations had a significant impact on the vote results.

They, in particular, claimed that Pashinyan violated the constitution by continuing to act as prime minister after May 10 when the Armenian parliament was dissolved. They also referred to the alleged use of administrative resources by the ruling party, Pashinyan’s “hate speech” and “calls for violence” during the election campaign, prosecutions against opposition members and other alleged violations on election day that they claimed had an impact on the outcome of the vote.

The Central Electoral Commission rejected the demands of the opposition groups, reaffirming the results of the vote.

The Kocharian-led Hayastan Alliance has said it will challenge the election results in the Constitutional Court.

International observers gave largely a positive assessment of the Armenian authorities’ handling of the parliamentary elections in their statements that followed the June 20 vote.

Both opposition alliances say they have not yet made their final decision on whether they will pick the mandates.

Democratic and Fair Elections is a Great Victory For the Armenian People

The following is the translated congratulatory message of the Social Democratic Hunchakian Party Central Committee on the occasion of the extraordinary elections of the National Assembly of Armenia:


The Central Committee of the Social Democratic Hunchakian Party congratulates all citizens of the Republic of Armenia on the recent free, fair and transparent elections. In a tense national political environment, holding clean and fair elections is a great victory for our people.

On this occasion, we congratulate Prime Minister Nikol Pashinyan and his political party on their impressive election victory. We are convinced that by giving the Prime Minister a renewed mandate, the electorate sends a clear message that in parallel with the return of our prisoners of war, the withdrawal of Azerbaijani troops from the sovereign territory of the Republic of Armenia, seeking a just and permanent solution to the issue of Artsakh and strengthening the security of the Republic of Armenia, Democracy, the rule of law and the fight against corruption remain priorities. The work that began in 2018 must be completed.

On the other hand, we find unacceptable and condemnable the insulting statements directed by a number of politicians and religious leaders directed towards the voters, which only deepens the polarization of society, when the only imperative today should be the easing of internal tensions.

In this regard, we commend the Prime Minister’s message of unity and dialogue, as the first step towards restoring national solidarity and resolving the challenging issues facing the homeland through joint efforts.

Social Democratic Hunchakian Party
Central Committee
June 23, 2021



Canada Appoints Amb. Stéphane Dion as Special Envoy to Armenia

OTTAWA -- The Honourable Marc Garneau, Minister of Foreign Affairs of Canada, has announced that the Honourable Stéphane Dion, Ambassador to Germany and Special Envoy to the European Union and Europe, will undertake a mission to explore options for Canada to better support Armenian democracy.

Building on the joint work of recent years and long-standing people-to-people ties between our countries, Canada is committed to cooperating with Armenia to further its democratic progress, which is of critical importance not only for Armenian society but for the region.

Special Envoy Dion will examine options as to how Canada can encourage the ongoing efforts of Armenian civil society, strengthen democratic institutions, grow Armenia's engagement with multilateral institutions, and promote inclusive economic growth. The goal is that as a result of this mission, the support of Canadian society for the benefit of Armenian democracy is durably consolidated.

His work will take several months and will include virtual consultations with a range of stakeholders in Canada and partners in Armenia. COVID-19 travel permitting, he will also travel to Armenia to meet with senior members of Armenia's government and key de-



partments, as well as with partner embassies, civil society groups, international organizations, private sector representatives and local media. He will also meet with Members of Parliament and civil servants involved with the Canadian-funded Parliamentary Centre project.

This mission underscores the importance Canada attaches to the success of Armenian democracy. The Special Envoy will report his findings to Minister Garneau following the mission. This will include recommendations to guide Canada's future engagement with Armenia toward further realizing its democratic ambitions.

Armenia Extends Ban on Turkish Imports for Another Six Months

YEREVAN (ARKA) – The government of Armenia has extended today the ban on imports of goods of Turkish origin for another 6 months.

Armenian government's ban on import of Turkish goods imposed during the recent war in Nagorno-Karabakh, came into force on January 1, 2021.

On October 21, almost a month after Azerbaijan, backed by Turkey and Middle East mercenaries, attacked Nagorno-Karabakh, the Armenian government imposed the six-month ban on imports of Turkish goods.

The Armenian government said at that time that the measure was a retaliation to the Turkish authorities' provocative calls, supply of arms to Azerbaijan and deployment of mercenaries from the Middle East to the Nagorno-Karabakh conflict zone, which undermined the stability in the region, including the international efforts to find a peaceful settlement to the Nagorno-Karabakh conflict.

"The extension of the ban on the import of goods of Turkish origin should be reviewed not only as an economic sanction against Turkey, but also from the security point of view – to stop financing the Turkish state treasury from Armenian sources," Economy Minister Vahan Kerobyan said.

He said a study show that over the past six months the volume of imports from Turkey decreased by almost 70%.

According to him, the structure



of imports has changed significantly. If earlier this list included aviation fuel, vegetables and citrus fruits, cleaning products, knitwear, now it includes mainly building materials, knitted and cotton fabrics and natural leather.

According to government data, Armenia imported \$268 million worth of Turkish-manufactured products in 2019 and \$178 million worth of Turkish goods in January-October 2020, 15% down year on year. More precisely, \$69.4 million worth clothing, \$10.3 million worth citrus fruit, \$35.2 million worth cars, equipment and mechanisms (electric heaters, refrigerators, etc.), \$24.3 million worth oil and oil products, \$23.6 million worth chemicals and \$21.6 million worth base metals.

There are no diplomatic relations between Turkey and Armenia: official Ankara closed the border in 1993 out of solidarity with Azerbaijan. Turkey also overreacts to international recognition of the 1915 Armenian genocide in Ottoman Empire.

PM Pashinyan Meets with SDHP Armenia Chairman Setrak Ajemian



JUNE 25, 2021 - Acting Prime Minister Nikol Pashinyan, met the Social Democrat Hunchakian Party (SDHP) Armenia Chairman, Setrak Ajemian, to discuss a variety of issues regarding the future of Armenia and the Armenian Diaspora.

Pashinyan stressed the importance of the SDHP as one of the traditional Armenian political parties with significant influence in the Diaspora. "Such contacts are very important to us so that we can hear the voice of a certain segment of the Diaspora, and through you, our Diaspora can hear our voice," he said.

"I have read your [SDHP] assessment of the elections and I am happy to see that they coincide with our assessments. We can assert that Armenia is irreversibly advancing on the path of democracy, which creates a new field and new opportunities for parties and political activity. I am pleased to see that you have acknowledged this," added Pashinyan.

In response Ajemian stated: "I congratulate our people, who, with their verdict, chose the correct path in this election. And we are pleased to see that you will once again become Prime Minister. Naturally, there are many difficulties, and accepting all that, we, as a party, are ready to cooperate with

the state, with the government, and in particular, with you. This is the determination of the Hunchakian party, within the Diaspora and within Armenia. Throughout our chapters, the mood is very positive; we are eager and optimistic for a bright future [in Armenia]."

"I remember very well the slogan 'There is a future' during the election period. And indeed, we are also convinced that there is a future. Of course, to build a future, the issue of internal cooperation needs to be addressed. Development of Armenia-Diaspora cooperation and consultations, in the light of common reflection, has been a concern for our Party. We wait for the advancement of this cooperation, with the hopes that it will progress the idea of creating a nationwide body," Ajemian added.

Ajemian concluded his public remarks by highlighting the need to establish a hopeful outlook towards the future and the varying challenges that Armenia faces today. "Without a positive outlook there is no hope in resolving such concerns."

Armenia-Diaspora relations and the strengthening of national capacities and capabilities, cohesion and prospects of further cooperation were also discussed during the meeting.

Armenian Ombudsman Sends Video of Conversation Between Aliyev and Erdogan's Wife to EU Leaders



YEREVAN (Armradio) — Armenia's Human Rights Defender Arman Tatoyan has sent the video of the conversation between the President of Azerbaijan, Ilham Aliyev and the First Lady of Turkey to the top leadership of the European Union –

the President of the European Council, the President of the European Commission and the High Representative for Foreign Affairs and Security Policy.

Continued on page 4

Armenian American Organizations Meet with Pasadena Mayor Victor Gordo



Pasadena Mayor Victor Gordo met with representatives of several Pasadena based Armenian American organizations. The meeting organized by Armenian Council of America's Pasadena chapter, included members from the Armenian Educational Benevolent Union, Gaidz Youth Organization, Armenian Athletic Association (Homenmen), Nor Serount Cultural Association, and Massis Weekly's editorial board.

In addition to addressing issues important to the Armenian American community such as education, affordable housing, continued reaffirmation of the Armenian Genocide in the local, state, and federal level, and the recent 44-day Artsakh war, the

organizations presented to the Mayor the broad range of activities as well as various philanthropic and community based programs implemented during the course of a regular year, as well as challenges and extra ordinary programs carried out in response to and during the current COVID-19 pandemic.

Mayor Gordo stressed the historical importance of the Armenian community in the City of Pasadena, the community's involvement within the City at all levels, the importance of charitable organizations during these unprecedented times, his commitment to assist the community and providing the highest quality of life for all Pasadena residents.

AUA's 29th Commencement: Unprecedented Double Ceremony for Classes of 2020 and 2021



YEREVAN – On June 19, 2021, the American University of Armenia (AUA) held its twenty-ninth commencement ceremony at the open-air Yerevan Velodrome. Due to the COVID-19 pandemic, the Class of 2020 did not have a commencement ceremony last year. As a result, this year's graduation saw off both the Class of 2020 and the Class of 2021. It was the first AUA commencement ceremony to take place outside of the University campus, during which over 900 students received their bachelor's and master's degrees. U.S. Ambassador to Armenia Lynne M. Tracy; USAID Armenia Mission Director John Allelo; RA Acting Minister of Education, Science, Culture, and Sport Vahram Dumanyan; AUA Trustees; and rectors and ambassadors of other universities were also in attendance. Family

members, friends, and AUA alumni came to celebrate the evening with the graduates.

Following AUA President Dr. Karin Markides' welcoming remarks, a moment of silence was held in honor of the heroes who lost their lives in the 2020 Artsakh War, including the AUA students Shavarsh Muradyan, Davit Uzunyan, Erik Hajikyan, Aziz Aghajanyan, Areg Gevorgyan, Hakob Hakobyan, and Davit Virabyan. Shavarsh and Hakob would have been part of the ceremony's graduating cohort.

Following the President's remarks, Dr. Lawrence H. Pitts, the Chair of AUA's Board of Trustees and the former Provost and Executive Vice President for Academic Affairs of the UC system, extended virtual greetings from the University of California. Presi-

Assemblymember Nazarian Announces \$11 Million Secured For Armenian Arts and Educational Programs in LA County

SACRAMENTO --

Assemblymember Adrin Nazarian (D-Sherman Oaks) is thrilled to announce \$11 million in state funding for three arts and educational institutions:

- \$9 million to establish a TUMO Center for Creative Technologies in the Southeast San Fernando Valley;

- \$1 million allocation to the University of Southern California Institute of Armenian Studies;

- \$1 million to the Lark Musical Society, a nonprofit that delivers high-quality classical music education, curating performances of music, song, and dance.

"I am very proud to bring California's backing to the mission of these three organizations, which continually demonstrate their passion and success in educating and investing in our youth. Whether it be the arts, education, or technology, all three organizations have demonstrated a record of helping our students succeed, and they will greatly benefit and enhance the experience of our diverse youth population for decades to come," said Assemblymember Adrin Nazarian.

The \$9 million secured to establish a TUMO Center for Creative Technologies in the Southeast San Fernando Valley of Los Angeles, in partnership with the City of Los Angeles and the USC Institute of Armenian Studies, would make it the first TUMO Center in the United States.

The TUMO Center for Creative Technologies is a free-of-charge educational program that puts teenagers in charge of their own learning. Founded by engineer and entrepreneur Sam and Sylva Simonian, TUMO's mission is to allow teens to maximize their potential by discovering their passions and building the skills and self-confidence required to shape their future.

The University of Southern California Institute of Armenian Studies, in support of their broad commitment to studying and recording the history of California and Los Angeles through the experiences and memories of California's large and diverse Armenian community, will also receive a \$1 million allocation to support a project to serve both academic and public policy interests. The integrity and value of a large collection of first-person stories for researchers, educators, and policymakers, will be irreplaceable and this funding will allow the Institute to expand the breadth and reach of these programs, benefiting various stakeholders in the state.

"The USC Institute of Armenian Studies Leadership Council expresses its heartfelt gratitude to Assemblymember Nazarian for his unwavering support and the funding for these two critical projects: the \$9 million for the United

dent Markides also thanked the U.S. Agency for International Development (USAID) for their continued support and partnership in development of the University, most recently in the opening of the USAID/ASHA-funded AUA Student Residence.

A touching commencement ad-



State's first TUMO Center for Creative Technologies which we will have the great pleasure of helping establish with the City of Los Angeles; and \$1 million in funding for our ongoing oral history project which will allow the Institute to expand the breadth and reach of these programs, benefiting various stakeholders in the state," said Charles Ghailian, Chairman of the Institute's Leadership Council.

Finally, \$1 million in funding will be going to Lark Musical Society, a nonprofit that for over 25 years has served the community in three significant ways: delivering high-quality classical music education; curating performances of music, song, and dance featuring classical and Armenian themes; and creating new classical music compositions. Along with coming capital improvements and expanded programming, thousands of new students will learn and hone their love of music from Lark for years to come.

"We thank the great State of California for its magnanimous support of the Lark Musical Society, a home for music and culture in the community. The support from the State of California has and will help us expand our programming and reach many more students and music lovers. Moreover, Lark's capital improvement project is more than 50 percent complete and will transform Lark Musical Society into a cultural center with a significant museum collection, expansive library, and new concert hall," said Vatsche Barsoumian, President of Lark Musical Society.

"We are grateful to California State Assembly Member Adrin Nazarian and his colleagues and remain humbled that they continue to keep Lark in their hearts, endorsing our efforts with action. Now, more than ever, we must invest in the education of our children, helping them become well-rounded citizens and future leaders. This generous funding will propel our growth and make a meaningful impact for years to come," said Andy and Hayde Torosyan, Co-Chairs of Lark Musical Society Board of Directors.

dress was delivered by keynote speaker USAID Administrator Samantha Power.

The commencement ceremony continued with inspiring valedictory addresses in Armenian and English by valedictorians Tamara Sedrakyan (BAB '21) and Anna Martirosyan (MSE '20).

USC | Tacori Center in Armenia



Imagine an academic center in Armenia hosting artists, policymakers, scholars, authors, practitioners, scientists from all over Armenia, Artsakh and the world – giving them time and space to work, to learn from each other, and to turn ideas into actions.

Twenty-five minutes outside of Yerevan, Armenia, in the serene village of Maiakovski, The USC Tacori Center will do just that.

The USC Tacori Center has piloted several programs in anticipation of an official opening later this year. No longer delayed by COVID-19, the

program that invited members of Armenia's design community and design specialists from six countries for a discussion on challenges and industry gaps. Local and international best practices were shared to improve the diversity and quality of the design industry in the country.

Critical Social Science Workshop | USC Tacori

In May 2021, graduate level students from Armenia gathered at the USC Tacori Center for a four-day Critical Social Science Workshop with



Center has already begun to serve as a hub for international scholars, students, artists, and journalists, offering a shared space for research, collaboration, and creation.

The Tacorian Family, founders of Tacori Jewelry, gifted the university the use of their large two-story house and continue to offer support for the programs that take place there. The house, and its adjacent mini-fruit orchard, are in a beautiful village named for Russian poet, playwright Vladimir Maiakovski (1893-1930).

The Institute is grateful to the Tacorian family for their vision at such a pivotal time in Armenia's and the Diaspora's future.

Dee-Zoom | USC Tacori

Already this year, five different program sessions took place between April and June.

First, there was Dee-Zoom, a

Professor Vicken Cheterian from Geneva's Webster University. The students participated in sessions on Armenia's geopolitical challenges in the context of domestic expectations and post-Soviet constraints.

During the same month, media representatives and professors gathered for three additional workshops to define methods of collaboration and to begin to set Armenia's research agenda – what are the urgent questions that need to be asked and answered?

The Center's future programs will invite participants from Gyumri, Vanadzor, Stepanakert and other regions, for art residencies, translation workshops, international student retreats, exhibitions, and conferences, all of which will examine some aspect of the social, cultural, educational, and political challenges facing Armenia, Karabakh, and the Armenian communities in the Diaspora.

Armenian Ombudsman Sends

Continued from page 2

"The video is a proof that all Armenian captives are being held hos-

tage in Azerbaijan for political bargaining and trade. Therefore, all the trials of the captives are false, and the arrests are a forbidden punishment,"

Calouste Gulbenkian Foundation Supports Armenian Teacher Development Program in Lebanon

LISBON — The Armenian Communities Department of the Calouste Gulbenkian Foundation has initiated a new teacher development program in Lebanon. Partnering with the Department of Education at the Lebanese American University (LAU), the Foundation



Teacher Development Programme in Lebanon

is supporting the custom-made In-Service Teacher Development program for teachers in Armenian schools who instruct in the Armenian language.

The Foundation developed in 2019 a comprehensive strategy specifically for Lebanon, focusing on schools, educational programs and the Armenian language. One of the important elements of the strategy is the need for a targeted program for teachers to encourage innovative educational approaches and promote critical thinking.

Designed and to be delivered by LAU's Department of Education, this innovative program is a two-year course that will incorporate theoretical and practical components. Topics will include curriculum and instructional design, educational theories, child psychology, special education and assessment of student learning. A strong practical segment will encourage teachers to apply the knowledge and skills developed during the coursework within the contexts of their classrooms.

"We must go beyond praising the heroic work of teachers; we must provide them with the necessary tools, the pedagogical knowledge and the skills needed to engage with students

in the 21st century," said Razmik Panossian, the Director of the Armenian Communities Department. He added, "The LAU program is a crucial step in this direction. By developing further expertise in the transmission of the Armenian language to future generations, teachers will enable students to think, communicate, discover and create in Western Armenian."

The development program will start in the fall semester of 2021. It will be free of charge, but with a limited number of places. Interested teachers must submit an application directly to the LAU. Participants will receive a certificate from LAU after successfully completing the program. At the conclusion of the project, a teaching manual will also be published, in Armenian and in English.

The In-Service Teacher Development program at the LAU is a major component of Calouste Gulbenkian Foundation's engagement with the Armenian community in Lebanon. Other initiatives include direct school support and the provision of IT equipment, grants for creative culture in Armenian, humanitarian aid, support to special education, university scholarships and funding for various other education or language related initiatives.

Armenian Economy Embarks

Continued from page 1

According to it, a strong import contraction outweighed the steep decline in export revenues, while macroeconomic stability was supported by maintained access to external financing, including under the augmented IMF program.

A ten-year Eurobond in the amount of US\$ 750 million, issued in January 2021, helped to refinance the existing Eurobond and boosted international reserves to an all-time high of US\$ 3.2 billion in February.

Inflation picked up to 5.9 per cent year-on-year in May 2021 on the back of higher international food prices and dram depreciation, following seven years of below-target inflation.

This prompted the Central Bank

Tatoyan says.

The letters demonstrate how the Azerbaijani authorities are misleading the international community, including the EU.

Special mention has been made of the anti-Armenian policy of the Azerbaijani authorities, as well as the political feelings of the Armenian soci-

ety, especially the families immediately affected by this political manipulation.

to increase the refinancing rate three consecutive times from 4.25 per cent in September 2020 to 6 per cent in May 2021, the first rate rises since early 2015. High frequency indicators of economic activity point to strong growth in April 2021, offsetting negative or slow growth in the first three months of the year and reaching 2.6 per cent year-on-year growth overall for the period January to April.

Growth is broad-based as almost all sectors posted positive developments, in particular the construction sector. The Armenian economy is projected to grow by 4.0 per cent in 2021 and by 5.0 per cent in 2022. Economic recovery depends on the speed of vaccinations, political stability and prompt continuation of structural reforms after the elections.

The letters highlight the importance of immediate return of the Armenian captives as a mandatory international requirement subject to unconditional fulfillment.

Փասատինա. Ս. Գրիգոր Լուսաւորիչ Շաբաթօրեայ Վարժարանի Սէջ Յնչեց Վերջին Ջանգը



Յունիս 12, 2021, Շաբաթ օր Փասատինա քաղաքի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ շաբաթօրեայ վարժարանը աշակերտական գողտրիկ հանդէսով մը աւարտեց իր դպրոցական տարին: Բացօթեայ հանդէսը տեղի ունեցաւ նոյնանուն եկեղեցու բակի մէջ:

Յայտագիրը սկսաւ Հայաստանի Հանրապետութեան քայլերգով: Ապա վարժարանի տնօրէն Նորայր Տատուրեանը տուաւ իր պատգամը: Ան ամփոփեց վարժարանի միամեայ գործունէութիւնը (ծառատունկ Հայաստանի մէջ, մասնակցութիւն Համահայկական հիմնադրամի հանգանակութեան, Արցախեան պատերազմի օրերուն վիրաւոր զինուորներու նիւթական աջակցութիւն, եւն.) Ան աւելցուց, թէ վարժարանը յաջորդ տարուայ համար պատրաստած է ազգանուէր ձեռնարկներու ալ աւելի ձոխ ծրագիր մը:

Վարժարանի 4-5 տարեկան սանիկները հանդէս եկան հայաշունչ երգերով, արտասանութեամբ ու պարով: Անոնց առաջնորդեց ուսուցչուհի Անի Մարսէլեանը: Աւագ դասարանները պատրաստած էին ազգային եւ հոգեւոր երգերու փունջ մը: Երգերը ղեկավարեց վարժարանի երգի ուսուցչուհի Մարալ Քիւրտեանը:

Հուսք բանքը կատարեց Վահէ Սրկ. Չարխուտեանը: Ան փոքրիկներուն հասկնալի լեզուով մը բա-

ցատրեց հայեցի դաստիարակութեան կարեւորութիւնը՝ հայապահպանման առաքելութեան մէջ: Ան շնորհակալութիւն յայտնեց բոլոր ծնողներուն, ինչպէս նաեւ վարժարանի տնօրէնութեան եւ ուսուցչական կազմին, որոնք հաւատարմով վարժարանի առաքելութեան՝ հակառակ ճամաճարակի պատճառած դժուարութիւններուն բաց պահեցին վարժարանը ու իրականացուցին անոր բոլոր ծրագրերը:

Ու վերջապէս եկաւ այդ ակնկալուած պահը՝ հնչեց դպրոցական տարուայ աւարտը ազգարարող վերջին զանգը: Ուսուցչուհիներ Մարալ Դաւթեանը եւ Ազնիւ Սէրապարեանը իրենց աշակերտներուն բացատրեցին, թէ անիկա վերջակէտ մը չէ, այլ՝ աւելի փաշտուն օրերու ձայնը: Աշակերտները եւ հանդիսատես հիւրերը իրարու հրաժեշտ տուին վերամուտին դարձեալ միանալու խոստումով: Յայտագիրը աւարտեցաւ Տէրունական աղօթքով:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Շաբաթօրեայ վարժարանը 5-15 տարեկան հայորդիներուն կը մատուցէ հայոց լեզուի դասեր: Անոր ծրագիրը կը ներառէ նաեւ երգ, պար, թատրոն, հայոց պատմութիւն եւ մշակոյթ: Արձանագրուելու համար հեռաձայնել եկեղեցու գրասենեակին՝ (626) 449-1523 կամ գրել վարժարանին՝ stgregorysaturdayschool@gmail.com

Հայաստան Արցախ Ֆոնտը \$7.4 միլիոնի բժշկական օժանդակութիւն հայթայթած է Հայաստանին ու Արցախին

Ապրիլէն Յունիս 2021-ի ընթացքին, Հայաստան Արցախ Ֆոնտը \$7.4 միլիոն արժողութեամբ մարդասիրական օժանդակութիւն հայթայթած է Հայաստանին ու Արցախին: Սոյն օժանդակութիւնը իրականացնելու համար, Հայաստան Արցախ Ֆոնտը \$7 միլիոն ընդհանուր արժէքով ղեկորայք եւ այլ պիտոյքներ ապահոված է Direct Relief կազմակերպութեան (\$4.7 միլիոն), MAP International կազմակերպութեան (\$2.2 միլիոն), եւ AmeriCares կազմակերպութեան (\$140,071):

Այս ժամանակաշրջանին մեծարժէք ապրանքներ նուիրած են նաեւ Ամերիկայի Հայ Աւետարանական Ընկերակցութիւնը (\$222,000) եւ Հատուրտ Գարակէօզեանի Յիշատակի Ընկերութիւնը (\$76,000):

Այս ժամանակաշրջանին նուիրուած ղեկորայքն ու բժշկական

պիտոյքները առաքուած են ՀԲԸՄ Քլոտիա Նազարեան Սուրիահայ Գաղթականներու Բժշկական Կեդրոնին, Արաբիկ Միացեալ Մանկական Բարեգործական Հիմնադրամին, ԱՐՏԱ Բարեգործական Հիմնադրամին, Քանաքեռ-Զէյթուն Բժշկական Կեդրոնին, Սուրացան Մանկական Գեղձաբանական Կեդրոնին, Սբ. Գրիգոր Լուսաւորիչ Բժշկական Կեդրոնին, եւ Հայաստանի ու Արցախի Առողջապահութեան Նախարարութիւններուն:

2021-ի առաջին վեց ամիսներուն, Հայաստան Արցախ Ֆոնտը հայրենիք ուղարկած է COVID-19-է վարակուած հիւանդներու խնամքին համար հրատապօրէն անհրաժեշտ դեղեր ու բժշկական պիտոյքներ, ինչպէս նաեւ դեղեր ու բժշկական

Անավերջի Հանդիսութիւն Սիեթլի Սուրբ Յարութիւն Վարժարանում



Յունիսի 20-ին աւարտուեց եւս մէկ ուսումնական տարի. ամավերջի այդ օրը Սիեթլի Սուրբ Յարութիւն Դպրոցում աւանդական տօնախմբութիւն էր:

Հրաժեշտի հանդէսը սկսուեց նախակրթարանի աշակերտների երգերով ու արտասանութեամբ: Ներկաները վայելեցին նախակրթարանի ուսուցչուհիներ Նաիրա Յարութիւնեանի եւ Արմինէ Պետրոսեանի պատրաստած գեղեցիկ եւ ուսուցողական յայտագիրը, որը իրենց գործին անսահմանօրէն նուիրուած ուսուցչուհիների աշխատանքի արգասիքն էր:

Բուռն ծափահարութիւնների արժանացան նաեւ փոքրիկները, որոնք ներկայացրին իրենց ու-

միմեանց հարցեր էին տալիս եւ ըստ պատասխանների որոշում էր, թէ ով է ամենէն հնարամիտը: Հետաքրքիր գաղափարը կեանքի էին կոչել ուսուցչուհիներ Գրետա Գաբրիէլեանը եւ Հռիփսիմէ Մելքումեանը, որոնք մանկավարժական բժանդիր աշխատանքի շնորհիւ կարողացել էին հասնել լաւագոյն արդիւնքի:

Հանդիսութեան աւարտին Սուրբ Յարութիւն Եկեղեցու հովիւ Տէր Վազգէն քահանայ Բոյաջեանի ձեռամբ եւ սարկաւազների ու դպրաց դասի անդամների մասնակցութեամբ կատարուեց վարժարանի տնօրէնութեան, ուսուցչաց կազմի, աշակերտութեան եւ ծնողների օրհնութեան կարգ: Արժգ



ուսուցչուհու՝ Սիլվա Ղազարեանի պատրաստած փոքրիկ հանդէսը:

Տնօրէնուհի Ալինա Սահակեանը, նախ, շնորհակալութիւն յայտնեց ուսուցչուհի Ս. Ղազարեանին, որը ոչ միայն կրթում ու դաստիարակում է երեխաներին, այլև նրանց է փոխանցում ազգային եւ համամարդկային արժէքները, որը ինքը կրում է իր մէջ: Ա. Սահակեանը աշակերտներին յանձնեց գովասանագրեր՝ Այբբենարանի դասընթացը յաջողութեամբ աւարտելու կապակցութեամբ:


Ապա բեմ բարձրացան միջին խմբի աշակերտները, որոնք ներկայացրին Յովհաննէս Թումանեանի «Մի կաթիլ Մեղր» ստեղծագործութեան բեմադրութիւնը, ինչպէս նաեւ դպրոցին եւ ընտանիքին վերաբերող գուարձալի մանրապատումներ:

Միջին խմբի ուսուցչուհու՝ էլինէ Ղալամբարյանի կատարած մեծածաւալ աշխատանքը բարձր գնահատուեց եւ տնօրէնուհու, եւ ներկաների կողմից:

Ամավերջի հանդէսների շարքն աւարտուեց Աւագ խմբի աշակերտների ներկայացրած բացառիկ յայտագրով, որը կոչում էր «Հնարամիտների Ակումբ»: Երեխաները

Տէր հայրը իր եւ Ծիսական Խորհրդի կողմից անուն առ անուն շնորհաւորեց աշակերտներին, շնորհակալութիւն յայտնեց վարժարանի ուսուցչաց կազմին՝ ընդգծելով, որ առանց նուիրումի, առանց սիրոյ հնարաւոր չէ կատարել մանկավարժական աշխատանք: Տէր հայրը նչեց, որ պէտք է բարձր գնահատել Սուրբ Յարութիւն վարժարանի ուսուցիչների կատարած աշխատանքը, ապա անուն առ անուն իր շնորհակալութեան եւ օրհնութեան խօսքերը յայտնեց տնօրէնուհուն՝ Ալինա Սահակեանին, փոխտնօրէնուհուն՝ Սիլվա Ղազարեանին եւ ուսուցչական կազմին՝ էլինէ Ղալամբարյանին, Գրետա Գաբրիէլեանին, Հռիփսիմէ Մելքումեանին, Նաիրա Յարութիւնեանին, Արմինէ Պետրոսեանին, Ժաննա Իսախանեանին, Լուսինէ Մարտիրոսեանին, որոնց անուրանալի ծառայութեան շնորհիւ օտար ափերում ապրող մեր երեխաները սովորում են ոսկեղէնիկ հայոց լեզուն, ստանում՝ հայեցի դաստիարակութիւն: Դիմելով ծնողներին՝ Տէր հայրը քաջալերեց նրանց, որ շա-

Փայլան Ահազանգած Է, Թէ Թուրքիոյ Մէջ Վնասած ԵՆ 18-րդ Դարու Հայկական Եկեղեցին



Թուրքիոյ պատմական հայկական բնակավայրերուն մէջ գանձ որոնող արկածախնդիրները վնասած են Կեսարիա գտնուող 18-րդ դարու Սուրբ Թորոս հայկական եկեղեցին: Ինչպէս հաղորդած է «Արմէնիփրես», ղէպլի մասին ահազանգած է Թուրքիոյ մեծ լիսի հայ պատգամաւոր, քրտամէտ «Ժողովուրդներու դեմոկրատական» կուսակցութեան անդամ՝ Կարօ Փայլան:

Եկեղեցւոյ ներսը երկու մեթրանոց փոս առաջանալու փաստի առթիւ Փայլան Թուրքիոյ մշակութի եւ զբօսաշրջութեան նախարար՝ Մեհմետ Նուրի Էրսոյլին հասցեագրուած հարցադրում ուղարկած է մեծ լիս:

Հարցադրման մէջ Փայլան նշած է, որ հին հայկական եկեղեցին, չնայած որ այդ տարածաշրջանի պատմական ու մշակութային կարեւոր կառուցներէն է, տասնեակ

տարիներու անուշադրութեան հետեւանքով մատնուած է բախտի քմահաճոյքին, իսկ այսօր դարձած է բարբարոսներու ու գանձ որոնողներու յարձակման թիրախ:

Այս բովանդակութեամբ Փայլան հարցուցած է նախարարին, թէ ինչո՞ւ եկեղեցին չ'առնուի պաշտպանութեան ներքեւ, ինչո՞ւ այն վնասող անձերուն դէմ հետաքննութիւն չի սկսիր: Պատգամաւորը նաեւ հետաքրքրուած է, թէ ինչո՞ւ կառավարութիւնը անձայն կը մնայ քրիստոնեաներուն պատկանող մշակութային ժառանգութեան դէմ արկածախնդիր գանձ որոնողներու գործողութիւններուն դէմ, ինչո՞ւ անոնք չեն պաշտպանուիր: Քրտամէտ կուսակցութիւնը ներկայացնող Փայլան հետաքրքրուած է նաեւ, թէ արդեօք նախարարութիւնը կը պատրաստուի վերանորոգել Կեսարիոյ Սուրբ Թորոս հայկական եկեղեցին:

Արարական Աշխարհ Պաղեստինցիներու Ցոյցերը Իրենց Իշխանութիւններուն Դէմ

ԱՐ լրատու գործակալութեան հաղորդումներուն համաձայն օրեր շարունակ բողոքի ցոյցեր տեղի կ'ունենան Արեւմտեան Ափի պաղեստինցիներու կողմէ: Անոնք ապահովութեան ոյժերու հետ բախումներ ունեցան, բողոքելու համար երկրի իշխանութիւններուն դէմ, որոնք ձերբակալած ու խոշտանգումներու ենթարկած էին ընդդիմադիր խօսնակ մը:

Պաղեստինեան իշխանութիւններու մայրաքաղաք Ռամալլահի պետական կառուցներու առջեւ ելոյթ ունեցող ցուցարարները վանկարկումներ կատարեցին նախագահ Մահմուտ Ապպասի դէմ, որուն ոստիկանները ձերբակալած եւ ծեծի ենթարկած էին ընդդիմադիր գործիչ Նիզար Պանասթը, իր ձերբակալութենէն անմիջապէս ետք:

Արդարեւ, ցուցարարները որոնք պաղեստինեան դրօշ եւ նահատակ Պանասթի նկարը կը կրէին, պատգամ ուղղեցին Ապպասին որ հրաժարի իր պաշտօնէն: Ցուցարարները երբ Ապպասի նստավայրը կ'ուղղուէին բախումներ ունեցան իր ապահովութեան ծառայողներուն եւ համակիրներուն միջեւ, որոնք արտասուաբեր ումբեր եւ անզգայնութեան նունակներ արձակելով ցիրուցան ըրին գանոնք:

Քիչ ետք հակացոյց մը տեղի ունեցաւ Ապպասի համակիրներու

կողմէ, որոնք կը վանկարկէին՝ «Ժողովուրդը Ապպասը կ'ուզէ որպէս նախագահ»: Յաջորդող օրերուն ցոյցերը շարունակուեցան: Մասնաւորաբար Հէպրոնի մէջ, Պանասթի յուղարկուածութեան պահուն եւ Ռամալլայի մէջ, ցուցարարները վանկարկումներ կատարեցին պաղեստինեան իշխանութիւններուն դէմ եւ շատեր կրակոցներ արձակեցին օդին մէջ: Հարիւրաւորներու ցոյց մըն ալ տեղի ունեցաւ Երուսաղէմի «Ալ Աբսա» մզկիթին առջեւ:

Նշենք նաեւ որ ընդդիմութիւնը հետզհետէ սկսած է զօրանալ Ապպասի վարչակարգին դէմ, որ անցնող 30 տարիներու ընթացքին, չի կրցաւ իրականացնել Պաղեստինի անկախութիւնը: Իսկ Եւրոպական Միութիւնը, այլ երկիրներ եւ ԱՄՆ-ը հարիւրաւոր միլիոնաւոր տոլարներ ու օժանդակութիւն կատարեցին պաղեստինցիներուն, ապահովութեան անհրաժեշտ սարքեր տրամադրելով եւ մասնագէտներ մարզելով ուղեցին աջակից դառնալ:

Նախապէս դիմատետրով եւ այլ փաստագրութիւններով ու տեսանկյուններով Պանասթի ապացուցած էր, որ պաղեստինեան ապահովութեան ոյժերը՝ սերտ համագործակցութիւն ունեցած են Իսրայէլի հետ: Այս երեւոյթը դաւաճանու-

Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկուծինը Նեցուկ կը Կանգնի Լիբանանի Մէջ Ուսուցիչներու Վերաորակաւորման Ծրագրին



Teacher Development Programme in Lebanon

Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան հայկական բաժանմունքը Լիբանանի մէջ ուսուցչական վերաորակաւորման նոր ծրագիր մը նախաձեռնած է: Լիբանանի Ամերիկեան Համալսարանին (LAU) հետ գործակցաբար, Հիմնարկութիւնը նեցուկ կը կանգնի հայկական դպրոցներուն մէջ հայերէնով դասաւանդող ուսուցիչներու յատկացուած վերաորակաւորման ծրագրին:

2019-ին Հիմնարկութիւնը Լիբանանի համար նախատեսուած համընդհանուր ռազմավարութիւն մը մշակած էր, կիզակէտ ունենալով՝ դպրոցները, դաստիարակչական զարգացումը եւ հայերէնի ամրապնդումը: Այդ ռազմավարութեան կարեւոր բաղադրիչներէն մէկն է ուսուցիչներու ուղղուած յատուկ ծրագրի մը անհրաժեշտութիւնը, քաջալերելու համար նորարար մանկավարժական մօտեցումներն ու քննադատական մտածողութիւնը:

Յայտագիրը պատրաստուած է Լիբանանի Ամերիկեան Համալսարանի կրթական բաժանմունքին կողմէ եւ պիտի ընդգրկէ երկու տարուան վրայ երկարող դասընթաց մը, տեսական եւ գործնական բաղադրիչներով: Դասաւանդուելիք նիւթերէն կարելի է նշել հետեւեալները՝ դասաւանդման եղանակներ, մանկավարժական տեսաբանութիւն, մանկական հոգեբանութիւն, յատուկ կրթութիւն եւ ուսումնառութեան ընթացքի գնահատում: Ծրագիրը նաեւ կը բովանդակէ ծաւալուն կիրառական բաժին մը, որ պիտի քաջալերէ ուսուցիչները, որպէսզի իրենց նորայայտ գիտութիւնը կիրարկեն դասարաններէն ներս:

«Ուսուցիչներուն կատարած հերոսական աշխատանքը չի բաւեր գովաբանել», կ'ըսէ Ռազմիկ Փանոսեան, Հայկական բաժանմունքի տնօրէնը: «Պէտք է իրենց անհրաժեշտ հմտութիւն եւ մանկավարժական գիտելիքներ հայթայթել, որպէսզի իրենց կարգին ներգրա-

ւեն աշակերտները՝ քայլ պահելով 21-րդ դարու մանկավարժական պարտադրանքներուն հետ»: Ու կ'աւելցնէ. «Լիբանանի Ամերիկեան Համալսարանի ծրագիրը վճռական քայլ մըն է այդ ուղղութեամբ: Գալիք սերունդներուն հայերէն դասաւանդելու իրենց կարողութիւնը զարգացնելով, ուսուցիչները պիտի քաջալերեն աշակերտները, որպէսզի արեւմտահայերէնով մտածեն, հաղորդակցին, յայտնաբերեն իրենց տաղանդը ու ստեղծագործեն»:

Վերաորակաւորման ծրագիրը պիտի սկսի 2021-ի աշնան: Պիտի ըլլայ անվճար, բայց նախատեսուած մասնակիցներու թիւը սահմանափակ է: Հետաքրքրուող ուսուցիչները պէտք է դիմեն ուղղակի Լիբանանի Ամերիկեան Համալսարանին: Ընթացքը յաջողութեամբ աւարտողները համալսարանէն պիտի ստանան համապատասխան վկայական մը:

Դասընթացքի աւարտին, ուսուցիչներուն ուղղուած գրքոյկ մը պիտի հրատարակուի, հայերէն եւ անգլերէն լեզուներով:

Ուսուցիչներու վերաորակաւորման այս ծրագիրը Լիբանանի մէջ Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան ներդրումին գլխաւոր բաղադրիչներէն մէկն է, այլ նախաձեռնութիւններու կողքին: Հիմնարկութիւնը նաեւ տրամադրած է նիւթական նպաստ եւ համակարգչային գործիքներ՝ ուղղակի դպրոցներուն, հայերէնով նորարար մշակոյթ քաջալերող մրցանակներ, մարդասիրական օժանդակութիւն, յատուկ կրթութեան ուղղուած օգնութիւն, համալսարանական կրթաթոշակներ, մանկավարժական կամ լեզուական գանազան նախաձեռնութիւններու յատկացումներ:

Այս ծրագիրին եւ այլ նախաձեռնութիւններու մասին յաւելելու տեղեկութիւններու համար այցելել այս կայքէջը <https://gulbenkian.pt/armenian-communities> եւ անդամագրուել մեր լրատուին:

թեան համագոր կը համարուի ինչպէս նաեւ փտածութեան երեւոյթ: Պանասթը վերջին 15 տարիներու տեղի ունեցած առաջին պաղեստինեան ընտրութեան թեկնածու էր, կարգ մը այլ ընդդիմադիրներու հետ:

Պաղեստինեան իշխանութիւնները յայտարարեցին որ կազմուած

է բարձր մակարդակի կոմիտէ մը, հետագօտելու Պանասթի մահուան պատճառները: Իր ընտանիքին համաձայն ինք՝ խոշտանգումներու զոհ գացած է բանտարկութեան ընթացքին: Դատաբժշկական տեղեկագրին համաձայն իր մահը պատահած է «անբնական» կերպով...:

Հայ Տպագիր Մամուլին Տագնապը



ՎԱՐՈՒԺ ԹԵՆՊԵԼԵԱՆ

Տպագիր հայ մամուլը կ'ապրի տագնապ մը եւ այդ տագնապին մէկ կարեւոր պատճառը թերեւս նոյնինքն արդիականութեան եւ անցեալէն ժառանգուած իտէլալականութեան բախումն է, յաճախ մէկը միւսին զոհելու մտտեցումին կամ անդիմազիծ ներդաշնակումի փորձերուն հետեւանքով:

Նախ պէտք է նշել որ տպագիր մամուլի տագնապը համաշխարհային տագնապ է յատկապէս համացանցի զարգացումէն ետք մամուլի թուայնացումին եւ բոլորին մատչելի դարձած լրատու կայքէջներուն (որակաւոր, անորակ եւ երբեմն զուտ բամբասանքային տարբերակներով) անհամեմատ տարածումին պատճառով:

Ինչպէս աշխարհի բոլոր ժողովուրդները, մեր ժողովուրդն ալ կը գտնուի արդիականութեան եւ թուայնացումի մթնոլորտի մէջ, բնականաբար հեռաձայն, նկարահանման անձնականացում, videoներու եւ նկարներու անսանձ շրջագայութիւն, Facebook, Twitter, Instagram եւ հազարումէկ միջոցներ՝ մատչելի բոլորին:

Այս պայմաններուն մէջ, տպագիր հայ մամուլին պահպանողական, զգուշ, անցելապաշտ, տակաւին ոչ արհեստավարժ կամ կէս արհեստավարժ իրավիճակը որոշ հեռավորութիւն մը ստեղծած է իր եւ հայ ընթերցողին միջեւ: Անցեալի ժխտումին մասին չէ խօսքը, այլ առանց ներկային շարժումներու եւ պատուաստելու՝ աւանդական միջոցներով աւանդական ոճին կառչած մնալու ուղղութեան մերժումն է:

Տակաւին չենք խօսիր ազատ խօսքի եւ ազատ քննարկումի բացակայութեան կամ կաշկանդումներուն մասին:

Բնական է, երբ մամուլին եւ ընթերցողին միջեւ բաց մը ստեղծուած է, ընթերցողը չի սնանիր մամուլին մէջ տեղ գտած գրութիւններով եւ նոյնքան կարեւորութեամբ՝ մամուլը չի սնանիր ժողովուրդին հակազդեցութեամբ, որովհետեւ ժողովուրդին հակազդեցութիւնը կարեւոր ազդակ է հրապարակագրութեան յառաջդիմութեան համար:

Նշուածին կողքին՝ կա՛յ նաեւ ոճի եւ լեզուի "անհասկացողութիւն" մը՝ գրութիւններուն եւ ընթերցողին միջեւ:

Մամուլը, առաջին հերթին, խօսքի բեմ է, դպրոց մը՝ հայ ժողովուրդի պարագային: Խօսք, որ պիտի արտայայտէ ժողովուրդին տենչերը, պիտի խօսի անոր սրտին ու մտքին, անոր պիտի

փոխանցէ հայօրէն մտածելու եւ հայօրէն ապրելու աւելի, անոր պիտի ծանօթացնէ ազգային եւ միջազգային կեանքի մանրամասնութիւնները, պիտի ընդգծէ տարբերութիւնները եւ, մանաւանդ՝ Հայաստանի պայքարին պիտի առաջնորդէ իր ընթերցողները: Անշուշտ այս բոլորին առընթեր, իբրեւ մարդ եւ իբրեւ հայ՝ ինքնագիտակցութեան եւ ինքնավերլուծումի առաջնորդող խօսքերն ալ մեծ կարեւորութեամբ կը ներկայանան:

Այսօր տպագիր հայ մամուլը որքանով կը յաջողի այդ յանձնառու խօսքը հասցնելու ժողովուրդին եւ որքանով տեղեակ է անոր հակազդեցութեան:

Որակի մասին խօսելով՝ կը նկատենք, որ մեր նոր մտաւորականութիւնը, յանձնառու խօսքի մասին խօսելով հանդերձ, չի մտածեր, որ այդ խօսքը արդեօք հասա՞ւ ընթերցողին, արդեօք ի՞նչ հակազդեցութիւն ապրեցաւ ան, ի՞նչ բան փոխուեցաւ անոր մէջ, ի՞նչ բան պէտք է աւելցնել՝ ստեղծուած առողջ մթնոլորտ մը աւելի պայծառացնելու համար: Այսօր, մտաւորական հասկացողութիւնը շատ բան կորսնցուցած է իր իմաստէն: Մտաւորականը ինքզինք վերածած է ժողովուրդէն խզուած մտածող անձի մը, որ իր մտային կարողութիւններով կը տեսնէ ու կը վերլուծէ հարցերը, բայց զանոնք ժողովուրդին կը փոխանցէ այնպիսի՝ ձեւով մը, որ յաճախ կը ստիպուինք մտածելու, որ կա՛մ միայն ինքն իրեն համար կը գրէ կամ ալ սակաւաթիւ անձերու համար. երբեւոյժ մը, որ ժխտումն է յանձնառու խօսքին:

Այս երեւոյթը ընդհանրապէս կը դրսեւորուի կիրարկուած ոճի եւ լեզուի անհասկանալիութեան ընդմէջէն: Յանձնառու մամուլին խօսքը պէտք է հասկցուի զանգուածին կողմէ: Այս հաստատումն մեկնելով, յանձնառու խօսքի փոխանցման ժամանակ, նկատի պէտք է առնենք ընթերցող զանգուածին մտաւորական պաշարը եւ լեզուական յատկութիւնները: Ի՞նչ արժէք ունին ամէնէն որակաւոր եւ լուրջ յօդուածներն անգամ, երբ անոնք չեն հասկցուի ժողովուրդին կողմէ: Անշուշտ ըսել չենք ուզեր, որ հարցերուն պէտք է մօտենալ փողոցի լեզուով եւ չափանիշներով (հակառակ անոր, որ յաճախ այս ձեւն ալ օգտակար է), այլ յանձնառու խօսքը պէտք է փոխանցել պարզ լեզուով եւ յստակ ոճով: Պարզութիւնն ու յստակութիւնը անորակութիւնն չեն ենթադրեր, այլ՝ հասկնալիութիւնն: Վերջ ի վերջոյ, նոյն միտքը, նոյն գաղափարը կարելի է յայտնել երկու ձեւով՝ կա՛մ պարզ

ու յստակ, կա՛մ ճոռոմաբանութեամբ, դարձդարձիկ ու անյստակ ոճով: Դժբախտաբար, խորաթափանց քննարկումներն ու վերլուծումները յաճախ կը շփոթուին ուռուցիկութեան եւ պարզ բառերու փոխարէն՝ բառարանային հոմանիշերու գործածութեան հետ:

Այս պայմաններուն մէջ զարմանալի պէտք չէ թուի եւ դատապարտելի պէտք չէ նկատուի մեր ժողովուրդին կողմէ յաճախ կրկնուող "հայերէն գրեցէք, որ հասկնանք" պահանջը: Այս տեսակէտը անշուշտ չ'արդարացնէ հայ մամուլին մէջ դրսեւորուող միւս ծայրէջողութիւնը, որ անբծախնդիր ու թափթփած ոճով եւ լեզուով կը ներկայացնէ իր խօսքը, յաճախ ա՛յնքան անխնամ, որ կրկին անհասկնալի կը դառնայ, անորոշութեան կը մատնէ մեր ընթերցողները եւ որակին հետ կը գոհէ նաեւ խօսքին իմաստը:

Իսկ արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի խառնուրդ լեզուով արտայայտող գրեւծեւր աւերներ կը գործէ Երեւանի կողմէ կը գրէ անգլերէնի եւ արաբերէնի խառնուրդ լեզուով: Բաղդատութիւնը թերեւս ծայրայեղական է, բայց արեւմտահայերէնն ու արեւելահայերէնը նոյն ժողովուրդի տարբեր լեզուներն են՝ շարահիւսական ու իմաստային տարբեր համակարգով:

Անհրաժեշտ է մատնանշել նաեւ մեր հաւաքական աղքատութեան ծնունդ առած հիմնական երեւոյթ մը՝ արեւմտահայերէնի տիրապետած եւ հրապարակագրութեան զանազան սեռերու մէջ մասնագիտացած խմբագիրներու սակաւութիւնը: Հաւաքական աղքատութեան այս ակնարկումը սակայն, ոչ մէկ ձեւով արդարանալի

կը դարձնէ ստեղծուած իրավիճակին պահպանումը, որ կը շարունակուի: Վերջ ի վերջոյ, հայ կեանքին մէջ նաեւ կան ազդու ներկայութիւն ունեցող, յանձնառու կազմակերպութիւններ, որոնք, հայ ժողովուրդի գերագոյն շահերուն հետապնդման առաջադրանքով՝ յանձնառու խօսքի վարպետներու պատրաստութիւնը իրենց առաջնահերթ մտահոգութիւններէն մէկը պէտք է նկատեն: Ժամանակի հոլովոյթը եւ արդիականութեան հրամայականը մեզ պէտք է բերած ըլլան ա՛յն եզրակացութեան, որ սիրողական աշխատանքով (կամ անոնց զոհողութեամբ միայն), կարելի չէ հաւաքական կառույցները պահպանել եւ ազդու նուաճումներ իրագործել: Եւ այս կառույցներուն շարքին հիմնական տեղ կը գրաւէ հայ տպագիր մամուլը:

Իր ծայրահեղական նկարագրով, մեր ժողովուրդը երբ կ'որոշէ նորութիւն մը որդեգրել, ամէն գնով կը փարի անոր: Մեր ժողովուրդին կարեւոր համեմատութիւնը կը ստորագնահատէ հայ թերթը, որովհետեւ իր գնահատումով հայ տպագիր թերթը հնութիւն կը բուրէ, »ծերերու« թերթ դարձած է միայն կ'ըսէ, եւ գայն կը փոխարինէ թուայնացած մամուլով կամ օտարալեզու թերթով:

Հայ տպագիր մամուլի պարզած վիճակին մասին եղած այս մատնանշումներով, համապարփակ վերլուծում մը կատարած ըլլալու եւ բոլոր թերութիւնները, դժուարութիւնները եւ լուծման առաջադրանքները սպառած ըլլալու յաւակնութիւնը չունինք, այլ իբրեւ փորձ՝ մատը ճիշդ վէրքին վրայ դնելու առաջարկ մը կ'ընենք հայ տպագիր մամուլի տագնապով մտահոգ շրջանակներուն:

Եթէ 200,000 Ձայն Են Կորցրել

Շարունակուած էջ 2-էն

Թիւնից խուսափել, կամ Նիկոլ Փաշինեանից անձնական վրէժ լուծել, Հայաստանը սուվերենութիւնից զրկելը, ապա այդ ամէնի վերաբերեալ շատ դժուար է որեւէ քաղաքական գնահատական տալ: Հիմա իրենք կարող են յայտարարել, որ 200 միլիոն ձայն է իրենցից տարուել, բայց դա որեւէ կերպ քաղաքական չէ եւ դրան քաղաքական մեկնաբանութիւն տալը լուրջ չէ: Այդ ուժը խորհրդարանում

յայտնուելով էլ կը շարունակի մնալ ապաքաղաքական ուժ», -ընդգծեց Քոչինեանը՝ չբացատրելով, որ ՄԴ-ն կարող է արկածախնդրութեան գնալ եւ որոշումներ կայացնել՝ ունենալով ինչ-ինչ մարդկանց հովանաւորչութիւնը: «Բայց դրա կանխարգելման գլխաւոր ճանապարհն էլ իշխանութեան յայտարարած պողպատէ մանդատն է: Իշխանութիւնը չպէտք է յապաղի այն գործածել», -եզրափակեց Քոչինեանը:

«civic.am» կայքէջ

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 * \$100,00 (first class) for USA

\$ 125,00 (Air Mail) for Canada.

\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel :-----

Email: -----

Սրբոց Թարգմանչաց Վարդապետացն Մերոնց

«Ճանաչել Ձիմաստութիւն եւ Ձիւրատ, Իմանալ Ձբան Յանճարոյ»
Մեսրոպ Մաշտոց



ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

Հայոց «Առաքելական Եկեղեցի»-ն, «Եկեղեցու Հայրերի» շարքին էր դասել՝ հոգեւոր, մշակութային ու լուսաւորութեան գործի նուիրեալներ՝ «Թարգմանչաց» գործիչներին: Տարին երկու անգամ տօնախմբում են նրանց սրբալոյս յիշատակը: Յունիսի վերջին, Յուլիսի սկզբներին, Ամասունի նախարարական տան՝ Օշական աւանում, յիշատակում են իմաստուն վարդապետներ՝ Սահակ Պարթեւի ու Մեսրոպ Մաշտոցի տօնը: Իսկ, իւրաքանչիւր տարուէս Հոկտեմբերի 11-ին՝ տօնախմբում են Սահակի Պարթեւի ու Մեսրոպ Մաշտոցի թարգմանչաց աշակերտների «Սրբոց Թարգմանչաց Վարդապետացն Մերոնց» տօնը:

Արմինա-Հայաստանում մարել էր յուշը՝ Արամէ արքայի Արա-Արաեան տոհմից Սարտուրի Ա. թագաւորի որդի Անուշաւան-Իշպուլիսի-ի: Ասորեստանի արքունիքում պատանդ եղած ատեն շփուել էր պալատի գիտական-գրական շրջանակների հետ, ծանօթացել «Մեկագրութեան» արուեստի հնարքներին: Խօսքով ու գործով հանճարեղ Իշպուլիսի-Անուշաւան Արմինա թագաւորը՝ նշանաւորուել էր որպէս իմաստուն քուրմ-արքայ: Իր հանճարեղ մտալոյսով, Ասորեստանի 3000 սեպագիր խրթին նշանների համակարգը խիստ կրճատել էր, ապա ստեղծել էր թագաւորած Արմինա երկրի մայրենի լեզուի միայն վեց հարիւր սեպագիր նշանակագրերով խօսուն տարբերակը: Իշպուլիսի թագաւորը, իրենց Արմինա երկրի նախնիների խօսակցական լեզուն վերածել գրաւոր լեզուի: Իշպուլիսին ու Արա-Արաեան տոհմի նրա յաջորդ գահակալները, այդ նոր սեպագիր գրերով կատարել իրենց նուաճումների արձանագրութիւնները, լեզուն էլ Ասորերէնի փոխարէն իրենց երկրի մարդկանց խօսած լեզուով: Այդ այն լեզուն էր, որ հագար-հագար տարիներ յետոյ էլ Արմինա երկրի մարդիկ պիտի խօսէին, Հայերէն, «Գրաբար» լեզուն էր: Արմինա-Հայ որոշ պատմաբաններ, օտարի խօսքով դեռեւս շարունակում են Արմինա-Հայ Արամէ-Արամ թագաւորի հիմնադրած համադաշնային Արմինա պետութիւնը անգոյ «Ուրարտու-Ուրարտու» ան-

ուանել: Ասորեստանի արքաներ, իրենց արձանագրութիւններում «Արմինա» Արմինա-Հայ մարդկանց հրաբուխների կրակ երկիրը, իրենց աքթատերէն լեզուի «աշտ-ար» կրակի իմաստով՝ Ուր-աշտ-տու, Ուր-ար» տու անուանել:

Այդպէս էր, որ Տուշպա-Վան ոստանի միջնաբերդ տանող քարէ դրան ժայռին գրել են իրենց «Հաշտից» ցուցակի անունները, գլխաւորութեամբ իրենց միաստուածութեան գաղափարը խորհրդանշող Խալդէի-Հայկ աստուծոյն: Դուռ, որ իրենց հեռու Սասուն երկրի նախնին վշտացած աշխարհից, իր նժոյգով մտել քարանձաւ, այն փակել իր վրայ: Քրմական պատգամախօս Անուշաւան-Իշպուլիսի արքան, սօսեաց անտառակի ծառերի սօսափրկից արդեօք չէ՞ր գուշակել, որ թամբած ձին հեծած իրենց նախնին պատուել էր քարէ դուրը, խաղաղութեան ու սիրոյ ջահի լոյս վառելու աշխարհի մարդկանց սրտերին:

Մարել էին նաեւ Արմինա երկրի նախնիների հաւատքի գերագոյն աստուծոյ ատենադպիր, արուեստների, բանաստեղծութեան, դպրութեան, գիտութիւնների, գրի հովանաւոր Տիր աստուծոյ ուսմունքի իմաստութեան յուշը: Ասացէ՛ք, ատենադպիրը առանց գրերի կը լինէ՞ր...: Արմինա երկրի մարդկանց բանաւոր խօսքը՝ «Գրաբար» ոսկեղենի Հայերէն լեզուն էր՝ նրա հետ առընթեր դպրոցներում ուսուցանել էին նաեւ Յունարէն, Ասորերէն, Պահլաւերէն, Պարսկերէն:

Հայոց Խոսքով Մեծ Գ. թագաւորի ատեն արքունիքում ծառայել էր Մեսրոպ անունով մի գեղջուկ Արմինա-Հայ մարդ, որը 361 թուականին ծնուել էր Տարօս գաւառի Հացեկաց գիւղում, որդին Վարդան անունով քրմապետի: Մանկութեան տարիքում լաւ կրթութիւն էր ստացել, ուսանել Յունարէն, Պարսկերէն, Ասորերէն լեզուներ, երեւի Ներսէս Մեծ կաթողիկոսի հիմնադրած դպրոցներից մէկի աշակերտն եղել: Ծննդավայրի դպրոցում ուսումը աւարտելուց յետոյ գնացել Այրարատ նահանգ, արքունիքում գինուորական ծառայութեան մտել: Ժամանակի հանրաճանաչ լեզուներին տիրապետող տարօնցու հոգում չէր մարել գրասիրութիւնը, ջանասէր աշխատասիրութեան շնորհիւ դարձել թա-

գաւորական դիւանի դպիր-գրագիր: Արքունիքում ծանօթացել էր աշխարհիկ կարգերի հետ, գրագրի պաշտօնով վարչական աշխարհն էր իր առաջ բացուել: Տարօնցի Մեսրոպի համար այն երկրի քաղաքական ու ներքին կեանքը ճանաչելու լաւ առիթ հանդիսացել: Պալատում պաշտօնավարութիւնը չէր բռնադատել Մեսրոպի հոգին: Նոյն Խոսքով Մեծ Գ. թագաւորի ատեն, նորէն ասպարէզ էր ելել Լուսաւորչի տոհմը, կաթողիկոսական աթոռին բազմել էր Սահակը: Նրա վարած ճգնաւորական կեանքը մեծ ազդեցութիւն էր գործել արքունի դիւանի դպիրի վրայ: Մեսրոպ թողել էր դպիր-գրագիրի պաշտօնը, հոգեւորականի կոչում ստանալով սկսել ճգնաւորական կեանք վարել:

Մեսրոպ ճգնաւորը չէր հեռացել աշխարհից, մարդկանցից, աղօթքով հոգու փրկութիւն չէր որոնել: Հաւաքել էր աշակերտներ, նրանց միտքը լուսաւորելու համար քրիստոնէութիւն քարոզել: Խորենացին վկայել էր, որ Մեսրոպը եկեղեցիներում ժամերգութիւնը կատարել էր Ասորերէն գրքերից, յետոյ էլ այն Հայերէն թարգմանել: Մեսրոպը, իր առաքելութիւնը իրականացրել էր նաեւ Հայոց աշխարհի արեւելեան ծայրամասի գաւառներում, որտեղ անկարգ վիճակ էր տիրել: Սիւնիքի ու Արցախի լեռների անմատչելի բարձրութիւնները, կլիմայական խիստ պայմանները բնակիչների համար մեկուսի կեանքի վիճակ ստեղծել, պահպանել էին իրենց հնապաշտ աւանդութիւնները: Նման պայմաններում պայքարել էին իրենց ապրուստը հոգալուն, մտաւոր կեանքի պահպանել չէր եղել:

Մեսրոպ իր քարոզչութիւնը սկսել էր Սիւնեաց աշխարհի Գողթան գաւառից, նրա մարդկանց միտքը պայծառ ու լուսաւոր եղել, հաւատարիմ մնացել իրենց հին աստուածների հաւատքի իմաստութեանը, իրենց հին աստուածների բնութեան երեւոյթների պաշտամունքին: Գողթան գաւառը, նախնիների աստուածների պաշտամունքի, իրենց հերոսների մաքառումների աւանդապահ, իրենց հաւատքի ոգեւորողը եղել: Նրանց բանաստեղծական յորինումներում Արմինա-Հայերի իմաստութեան լոյսի բոցերն էին ճառագում: Այն վերածուել էր երգի, պահում իրենց անցեալը, չէին թողել մեռնել իրենց քաջ նախնիների յուշը: Մովսէս Խորենացին, նրանց երգերի ու բանահիւսութեան մի քանի պատառիկներ էր հարորդել՝ Արտաշէսի ու Սաթենիիկի ամուսնութեան հանդէս, Վահագնի ծնունդ...: Վահագնի ծով, շրջակայ լեռների գազաթների հրաբուխներից ժայթքած կրակալոյսը ջրեր իջնում, երկնում էր երկինքը, երկնում էր երկիրը, երկնում էին հրաբխային գոտի կապած Վանայ ջրերը, երկունք բռնած կարմրալոյս եղեգնիկից ելած բոցից ծնունդ իրենց Վահագն աստուածը՝ կրակից ու ջրից ծնունդ Հայ նախնի աստուած: Պատառիկներ էր փրկել Մովսէսը, հապա եթէ նրանց այրած չլինէին... բանաստեղծութեան ինչքան գոհարներ կը պարգեւէինք աշխարհի մարդկանց:

Մեսրոպ... այդ լեռներում դիմազրակել էր իրենց նոր հաւատքի քարոզչութեան անհնարինութիւնը, դիմել տեղի իշխանների հաւկցութեանը: Կորիւն ալայայ էր գրել իր «Վարք Մաշտոցի» մատենում՝ «Այն ժամանակ Աստուած տուեց,

որ Սիւնիքի իշխանութեան գլուխն անցաւ քաջ Սիսական Վասակը, խելացի ու հանճարեղ եւ կանխագէտ, աստուածային իմաստութեան շնորքով օժտուած մի մարդ, նա շատ նպաստեց աւետարանի քարոզչութեանը»: Քրիստոնէութեան քարոզչութիւնը կատարուել էր հրամանով, գինուծի իշխանութեան պարտադրանքով: Նրանից հարիւր տարիներ առաջ էլ իշխանական գորութեան բռնի ուժով Արմինա-Հայաստան երկրում իշխել էր օտար հաւատքը: Մեծ Հայք երկրի մարդիկ, իրենց հաւատքի պաշտպանութեան համար հարիւր տարիներ կռիւ էին տուել իշխանութեան բռնութեանը, պարտուել էին, սպաննել, դաւանափոխ արել քրմական դասին, քանդել նրանց աստուածների մեհեանները, յափշտակել տեղի գանձերը, ոչնչացրել գիր, երգ, աշխարհի ու տիեզերքի ընկալման իմաստութեան մատենաներ: Կրօնքափոխ էին արել Մեծ Հայքին, հաւատքն էր օտար, թագաւորը օտար:

Մեսրոպ... իմաստուն, զգայուն սիրտ ունէր, «Տրամութիւն է ինձ, իմ սրտի ցաւերը անպակաս են իմ եղբայրներին ու ազգականներին համար» պիտի խոստովանէր իմաստունը: Մտորել էր թէ ինչո՞ւ էր հայրենի երկրում անգթութիւն ու հարկադրանք կատարուել, մարդու համար հարազատ էր այն, ինչ հասկանում էր, ինչին պաշտամունք ունէր: Համոզուել էր, որ քարոզչութիւնը իզուր էր, մանկանց սրտերում փոքրուց պիտի սերմանուէր իրենը, ոչ թէ օտարինը: Կիսատ թողել սկսած գործը, վերադարձել Վաղաշապատ, միտք էր ծագել «Գիր» ստեղծել իր ազգի մտքի լուսաւորութեան համար:

Մեսրոպ... դիմել էր Հայոց կաթողիկոս Սահակին: Հայաստանում ամենագարգազած մարդն էր նա: Սիրով ու մեծ ակնածանքով էր ընդունել նրան, ինքն էլ նոյնը մտածած ու եզրակացրած եղել: Ի դէմս Սահակ կաթողիկոսի՝ Մեսրոպ հովանաւոր ու աջակից էր գտել: Հայաստանում Արշակունեաց տիրապետութեան նախավերջին թագաւոր Վուսնայուհի արքան միտք էր նրանց, որը նոյնպէս զգացել էր ժամանակի պահանջը: Նրա թագաւորութեան շրջանին Հայաստան երկիրը խաղաղուէր էր: Ժողովուրդի գոյութեան յարատեւութիւնը պահպանելու համար հարկաւոր էր մի միջոց գտնել, որը ապրէր մարդկանց սրտերի ու մտքերի մէջ: Կաթողիկոսարանում խորհրդածութիւններ եղել, յայտնի էր դարձել, որ ձեռնարկուելիք գործը դժուար էր, մասնակիցներին ոչ ոք նրա հատարման իրագործմանը առաջարկութիւն արել:

Արմինա-Հայաստանի Վուսնայուհի արքան, Միջագետքում Պարսկաստանի ու Բիւզանդիոնի միջեւ հաշտարար առաքելութեան ատեն նրան հաղորդել էին, որ մի Ասորի Դանիել եպիսկոպոսի քով «Հայերէն» տառեր կային: Հայ պատմագիրներ այն աւանդած չէին եղել, պարզ չէր նաեւ, որ մինչ Մեսրոպի ժամանակ Հայերէն «Այբուբեն» եղել էր թէ ոչ: Սահակ կաթողիկոսի ու Մեսրոպի խնդրանքով թագաւորը Վահագն անունով մի պաշտօնեացի միջոցով Ասորի Դանիել եպիսկոպոսի մօտից բերել տուել այդ տառերը: Երեխաներ էին հաւաքել, բացուել էր առաջին դպրոցը, Հայոց առաջին ուսուցիչ Մեսրոպը «Վարժապետ» դառնել,

Սրբոց Թարգմանչաց Վարդապետացն

սկսել մայրենի լեզու սովորեցնել: Մեսրոպը եզրակացրել էր, որ Դանիելի տառերով Հայերէն լեզու սովորեցնել հնարաւոր չէր: Կարող էր Տրդատ Գ. Մեծի գահակալութեան ատեն, քրիստոնեայ երկու հայերի՝ Թադեւոսի ու Մարտիրոսի ստեղծած 24 տառանոց այբուբենը լինէր...: Մեսրոպ ու Սահակ անկարող էին եղել յաղթահարել այդ վիճակը, Վաղարշապատում ոչ ոք կարողացել էր օգնել: Մեսրոպ մտածել էր, որ եթէ տեղում յաջողութիւն չէր գտել, յարկաւոր էր այն որոնել օտար երկրների գրապահոցներում, կամ էլ ինք յօրինել տառեր:

Մեսրոպ... մի քանի աշակերտների հետ մեկնել էր երկրից դուրս: Վաւաճապուհ թագաւորը ու Սահակ կաթողիկոսը բարի մաղթանքներով ճանապարհել նրանց: Գնում էր «Օսրոյենէ» ասորական պետութեան Եդեսիա ուստան: Հանդիպել էր նշանաւոր հոգեւորականների հետ, բարեհաճ ընդունելութիւն գտել: Աշակերտների մի մասին Եդեսիա թողել Ասորերէն սովորելու, մի մասին էլ իր հետ Սամոսատ քաղաք տարել Յունարէն ուսանելու: Մեսրոպի աշակերտի «Վարք Մաշտոց»-ի գրքի յեղինակ Կորիւնը նկարագրել էր նրա հոգեկան ու մտային տուայտանքը: Մեսրոպի նպատակին հասնելու անդադրում նուիրուած՝ հոգում տեսիլքների լոյսի շանթեր յառնել, մտքի ոգեղէն գորութիւնը պատկերել էր տարիների խորհուրդը: Հոգում երկուսք էր, պատին գամուած մագաղաթում իրենց Տիրաստուծոյ շնորհած գրերի լոյսն էր շողում... Արմին-Հաջը արդէն գիր ունէր, իր ցեղի մտքից ճառագած լոյսն էր աշխարհներ տանելու: Կորիւն ու Հայ մատենագիրներ այն համարել էին աստուածային հրաշապատում, քրիստոնէական հաւատքի անիրական բացատրութիւնն էր այն, ամէն արտասովոր բան համարել էին երկնային հրաշք: Աշխարհում հրաշքներ չեն լինում, աստուածային ոչինչ, ամէն ինչ մարդկային բանականութեան, իմաստութեան ու բնութեան անհնդատ ինքնափոփոխութեան (Mutation) ինքնաարարումն է, կենդանական, բուսական աշխարհի յեղափոխութեան ընթացքն է այն:

Ըստ պատմաբան Լէօ-ի, ոմանք եզրակացրել են, որ Հայոց այբուբենի համար նախատիպ է եղել Յունականը, ըստ ուրիշների պարսից կամ գենդական ու փեհլեւի գրերը: Նա Յունականի կողմնակից էր եղել, ճշտելով, որ Հայերէն այբուբեն տառերը դասաւորուած են ինչպէս Յունականը, գրում ձախից աջ: Մեսրոպի մեծութիւնը չէր պակասում, որ Հայոց այբուբենի որոշ տառեր Յունականի եւ ուրիշ ազգերի տառերի նմանութիւն ունէին, այն իր ժամանակին ընդհանուր երեւոյթ եղել: Մեծ Հայքում, տիրում էր բազում տեղական բարբառների ընդհանուր Հայերէն լեզուն, իւրաքանչիւրում հնչիւնային առանձին արտայայտութիւններով: Մեսրոպ, իր մտքի գորութեամբ գտել էր նրանց իւրաքանչիւրի հնչիւնային առանձին յատկութիւնները: Իւրաքանչիւր յայտնի մի հնչիւնին առանձին տառանշան նուիրաբերել: Հայոց լեզուն, նրա հնչիւնային ամբողջութեամբ արտայայտել գրերի մէջ: Տառերի հնչիւններում իր ցեղի մտքից յորդած ոգու ճիշն էր,

տառեր, որոնք իրենց ցեղի դիւցազունների ոգու հետ այն տարել ու տանելու են հազարամեակներ: Ահա Մեսրոպի կողմից արարուած համարուած հետեւեալ 14 տառերը՝ ր, ժ, լ, խ, ծ, հ, ձ, ճ, ի, չ, ջ, վ, ը, ց:

Մեսրոպ գնացել Եդեսիայի Սամոսատ քաղաք, Հոռփանոս անունով Յոյն գծագրողի հետ վերջնական ձեւ տուել Հայերէն տառերին: Ինքն էր առաջինը փորձել իր արարումը, «Աստուածաշնչի Սողոմոնի Առակներ»-ի առաջին տողը թարգմանելով գրել՝ «Ճանաչել գիմաստութիւն եւ գիւրատ, իմանալ գբանս հանճարոյ»:

Մեսրոպ վերադարձել էր Վաղարշապատ՝ էջմիածին, ամբողջ Արմինա-Հայաստանն էր ցնծագին դիմաւորել նրան, Սահակ կաթողիկոսին ու Վաւաճապուհ արքային մատուցել Հայոց 36 գրերը պատկերած մագաղաթը: Մեսրոպին յանձնարարել էին դպրոցներ բացել, մանուկներին Հայոց գիր ու լեզու ուսուցանել, ցեղի առաջին վարժապետը եղել: Իրենց նախնիների փյաժ մեհեանների տեղերում դպրոցներ էին պատել, որոնց որմերից ճառագում էր լոյսը իրենց հին հաւատքի, խօսքի մըմունջները իրենց նախնիների դպիր-քուրմ-քրմուհիների: Մանուկներին բերել դպրոցներ, հայոց ամբողջ աշխարհը «Այբ, Բեն, Գիմ» էր կանչում, նորէն դպրութիւն պիտի լինէր, իրենց Աստուծոյ պաշտամունքի խօսքն էին քարոզելու: Մեծացան առաջին դպրոցականները, առաւել իմաստուններին հաւաքել պալատ: Սահակ կաթողիկոս ու Վաւաճապուհ արքայ նրանցից՝ Մովսէսին, Ղեւոնդին, Եղիշին, Կորիւնին, Եգնիկին, Դաւիթին, Յովնանին, Յովսէփին, եւ ուրիշ շատերին ճամբել էին Բիւզանդիա, Օսրոյենէ-Եդեսիա, Պոնտոս, հեռու Աղեքսանդրիա, Յունարէն, Ասորերէն ու ժամանակի այլ ուսման նիւթեր ուսանելուց յետոյ վերադարձել Վաղարշապատ-էջմիածին:

Կեսարիա ուսանած Սահակ Պարթեւ, անչափ զարգացած մարդը՝ կաթողիկոսը, գիտակ էր Ասորերէն, Պարսկերէն ու Յունարէն եւ անշուշտ իրենց խօսած Հայերէն լեզուներին: Մեսրոպ գբաղած էր դպրոցաշինութեամբ, Սահակը, արտերկրներում ուսանած աշակերտների հետ գլխաւորել Սուրբ գրոց ու քրիստոնէութեան մատենան՝ Աստ-

ուածաշունչի, թարգմանութիւնը: Սկզբում այն թարգմանել էին Ասորերէն լեզուի բնագրից, սակայն այն կատարեալ չէր համարուել: Երկար տարիների տքնանքով սկսել էին Յունարէն բնագրից թարգմանել այն: Կատարեալ Հայերէն էր, Հայոց լեզուի քերականութիւնը, շարադասութիւնը, շարահիւսութիւնը, ուղղագրութիւնը այնտեղ էին սկզբնաւորուել, Եւրոպական գիտնականներ այն համարում են «Թագուհի թարգմանութեանց»:

Յունական ու ասորական մշակոյթի ուսումնական կեդրոններից վերադարձած Մեսրոպի ուսուցանած աշակերտները՝ նաեւ կատարել էին գրական, գիտական, պատմական, արուեստաբանական, փիլիսոփայական բազում երկերի թարգմանութիւններ: «Թարգմանիչներ» պիտի անուանէին նրանց, յետոյ էլ պիտի սրբացնէին: Թարգմանութիւնը, գրական ստեղծագործութիւն է, որը մի երկը վերստեղծում է մի այլ լեզուով: Թարգմանիչներ՝ Կորիւն, Եղիշէ, Յովսէփ, Յովնան, Ղեւոնդ, Եգնիկ, Դաւիթ Անյաղթ, Մովսէս Խորենացի, Փաւստոց Բիւզանդ, Ղազար Փարպեցի, Ագաթանգեղոս, թարգմանեցին, հայացրին յունական, ասորական բազում երկեր, որոնց մի մասը անհետացած լինելով, համարում են բնօրինակներ: Թարգմանիչները ոչ միայն թարգմանեցին ուրիշ ազգերի մեծերի երկեր, այլ նաեւ իրենց արմենական հանճարի պոթկումների լոյսով արարեցին Հայոց Ոսկեղենիկ լեզուով հրաշալի երկեր՝ Եղիշէի՝ «Վարդանի ու Հայոց Պատերազմի Մասին» արձակ բանաստեղծական երկը, Եգնիկի՝ «Եղեծ Աղանդոց» քրիստոնէական հաւատքի փիլիսոփայութեան ճմշարտութեան բոլոր ժամանակների ամենագորեղ իմաստաւորումը, Կորիւնի՝ «Վարք Մաշտոցի» իր Երանելի Մեսրոպ Վարդապետի հանճարի պոթքումի փառաբանումը: Մեսրոպին՝ Մաշտոց էին անուանել, այն իրենց «Հեթանոս» նախնիների հաւատքի «Աղօթագիրք» էր նշանակում: Հապա՛, Մովսէս Խորենացու «Հայոց Պատմութիւն» մատենանի պատումը որպէս՝ իր քաջ ազգի խոհանակութեան ու Հայոց աշխարհում յիշատակութեան արժանի քաջ գործերի մասին հաւաստումը: Այն գրուած էր Սահակ Բագրատունի իշխանի խնդրանքով, իր ցեղի ծագման ժամանակներից մինչեւ 428 թուականի Արշակունի թագաւորութեան անկու-

մը: Խորենացին մահացել է 460-ական թուականների սկիզբը, 451 թուականի Վարդանանց պատերազմի մասին չի գրել՝ որպէս Վասակ իշխանի քաղաքական արեւելումի կողմնակից լինելը ու Մամիկոնեանների համբաւաւոր տոհմին ու կղերին չհակադրուելը: Ղազար Փարպեցի, «Հայոց Պատմութիւն, Թուղթ Վահան Մամիկոնեանին», Վահան Մամիկոնեանի խնդրանքով երկնած՝ Հայոց աշխարհի տուեալ ժամանակի ուղղական ու քաղաքական դեպքերի մասին եւ Հայոց աշխարհը երկու տէրութիւնների միջեւ բաժանման ժամանակներից մինչեւ Վահան Մամիկոնեանի մարգպետութեան շրջանը: Ագաթանգեղոսի ու Փաւստոս Բիւզանդի պատմական մատենաները: Ժամանակի փիլիսոփաներին յաղթող՝ Դաւիթ Անյաղթի երկերը, Պղատոնի, Արիստոտելի երկերի նրա թարգմանութիւնները, «Զօրն ասեմ, զօրն խոստովանիմ, գի բագում են ժամանակի հայոց իմաստունների արարումները...»: Սրբոց թարգմանչաց գործունէութեան ժամանակահատուածը համարուել՝ Հայոց մշակոյթի «Ոսկեդար»:

Լեզուաբան Հրաչեայ Աճառեան, իր «Արմատական Բառարան», «Հայոց Լեզուի Համեմատական Քերականութիւն» բացառիկ աշխատութիւններով ինքնաեւ աշխարհին աւետել՝ Հայոց լեզուն «Հնդեւրոպական Մայր Լեզուի» ընտանիքին պատկանելը, նրա քերականութիւնը համեմատել աշխարհի հինգ հարիւր լեզուների հետ, բացայայտել Հայերէն լեզուի զարգացման ընթացքը, Արմին նախնիների գրաբար լեզուի հիմքի վրայ՝ նրա կառուցուածքը: Նա հաստատել էր, որ Հայոց լեզուի քերականութիւնը, շարադասութիւնը, շարահիւսութիւնը, ուղղագրութիւնը սկզբնաւորուած են Հայոց «Գերագանց Դասագիրք»-Աստուածաշունչ Մատենանէն: Այնտեղ էր, որ իրենց նախնիների բանաւոր գրաբար լեզուն գրաւոր եղել: Այդ Մատենանի քերականական, բառակազմութեան, շարադասութեան, ուղղագրութեան կատարեալ կառուցը արարեցին Սահակ կաթողիկոս, Մեսրոպ Մաշտոց եւ նրանց ուսուցանած աշակերտներ՝ «Սրբոց թարգմանչաց» վարդապետներ՝ Եղիշէն, Կորյունը, Դաւիթ Անյաղթը, Յովնանը, Եգնիկ Կողբացին եւ այլք ցեղի երախտիքի աղօթքի մըմունջներ նրանց խնկաբոյր յիշատակին:

#ArtsakhStrong
#GlobalArmeniansUnite
**WE ARE OUR BORDERS.
ALL FOR ARTSAKH.**
Donate Now
TO DONATE VISIT
WWW.ARMENIAFUND.ORG/DONATE

Պարտուողներն ու Յաղթողները

Շարունակուած էջ 7-էն

ղովուրդին հետ:

Պարտուողներու շարքին կը պատկանի նաեւ Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանը, որու վերջին շրջանի բոլոր կանխատեսումները սխալ դուրս եկան: Տէր Պետրոսեան լաւ առիթ ունէր հանրութեան ներկայանալու որպէս՝ 2018-ի ժողովրդային յեղափոխութեան սկզբունքները կրող, սակայն աւելի փորձառու այլընտրանք գործող իշխանութիւններուն: Ան որդեգրելով արմատական ընդդիմադրութեան կարգախօսները անցաւ կարգ մը կարմիր գիծեր, որոնցմէ գլխաւորը իր անցեալի հազարաւոր համակիրներուն համար անընդունելի կերպարներ՝ Ռոպերթ Քոչարեանի եւ Սերժ Սարգսեանի հետ դաշինք կազմելու հրապարակային առաջարկն էր: ՀԱԿ-ի ստացած ձայներուն քիւր եկան վկայելու որ, Լեւոն Տէր Պետրոսեան այս անգամ վրիպեցաւ իր վերլուծութիւններուն մէջ:

Հայաստանի մէջ կը գործէ «Կալոփ» անունով ընկերութիւնը մը, որ կը յաւակնի հանրային կարծիքի ուսումնասիրութիւններ պատրաստել: Այս ընկերութիւնը որեւէ կապ չունի Ամերիկեան նշանաւոր «Կալոփին» հետ ու վերջին ժամանակաշրջանին անոր հրապարակած հարցախոյզերու արդիւնքները ոչ միայն հարուստ էին բացայայտ կեղծիքներով, այլ ամբողջութեամբ սխալ դուրս եկան հակառակ պատկեր ներկայացնելով սպասուող քաղաքական գործընթացներուն մասին:

Ժողովրդավարութիւն

Շարունակուած էջ 7-էն

իրականացան: Ասիկա կրնանք վերագրել մեր ազգային թերիններէն մէկուն՝ անձնական ու անմիջական շահերը աւելի գերադասելուն, ի վնաս մեր ազգային ու երկարաժամկէտ շահերուն: Որ կը նշանակէ, որ Հայաստանի մէջ ժողովրդավարութեան մշակոյթի զարգացումը տակաւին երկար ճամբայ ունի կտրելիք, որպէս զի քաղաքացիներու կարեւոր քանակ մը հասնի հոն, ուր անձէն աւելի էական նկատէ տուեալ անձին դաւանած գաղափարները եւ կատարած գործը: Մենք կը սպասենք, որ այս ուղղութեամբ յստակ քայլեր առնուին մեր կրթական համակարգէն ներս ներմուծելու անհրաժեշտ բարեփոխումները, որոնք պիտի նպաստեն այս ուղղութեամբ սերունդներու դաստիարակման:

Երկրորդ եւ վերջին առիթ մը տրուած է Փաշինեանին, Հայաստանէն ներս ժողովրդավարութիւնը եւ օրէնքի գերակայութիւնը ամրապնդելու: 687 հազար քաղաքացի այդ ակնկալութեամբ իր քուէն տուաւ իրեն: Մեր պատմական երթի այս պահի պատասխանատուն ինքն է: Կ'արդարացնէ՞ արդեօք այդ պատասխանատուութիւնը թէ ոչ, յայտնի կը դառնայ իր կառավարութեան առնելիք քայլերով: Դիտումնաւոր գործածեցինք կառավարութիւնը բառը եւ ոչ թէ իշխանութիւն, ի մտի ունենալով Կէօթէի մէկ խօսքը՝ «Իշխելը հեշտ է. կառավարելն է դժուար»: Գալով մեզի՝ Հայաստանի եւ աշխարհաց-

Հայաստանեան այս «Կալոփը» դուրս եկաւ վարկաբեկուած ու արժանի է դասուելու պարտուողներու շարքին:

Ընտրապայքարէն յաղթական դուրս եկան վարչապետ Նիկոլ Փաշինեանն ու իր գլխաւորած «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցութիւնը: Ընտրութիւն կեղծելու փորձութեան չմատնուելով ու ապաւինելով բացառապէս ընտրողներու դատողութեան, անոնք կազմակերպեցին յաջողակեան երկրորդ ազատ ընտրութիւնները:

Փաշինեանի յաղթանակը անակնկալ չէր, սակայն անոր ապահոված տոկոսները կանխատեսուածէն աւելին էին: Քաղաքէ-քաղաք ու գիւղէ-գիւղ այցելելով ու գործած սխալներուն համար ժողովուրդէն ներողութիւն խնդրելով Փաշինեան կարողացաւ զօրաշարժի ենթարկել իր ընտրագանգուածը, որոնք նախընտրեցին երկրորդ առիթ մը տալ Յեղափոխութեան առաջնորդին, այս անգամ թաւշեայ մանտաթը փոխարինելով պողպատեայ մանտաթով:

Այս ընտրութիւններու մեծադոյն յաղթականը Հայաստանի քաղաքացիներուն կը պատկանի: Հակառակ բոլոր դժուարութիւններուն ու պատերազմի թողած վերքերուն անոնք կարողացան գաւազանել կեղծն ու սուտը իրականութենէն: Սերժելով վերադարձ անցեալի յոռի բարքերուն յաջողեցան տէր կանգնիլ իրենց ու իրենց գաւակներու ու թոններու ազատ ապրելու եւ ազատ քուէարկելու իրաւունքին:

«ՄԱՍԻՍ»

րիւ հայութեան, պէտք է ազգովին սատարենք իրեն, լաւագոյնս իրագործելու այս պատասխանատուութիւնը, եւ ըստ այնմ հաշուետուութիւն պահանջենք: Գիտակցի՛նք, որ խնդրոյ առարկան Փաշինեանի անձը չէ, այլ՝ մեր պետականութեան գոյատեւումը եւ մեր ազգի բարօրութիւնը:

25 Յունիս, 2021

Յ.Գ. Ստորեւ կ'արտասուենք հատուած մը, «Մասիս»-ի 29 Յունուար 1994-ին թիւով հրատարակուած մեր «Անհրաժեշտ ժողովրդավարութիւնը» խորագրով յօդուածէն, մեկնաբանութիւնը թողելով ընթերցողին:

«Ժողովրդավարութիւնը անհրաժեշտութիւն մըն է արդար միջավայրի մը, հասարակութեան մը գոյաւման համար: Այդպիսի միջավայրի մէջ է միայն, որ ամէն մարդու կը տրուի առիթը ըսելու իր խօսքը, գործելու յօգուտ ընդհանրական շահերու եւ հետեւաբար բացայայտելու խաբեբաներու եւ շահամոլներու սաղրանքներն ու անիրաւութիւնները: Եւ այսպիսի ընթացքով է, որ հաւաքականութիւններ կը զարգանան ու կը բարգաւաճին: ...Առարկողներ պիտի գտնուին, որ իր առաջին քայլերը առնող պետականութեան մը համար ժողովրդավարութիւնը շուտով թիւն կրնայ ըլլալ: Բայց պէտք է ընդունիլ, որ անոր բացակայութիւնն ալ պիտի նպաստէ ամբողջատիրական վարչակարգի մը ստեղծման, որ ուշ կամ կանոնադրապարտուած ըլլալով

Նոր էջ՝ Յանուն Իրաւունքի եւ Օրէնքի

Շարունակուած էջ 7-էն

փանիւնները» պիտի գործեն: Այս կտրուկ արշաւը պիտի ծառայեցնէ երկրին տնտեսութեան բարեկարգումին»:

Ան ձեռք կը մեկնէ քաղաքական երկխօսութեանց բոլոր կուսակցութիւններուն հետ: Ընտրութիւններու արդիւնքէն ետք՝ արդէն ժամանակն է քաղաքական կայունութեան, լարուածութեան մեղմացման եւ վերջապէս միահամուռ աշխատանքի: Այս կառուցողական մտեցումը, իսկապէս, եթէ արձագանգ գտնէ գերծատելութենէ եւ հատուածական շահերէ, ապա դրական զարգացումները շուտով կը նշմարուին ի խնդիր հաւաքական վերելքի, յետ-պատերազմեան ընկճուածութեան թօթափումին: Անկէ ետք, վարչապետը նշեց համախմբումը մշակութային, գիտական եւ տնտեսական ներուժին:

Ի հարկէ, վարչապետին ուշադրութեան չվրիպեցաւ Հայաստանի եւ Արցախի շարքերութիւններուն հարցը, շեշտելով անվտանգութեան առաջնահերթութիւնը, երկխօսութեան կարեւորութիւնը, որուն համար ալ ան պարզեց համախմբման ձեռքը: Աւելի ետք, ան ընդգծելով Արցախի հայութեան նեցուկ կանգնելու Հայաստանի իշխանութեանց անվերապահ յանձնառութիւնը, ընդգծեց տնտեսական աջակցութեան ծրագիրներու մշակումը՝ ապահովելու հոն գտնուող ժողովուրդին վերակազմակերպումն ու ամրացումը:

Շատ զգայուն հարց մը եւս շօշափեց Նիկոլ Փաշինեան. հոգեւոր ոլորտը՝ կոչ ուղղելով եկեղեցուց՝ երկխօսութեան եւ հոգեւոր կեանքի վերակազմակերպման: Կը յիշենք, թէ ամենայն հայոց կաթողիկոսը անհարկի միջամտութեամբ մը հրաժարականը կը պահանջէր վարչապետին անցեալ ամիսներուն: Կը յիշենք թէ հոգեւոր սպասաւորներ ինչպիսի վարկաբեկիչ խօսքեր ուղղեցին եւ ցաւալիօրէն դեռ կ'ուղղեն ժողովուրդի այն հատուածի հասցէին՝ որ կը համակրի վարչապետին: Հոգեւորականի ոչ չարիք վարքագիծը եկեղեցին առաւել հեռացուց ժողովուրդէն: Այս տհաճ միջոցառումն որպէս պատասխան վարչապետը նշեց՝ «Ձայն բազմաց, ձայն Աստուծոց»՝ ակնարկելով ժողովուրդին անկաշկանդ ընտրութեան, ապա նաեւ՝ «մասնախիզափ հաւատք ունենալու, սարեր շուռ տալու համար»: Սակայն, նշելու համար երկու դէպք, ընտրութիւններու արդիւնքէն ետք, Շիրակի թեմի առաջնորդ Միքայէլ Արք. Աջապահեան տարօրինակ վարքագիծով յայտարարեց՝ «էր-

մենիստանը յաղթեց Հայաստանին», այսինքն՝ վարչապետին համակիրները (որոնք մեծ թիւ կը կազմեն Շիրակի մէջ), էրմենիներ են եւ ոչ հայեր: Նոյնպէս, Յարութիւն Քհնյ. Աւագեանի համար Հանրապետութեան հրապարակ հաւաքուածներ կասկածելի հայեր են եղեր: Նման փաստեր ի վնաս եկեղեցուց չե՞ն միթէ: Որո՞ւ կը նպաստեն նման վարկաբեկիչ արտայայտութիւններ խոնարհ ժողովուրդին ուղղուած: Ժողովուրդը ցատուով հակադարձելու իրաւունք չունի՞ արդեօք:

Հրատապ հարց կը մնայ ո՞մանց շարամտութիւնը եւ հակազգային ոգին երբ հակադրութիւններ կը տեսնեն հայաստանցիի եւ դարաբաղցի միջեւ: Նման դրսեւորումներ «անթոյլատրելի» են ըստ վարչապետին, հաւաստելով՝ «Հայաստանի ժողովուրդը, Հայաստանի կառավարութիւնը կը լինի Արցախի կողքին», «անմնացորդ նուիրուած ենք Արցախի մեր եղբայրների եւ քոյրերի նուիրական երազանքներն», «Արցախի խնդիրն արդարացի կարգաւորում»: Եւ մանաւանդ՝ «արմատախիլ անել հակադրութեան փորձ», վերջ տալ այս նիւթին շահարկման եւ վիթխարի ներդրումներով նպաստել Արցախի հզօրացման:

Այսպիսով՝ ան նոր էջ բանալով ըսաւ՝ «քաղաքական ճգնաժամը յաղթահարուած եւ աւարտուած է» եւ նորովի կառուցել հայրենիքը, որուն համար ալ նշեց 200 մանկապարտէզներու եւ 300 դպրոցներու կառուցման մեկնարկը, ճանապարհաշինութեանց բուռն թափը, բանակին բարեփոխումը, տնտեսութեան զարգացումը եւ կոչ ուղղեց անցնիլ «քրտնաջան եւ տքնաջան աշխատանքի» եւ վանկարկեց՝ «Հայաստան, Հայաստան» ու «Ապագայ կայ, կայ սպագայ»:

Այս խանդաբորբ ելոյթին, անշուշտ կը հետեւէր հայութեան կարեւոր տոկոսը: Կը մնայ տեսնել շօշափելի արդիւնքները վերթութեալ վարդազոյն եւ խոստումնալից խօսքերուն: Կը մնայ, որ անոնք դառնան տեսանելի այն հանրութեան համար, որ իր քուէն վստահեցաւ Ն. Փաշինեանին: Հիմա, որ ան հաստատած է «իրաւունքի եւ օրէնքի տիրութեան», հիմա որ ան ունի պողպատեայ լիագործութիւն կենսագործելու առկայ բոլոր առաջադրանքները, ժողովուրդը ակնակառուց պիտի չսպասէ՞ անոնց արդիւնքներուն, դրական պտուղներուն:

Միայն թէ անգամ մը եւս չհիասթափի ժողովուրդը:

Ուրեմն՝ սպասենք՝ ապագայ կա՞յ թէ՞ չկայ...

«ԱՐԱՐԱՏ» ԼԻԲԱՆԱՆ

կործանման, պատմութեան անիւր պիտի ետ տանի հոն, ուրկէ շեղու-

մը սկսած էր, եթէ ոչ աւելի հեռուն:»

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՆ
ՓԱՍՍԵՒՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻ ԸԱՍԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՍԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
(626) 797-7680

ՄԱՅԱԶԴ



ԱՐԱԿՄԻ ՄԱՃԱՌԵԱՆԻ (1930 Ապրիլ, 2021 Յունիս)

Սրտի դառն կսկիծով կը գուժենք մահը մեր սիրեցեալ քրոջ, հօրաքրոջ եւ ազգականին՝ ԱՐԱԿՄԻ ՄԱՃԱՌԵԱՆԻՆ անակնկալ մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, Յունիս 22-ին, յետ կարճատեւ հիւանդութեան, Glendale Adventist հիւանդանոցին մէջ:

Յուդարկաւորութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ Յուլիս 1, Հինգշաբթի, երեկոյեան ժամը 5-ին՝ Պրայէնքի Hollywood Hills Forest Lawn գերեզմանատան ձերմակ եկեղեցիին մէջ: Թաղումը՝ ժամը 5.30-ին, նոյն գերեզմանատան մէջ:

ՍԳԱԿԻՐՆԵՐ

Եղբայրը՝ Սարգիս Մաճառեան
Չարմիկ-գարմուհիները՝ Արա, Սիլվա, Լուսիկ եւ Իշխան Մաճառեաններ

Եղբոր աղջիկը՝ Ալին Մաճառեան եւ Նիք Նաշ Տէր եւ Տիկ. Սարօ եւ Վանիա Տիմիթեան
Հօրեղբորորդիին Տիկինը՝ Քլարա Մաճառեան եւ զաւակունք՝ Տէր եւ Տիկ. Տիգրան եւ Անի Մաճառեան (Լաս Վեկաս)
Տէր եւ Տիկ. Օննիկ եւ Եսթեր Տէր-Ստեփանեան եւ զակ. Յակոբ Մաճառեան
Տալերը՝ Մարի Ղուկասեան եւ զակ. (Աւստրալիա) Ժանէթ եւ զակ. (Լիբանան եւ Գանատա)
Լուսին եւ զաւակունք՝ Յակոբ եւ Յաբէթ (Ֆրանսա)
Տէր եւ Տիկ. Կարպիս եւ Քարինա Յակոբեան եւ զաւակունք Տէր եւ Տիկ. Միհրան եւ Անժէլ Արմուտիկեան եւ զաւակունք եւ համայն Մաճառեան, Ղուկասեան, Յակոբեան եւ Արմուտիկեան ընտանիքներն ու հարազատները:

Քոչարեանը Ջրամբարների Փոխարէն

Շարունակուած էջ 8-էն

Թիւններ թոյլ տալու փոխարէն կարող էին կառուցել մէկ-երկու ջրամբար, որպէսզի գոնէ Հայաստանի ջրային պաշարները Քուռ-Արաքս համակարգով չհոսէին հարեան երկրներ, մնային ու ոռոգէին մեր դաշտերը:

Իսկ հիմա՝ յետպատերազմեան ու համաճարակային այս իրավի-

ճակուծ, իշխանութիւնները պէտք է մտածեն ոչ միայն ջրամբարներ կառուցելու, այլեւ հսկայական գումարներ ծախսելով՝ Սեւանի ափերը մաքրելու եւ ջրի տակ անցնող ամառանոցներն ու օբիեկտներն ապամոնտաժելու մասին: Ահա թէ ինչ ժառանգութիւն է մնացել այդ 10 տարիների «տնտեսական զարգացումից»:

«Aliqmedia.am» Կայքէջ

Վերջապէս

Շարունակուած էջ 8-էն

Ճիշդ եւ վայելուէ:

Ենթադրաբար կարելոր փոփոխութիւնների շրջան է մտնում մեր երկիրը եւ յոյսով եմ որ այն կը լինի առանց բախումների: Փաշինեանի՝ Քոչարեանին ասուլիսի հրաւերին վերջինս պատասխանել էր որ ինքը պատրաստ է մենամարտի եւ ոչ ասուլիսի իսկ ոմանք մամուլով լուր էին տարածում, թէ վարչապետի չհեռանալու դէպքում պատրաստ են քաղաքացիական բախումների գնալ: Կարծում եմ այդ ցնդաբանութիւնները մոռացուած են եւ վաղուանից ամէն մարդ պարտա-

ւոր է հանդարտուելով ենթարկուել քուէատուփերի որոշմանը:

Բարի երթ մեր նորոգ իրականութեանը:

(1) Յիշեցնեմ որ դա իրենց կատարեալ իրաւունքն է, եթէ ճշուած իրաւունքն տակ չեն եղած եւ նոյն պատկերը եղել է Սիւնիքում ուր պղինձ մոլիբդենային համակարգի մեծ բաժնետէճ է Քոչարեանը եւ գործաւորների վրայ ճնշումներ են եղել՝ ըստ որոշ աղբիւրների, ինչպէս մայր-բաղադրի բուժման հաստատութիւններում, որոնց ապացոյցը չունեմ:

«ԱԿՕՍ»

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Արա Ահարոնեանի յիշատակին

Այսու կու գանք մեր խորին շնորհակալութիւնն ու երախտագիտութիւնը յայտնելու բոլոր մեր հարազատներուն, որոնք մխիթարեցին մեզ իրենց ցաւակացական խօսքերով, բացիկներով, հեռախօսային զանգերով ու էլեկտրոնային կապերով:

Շնորհակալութիւն նաեւ բոլոր մեր սիրելիներուն, ինչպէս նաեւ այն միութիւններուն, որոնք յուղարկաւորութեան օրը ծաղկեպսակներով յարգեցին հանգուցեալ Արային յիշատակը:

Մասնաւոր շնորհակալութիւն Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմի առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանին, Մուշեղ Արք. Մարտիրոսեանին, Վաչէ Արք. Յովսէփեանին, Թորգոմ Եպս. Տօնոյեանին, Գերապայծառ Միքայէլ Մուրատեանին, Վերապատուելի Պերճ Ճամպագեանին, Պատուելի Ճօ Կարապետեանին, Արմենակ Վրդ. Պետրոսեանին, Տէր Խաժակ Քհնյ. Շահպագեանին, Տէր Մանուկ Աւագ Քհնյ. Մարգարեանին եւ Տէր Վիգէն Քհնյ. Վասիլեանին իրենց մխիթարական խօսքերուն համար:

Շնորհակալութիւն Ռամկավար Ազատական Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան, ՌԱԿ Արեւմտեան ԱՄՆ-ի Շրջանային Վարչութեան, օժանդակ մարմիններուն ու համայն անդամակցութեան, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, Թէքէեան Մշակութային Միութեան, Հայկական Բարեկարգական Ընդհանուր Միութեան, ինչպէս նաեւ «Նոր Օր», «Մասիս», «Ասպարէզ», «Պայքար», «Armenian Observer», «Mirror Spectator» թերթերուն:

Յատուկ շնորհակալութիւն եկեղեցւոյ մէջ թէ հոգեճաշի ընթացքին իրենց սրտի խօսքերը արտայայտողներուն:

Ահարոնեան, Սարուխանեան, Կանիմեան եւ Տեփանեան ընտանիքներ
Լոս Անճելըս, 25 Յունիս, 2021

Հայաստան Արցախ Ֆոնտը

Շարունակուած էջ 13-էն

պիտոյքներ՝ քաղցկեղէ, սրտի, աչքի, եւ ստամոքս-աղիքային հիւանդութիւններէ տառապողներու համար, առաւել ամբողջ նաւային արկղ մը առողջաբանական (hygiene) պիտոյքներ:

Անցեալ 32 տարիներուն, Հայաստան Արցախ Ֆոնտն ու գայն նախորդած Միացեալ Հայկական Ֆոնտը Հայաստանին ու Արցախին հայթայթած են \$931 միլիոն ընդհանուր արժէքով մարդասիրական օժանդակութիւն՝ 158 թուիչներով եւ 2,502 ծովային արկղերով:

«Հայաստան Արցախ Ֆոնտին կանոնաւորաբար կ'առաջարկուի, բոլորովին անվճար կերպով, միլիոնաւոր տոլար արժէքով կեանք փրկող դեղեր եւ բժշկական պիտոյքներ, յայտնեց Հայաստան Արցախ Ֆոնտի Նախագահ Յարութ Սասունեանը եւ շարունակեց՝ «Մեզի կը մնայ հոգալ առաքման ծախսը միայն: Ուրեմն կը քաջալերենք ձեր

առատաձեռն նուիրատուութիւնները, որպէսզի կարենանք շարունակաբար այս կենսական օժանդակութիւնը ուղարկել Հայաստանի եւ Արցախի բոլոր բժշկական կեդրոններուն»:

Մասունեան յայտնեց նաեւ՝ «Շնորհակալ եմ ԱՐՏԱ Բարեգործական Հիմնադրամին՝ Հայաստան Արցախ Ֆոնտին կողմէ ապահովուած ու հայրենիքի մէջ հրատապօրէն անհրաժեշտ, \$2.2 միլիոն արժէքով բժշկական օժանդակութեան առաքման ծախսը՝ \$11,500, Հայաստան Արցախ Ֆոնտին նուիրելուն համար: Կը յուսամ որ ԱՐՏԱ Բարեգործական Հիմնադրամին կատարած այս նուէրը որպէս օրինակ կը ծառայէ այլ նուիրատուներու, որպէսզի Հայաստան Արցախ Ֆոնտը կարենայ իր կեանք փրկող մարդասիրական առաքելութիւնը շարունակել հայրենիքի տարածքինէ:

Յաւելեալ տեղեկութեան համար դիմել Հայաստան Արցախ Ֆոնտի գրասենեակին, հեռաձայնի թիւ՝ (818) 241-8900, email՝ sassoun@pacbell.net:

Ամավերջի Հանդիսութիւն

Շարունակուած էջ 13-էն

րունակեն իրենց զաւակների քայլերն ուղղել դէպի հայ վարժարան եւ եկեղեցի, որտեղ կերտվում է նրանց ինքնութիւնն ու նկարագիրը: Նա նաեւ շնորհակալութիւն յայտնեց բոլոր նուիրատուներին, վարժարանի կեանքով ապրող բոլոր ազգայիններին, ովքեր ջանք ու

եռանդ չեն խնայում, որ մեր երեխաները ստանան հայկական կրթութիւն: Նա յիշեցրեց, որ հէնց այս մարդկանց շնորհիւ է, որ սեպտեմբերին վարժարանը կրկին բացելու է իր դռները՝ շարունակելով իր կրթական առաքելութիւնը: Շնորհակալութիւն Տիկնանց Յանձնախմբին հիւրասիրութիւնը կազմակերպելու համար:

Logo of National Notary Association with text: NATIONAL NOTARY ASSOCIATION NOTARY PUBLIC MEMBER Garine Depoyan 626-755-4773 554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106 ghdepoyan@gmail.com

ՆՈՒԻՐԱՏԻՈՒԹԻՒՆ

Տէր եւ Տիկ. Արա եւ Սոնիա Պապայեան սրտանց կը շնորհաւորեն «Մասիս»ի նախկին խմբագիր Տօքթ. Արշակ Գազանճեանը, իր վերջերս լոյս ընծայած «Մեր Դիտանկիւնէն՝ ազգային մտորումներ ու կեցուածքներ»- հատորին աւիթով:

Առ այդ իրենց բարեմաղթութիւնները յայտնելով՝ 100 տոլար կը նուիրեն «Մասիս»ին:

Եւրո-2020. 3այտնի են 1/4-րդ եզրափակիչի երկիրները



Եւրո-2020-ի 1/8-րդ եզրափակիչի մրցումներէն ետք յայտնի դարձան 1/4-րդ հանգրուանին հասնող երկիրները:

Պելճիքայի հաւաքականը նուազագոյն արդիւնքով պարտութեան մատնեց Եւրոպայի ներկայ ախոյեան ֆորթուկալի հաւաքականը, որու աստղ՝ Կրիշտիանու Ռոնալդուին չկարողացաւ օգնել իր խումբին ու դուրս մնաց հետագայ պայքարէն:

Քառորդ եզրափակիչին Պելճիքայի հաւաքականը Յուլիսի 2-ին Միւնխի մէջ կը մրցի Իտալիայի հաւաքականին հետ, որ պայքարէն դուրս ձգեց Աւստրիային՝ լրացուցիչ ժամանակի մէջ յաղթելով 2:1 հաշուով:

Հոլանտայի հաւաքականը Հունգարիոյ մայրաքաղաք Պուտայէշտի մէջ մրցեցաւ Չեխիայի հետ եւ պարտութիւն կրեց 0:2 արդիւնքով: Հոլանտան մրցումի մեծ մասը անցուց 10 խաղացողով, այն բանէն ետք երբ 55-րդ վայրկեանին պաշտպան Մատեյս Դէ Լիգտը սեփական տուգանային հրապարակի մօտ ձեռքով բռնեց գնդակը ու ստացաւ կարմիր քարտ:

Քառորդ եզրափակիչին Չեխիայի մրցակիցը պիտի ըլլայ Դանիան (Տանիմարք), որ 4:0 արդիւնքով յաղթեց Ուելսին (Կալէս):

Սպանիոյ ազգային խումբը մինչեւ մրցումի վերջին վայրկեանները 3:1 արդիւնքով առաջ էր խրուակաթայի հաւաքականէն, սակայն այս վերջինները կարողացան երկու արագ կոլեր նշանակելով հաւասարեցնել արդիւնքը: Կէս ժամուայ երկարաձգուած ժամանակին սպանացիները երկու անպատասխան գնդակ ուղարկեցին խրուակաթներու բերդը ու խաղը աւարտեցաւ 5:3 արդիւնքով:

1/4-րդ եզրափակիչին Սպանիա պիտի մրցի Զուիցերիոյ դէմ, որ կարողացաւ դուրս ձգել աշխարհի ախոյեան Ֆրանսայի հաւաքականը:

Ֆրանսա-Զուիցերիա խաղի հիմնական եւ երկարաձգուած ժամանակը աւարտեցաւ 3:3 արդիւնքով, սակայն Զուիցերիա առաւելութեան հասաւ 5:4 11 մեթրանոց հարուածներու շնորհիւ: Ֆրանսայի աստղ՝ Կիլիան Մբայէին հարուածը ետ մղուեցաւ Զուիցերիոյ դարպասապահին կողմէ:

1/8-րդ եզրափակիչի վերջին երկու մրցումները տեղի ունեցան Յունիս 29-ին: Լոնտոնի «Ուեմպլի» մարզադաշտին վրայ Անգլիա պարտութեան մատնեց Գերմանիոյ ազգային խումբին ու մուտք գործեց 1/4-րդ եզրափակիչ, ուր մրցակից պիտի ունենայ Ուքրանիոյ հաւաքականը:

Ուքրանիա-Շուէտ խաղը աւարտեցաւ 2:1 արդիւնքով: Մրցումի հիմնական ժամանակի արձանագրուեցաւ 1:1 արդիւնք: 30 վայրկեան երկարաձգուած ժամանակի վերջին պահուն Ուքրանիա նշանակեց յաղթանակի կոլը:

«Լոս Անճելոս Կալաքսին» Կը Բանակցի «Ռեալի» Յետ Գարեթ Պեյլի Փոխադրման Հարցով

«Լոս Անճելոս Կալաքսին» կը փափաքի ձեռք ձգել Մատրիտի «Ռեալի» եւ Ռեյսի հաւաքականի յարձակող Գարեթ Պեյլին, կը հաղորդէ Goal.com-ը: Ամերիկեան ակումբն այդ հարցով սկսած է բանակցութիւնները «Ռեալի» հետ:



Արքայական ակումբի նորանշանակ իտալացի գլխաւոր մարզիչ Կառլո Անչելոտին յայտարարած էր, որ Պեյլը դեռ կարող է իրեն դրսեւորել Սպանիայի մէջ, սակայն «Ռեալի» նախագահ Ֆլորենտինօ Պերեսը կ'ուզէ ազատուիլ 31-ամեայ ֆուտպոլիստէն, որ խումբի ամենաբարձր վարձատրութեամբ խաղացողներէն է՝ տարեկան 15 միլիոն եւրօ աշխատավարձով:

Բեյլը 2013 թուականին Լոնտոնի «Թոթենհեմին» 101 միլիոն եւրոյի դիմաց տեղափոխուած էր «Ռեալ»։ Անցած մրցաշրջանը ան վարձակալութեամբ անցուց «Թոթենհեմի»-ի հետ՝ Անգլիոյի առաջնութեան 20 խաղի ընթացքին նշանակելով 11 կոլ, կատարելով 2 կոլային փոխանցում:

Եւրոպայի լիգայի խաղերուն Պեյլ մասնակցեցաւ 10 հանդիպումներու, նշանակեց 3 կոլ, կատարեց 1 կոլային փոխանցում:

Բռնցքամարտիկ Յովհաննէս Բաչկովը Ողիմպիական Խաղերու Ուղեգիր Ստացաւ

Հայաստանի ողիմպիական հաւաքականը եւ մէկ մարզիկով պիտի մասնակցի ողիմպիական խաղերուն: Ինչպէս կը յայտնէ ՀԱՕԿ-ը, Թոքիոյի 32-րդ ամառային Ողիմպիական խաղերու ուղեգրի արժանացած է Հայաստանի բռնցքամարտի հաւաքականի անդամ, Եւրոպայի եւ Եւրոպական խաղերու ախոյեան, աշխարհի առաջնութեան պրոնզէ մետալակիր, Ռիոյի Օլիմպիական խաղերու մասնակից Յովհաննէս Բաչկովը:



Հայաստանը մինչ այս պահն ունի 14 ողիմպիական ուղեգրեր, որոնք նուաճած են մարմնամարզիկ Արթուր Դաւթեանը, յունահունական ոճի ըմբիշներ Արթուր Ալեքսանեանը, Կարապետ Չալեանը, Արմէն Մելիքեանը, Կարէն Ասլանեանը, ազատ ոճային ըմբիշներ Արսէն Յարութիւնեանը, Վազգէն Թեւանեանը, բռնցքամարտիկներ Կորիւն Սողոմոնեանը, Արման Դարչինեանը, եռացատկորդ Լեւոն Աղասեանը, հրաձիգ էլմիրա Կարապետեանը, ծանրորդներ Սիմոն Մարտիրոսեանը եւ Իգապելլա Եսլեանը, ճիւտոյիստ Ֆերդինանդ Կարապետեանը:

Թեմիսի-Տեյվիս Բաժակ Հայաստան Բարձրացաւ Գ. Դասակարգ



Հիւսիսային Մակեդոնիայի մայրաքաղաք Սքոփիէի մարզական աւանին մէջ աւարտեցան թեմիսի տղոց Եւրոպայի գօտիի չորրորդ դասակարգի մրցումները 9 հաւաքականներու մասնակցութեամբ: 9 խումբերը բաժնուեցան 2 խմբակի: Հայաստանի հաւաքականը մաս կազմեց Ա. խմբակին եւ արձանագրեց հետեւեալ արդիւնքները.

- Հայաստան - Ալպանիա 2-1
- Սեղրակ խաչատրեան եւ Միքայէլ Աւետիսեան տարին մէկական յաղթանակ: Հենրիկ Նիկողոսեան-Նատիր Սարգսեան զոյգը կրեց մէկ պարտութիւն
- Հայաստան - Ատրպէյճան 2-1
- Սեղրակ խաչատրեան տարաւ մէկ յաղթանակ, Միքայէլ Աւետիսեան կրեց մէկ պարտութիւն: Հենրիկ Նիկողոսեան-Սեղրակ խաչատրեան զոյգը տարաւ մէկ յաղթանակ
- Հայաստան - Մոնթենեկրօ 0-3
- Նատիր Սարգսեան եւ Միքայէլ Աւետիսեան կրեցին մէկական պարտութիւն: Հենրիկ Նիկողոսեան-Միքայէլ Աւետիսեան զոյգը կրեց մէկ պարտութիւն
- Հայաստան գրաւեց Ա. խմբակի երկրորդ դիրքը եւ անցաւ Եւրոպայի գօտիի երրորդ դասակարգ, Մոնթենեկրօյի, Մոլտովայի եւ Հիւսիսային Մակեդոնիայի հաւաքականներուն հետ: Հայաստանի հաւաքականի մարզիչն է Վահէ Աւետիսեան:

Պրագիլի Սեչ Կը Շարունակուի Ամերիկայի Բաժակի Մրցումները

Համավարակի ծանր պայմաններուն տակ ու առանց հանդիսատեսներու ներկայութեան Պրագիլի մէջ կը շարունակուի Ամերիկայի Բաժակի (Copa America) մրցաշարքը:

Հարաւային Ամերիկայի տասը երկիրներու մասնակցութեամբ աւարտեցան խմբակներու խաղերը եւ 8 երկիրներ հասան 1/4-դ եզրափակիչ:

Յուլիս 2-ին պիտի կայանան ֆերու-Փարակուէյ եւ Պրագիլ-Չիլի մրցումները:

Յուլիս 3-ին տեղի պիտի ունենան Ուրուկուայ-Գոլոմպիա եւ Արժանթին-էքուատոր հանդիպումներ:

Կիսաեփրափակիչ մրցումները պիտի կայանան Յուլիս 5-ին, երրորդ տեղի համար մրցումը՝ Յուլիս 9-ին:

Աւարտական խաղը տեղի պիտի ունենայ Կիրակի, Յուլիս 10-ին Ռիօ Տէ Ժանէրօյի նշանակուող՝ «Մարաքանա» մարզադաշտին վրայ: